Էջմիածին

Պաշտօնական ամսագիր
Հայրապետական աթոռոյ
Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Եվրոպայի բեմի Հայրապետական պատվիրակ գերապատիվ տեր Սերովբե Մ. վարդապետին և համայն հայ ժողովրդին 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության և տնվանակոչության տոնը 7

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ 10

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 13

ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ, Երախտագիտական խոսք Վեհափառին 15

ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ, Ապաշխարություն 18

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ, Անապատ կամ Նոր-Վարագ վանքը և նրա վիմագրությունը 21

ՊԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ԱԹԱՆԱՍՅԱՆ, Իմ աշակերտելս Խրիմյան Հայրիկին Վարագա վանքում և Մուշի Ս. Կարապետում 30

ՊԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ, Երևանյան տպավորություններ 37

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ, Երևանեն Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապ 42

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ 45

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Դավիթ Ալավկա ուղու կանոնները 48

Հանգիստ Տ. Հովսեփ եպիսկոպոս Կարապետյանի 58

ԱՐՄԵՆԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ, Լեզվական փաստերի զանձարան 59

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin". Etchmiadzin, Armenia, USSR

Նրատ. 1952 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԹԵՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՊԱՏԻՎ ՏԵՐ ՍԵՐՈՎԲԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՔՈՌՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԵՒՐՈՊԻՈՅ՝ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԷՐ ՍԵՐՈՎԲԷ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՄԻԱԲԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՍԱՂԻՄԱՅ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻ ՄԱՅՐ ԱՔՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԱՅԼ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ, ՀՕՏԻՆ ՄԵՐՈՒՄ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Փարիզի հայոց եկեղեցական խորհրդի խնդրանքո՝ Մենք հեռագրով կարգել էինք գերապատիվ Տ. Սերովբէ Ծ. վարդապետին Եվրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ, որին և սույն հայրապետական կոնդակով հաստատում ենք:

Նախորդ Հայրապետական պատվիրակը՝ հանգուցյալ Արտավազդ արեպիսկոպոս Սյուրմեյանը ժողովրդասեր, հայրենասեր և իր կոչման գիտակից հոգևորական էր, հնաբույր հայ հին ձեռագրերը պրպտելու սիրահար ուսումնասիրող: Նա սիրում էր լույս աշխարհ հանել մեր նախնյաց հոգեկան արժանիքները՝ հայ ժողովրդի անցյալ ազգասիրական և հայրենասիրական շունչը. նորա ազատության և անկախության համար պայքարող հերոսամարտ ոգին՝ հերկա սերնդին ազնիվ և աներկյուղ ոգով մկրտելու և օտարներին, հանդեպ հայ ազգի, հարգանք ու ակնածանք ներշնչելու նպատակով:

Այս նույն անձն էր նաև որ՝ Պետրոսի նման՝ ակնթարթ մի մեղկացավ, բալացավ և խուսափեց հայրապետական շքախմբի մեջ լինելու պատվո հրավերը կատարել, սակայն և՝ Պետրոսի նման ի սրտե զղջալու առաքինությունն ունեցավ և Ս. Էջմիածնում պաշտոն վարելու առաջարկ մուծեց ու Հայրապե-

տի խաղաղության քարոզիչ հանդիսանալու պատվերը համարձակ կատարեց և, Մեզ ի մեծ վիշտ, տուժեց՝ բողնելով սակայն անմոռաց հիշատակ:

Այս անձի փոխարեն է գալիս նորը՝ գերաշնորհ Սերովբե Ծ. վարդապետը, որ նույնպես օժտված է աստվածապարգև շնորհներով: Նա Ս. Երուսաղեմի միաբան է, շրջել է Տիրոջ շրջած վայրերում, եղել է տիրավանդ հուշերով հարուստ սրբավայրերում, ուր Տերը քարոզել է բարոյական վսեմ գաղափարներ, որոնց կենսագործման կենդանի օրինակն է հանդիսացել ինքը: Անա այս վայրերում է մեծացած ու դաստիարակված ձեր առաջնորդը:

Եվ սիրելի ժողովո՛ւրդ, հարգեցե՛ք ու սիրեցե՛ք նրան, լսեցե՛ք և կատարեցե՛ք նրա հորդորները. այդ է պահանջում ձեր բարին ու ձեր օգուտը:

Մեր ու պատասխանատու ժամանակներ ենք ապրում. խոհեմություն, զգուշավորություն և պարտաճանաչություն է պահանջվում յուրաքանչյուր հայ ազգաթից ու հայ համայնքից: Խոհեմություն և զգուշավորություն խոսքի, գործի և վարվեցողության մեջ, լոյալ և պարտաճանաչ վերաբերմունք՝ հանդեպ այն կառավարության, որը հյուրընկալել է ձեզ:

Մի՛ մոռանաք սակայն, որ պարտավորություն ունիք նաև հանդեպ ձեր պատմական սրբություն սրբոց՝ Ս. էջմիածնին, ձեր Հայրենիքին և հայրենի հարազատ պետության: Դուք պարտավորություն ունիք հանդեպ Ս. էջմիածնին, որովհետև նա եղել է ձեր հոգևոր մայրը, լուսավորել է ձեր միտքը քրիստոնեական լուսով, մարզել է ձեր սիրտը քրիստոնեական վսեմ գաղափարներով, տվել է ձեզ հայ գիր, մշակել է հայ լեզուն, հայ գրականությունը հայ գեղարվեստը, որոնցով ազգային ոգի է ներշնչել ձեզ և հիմք դրել ազգային ինքնագիտակցության և ինքնապահպանության: Վերջապես նա պետական իշխանության բացակայության շրջանում եղել է հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պաշտպանն ու պահապանը: Դուք պարտավորություն ունեք հանդեպ Հայրենիքի և հայրենի պետության, որովհետև Հայրենիքն է այն վայրը, ուր Սփյուռքի ցրված հայկական հատվածները կարող են կենտրոնանալ և մի ամբողջություն կազմել: Հայրենիքն է այն վայրը, ուր հայ ժողովուրդը մշակում է իր լեզուն, իր գրականությունը, իր գեղարվեստը, իր ազգային մշակույթը, զարգացնում է իր արդյունաբերությունն ու տնտեսությունը հնարավոր բոլոր հյոտերով, և մի ազգային ընդհանուր հոգեբանություն ու մտածելակերպ է ստեղծում, որ ա՜յնքան անհրաժեշտ է ազգի գոյության համար: Դուք պարտավորություն ունեք հանդեպ հայրենի պետության, որ կազմակերպում և զարգացնում է ազգի ստեղծագործող հոգեկան ուժերն ու ունակությունները: Եվ, վերջապես, նա է, որ ի վիճակի է ազգի ֆիզիկական կարողությունները կազմակերպել և հոգ տանել ազգի ու Հայրենիքի պահպանության ու պաշտպանության:

Սիրելի՛դ մեր Սերովբե հայր սո՛ւրբ. Մենք հանձնում ենք Ձեզ հայ ժողովրդի մի ազնիվ հատված, որը երկար տարիներ տառապել է բյուրքական մարդատյաց քաղաքականությունից՝ եղել է ազատազուրկ, հալածական, տարել է ազգային ինքնասիրության հասցրած անարգանքն ու արհամարհանքը, աչքով տեսել է իր հարազատների ու սիրելիների խռխռոցումը հեռավոր անմարդաբնակ անապատներում և ապա մազապուրծ, գաղթականի ցույցը ձեռքին, հիվանդության, քաղցի և ծարավի ենթակա, անասելի տառապանքների դառնությունը հաշտած և մոռացած քամած՝ այսօր ապավինել է հյուրընկալ պետության և՝ շնորհիվ իր ջանասիրության, տոկուն աշխատանքին ու խոհեմ ընթացքին՝ համեմատաբար հանգիստ կյանք է վարում օտարի հովանու ներքո: Մի՛ ժողովուրդ, որ սակայն ապրում է հայրենի երկրի կարոտը սրտում, հեռու

իր պաշտելի հայրենի սրբություններից, պատմական հուշարձանների տեսության կարոտ, հուշարձաններ, որոնք հուշարար են իր նախնյաց բազմաթիվ ու բազմապիսի գրվագների և պատկերում նախնյաց ստեղծագործական ոգին և ազգային պարծանքի ոգի ներշնչում ու նոր ստեղծագործության ուժ և եռանդ ծնում մարդու մեջ: Նա կարոտում է մխիթարության և փափագում իր սրբությունները տեսնելու, նա փափագում է իր նախնյաց և իր ներկա հարազատների կյանքն իմանալու, և ներկա պետականության հասած իր սիրելիների հիասքանչ վերելքով հիանալու:

Այժմ կարդացինք Հանոն հայրենակցական միության կենտրոնական վարչության «նոր-Հանրն» ամսաթերթը և հոգեպես մխիթարվեցանք, որովհետև հիշյալ ամսաթերթը համարյա ամբողջովին նվիրված է հայ ժողովրդի սիրո և միության գաղափարին, որին նա այնքա՞ն կարոտում է. «Տավրոսի սարերուն վրա և կիրճերուն մեջ, մեր նախահայրերը կերտեր են մեր պողպատե նկարագիրը և մեր հոգիներեն ներս մշակած են սիրո պարտեզը, Հայրենիքի և իր Եղբոր հանդեպ զոհաբեր ըլլալու առաքինություններով»: «Մենք պետք է ջանանք վառ պահել հանրնցիի մեծ ոգին՝ սիրո և միաբանության ոգին... այս է միայն մեր նշանաբանը»: «Ազգ ու Հայրենիք, կրոնք ու եկեղեցի՝ որքա՞ն անուշ ու քաղցրանենչյուն խոսքեր են ու մեզ կներշնչեն զորավոր կամք, տոկուն ու անխախտ հավատք դեպի Հայրենիքն ու հին և ավանդական Ս. Էջմիածինը»: Այո՛, Մենք մխիթարվեցանք, որովհետև այսպես մտածող և այս գաղափարները իր հոգու մեջ ջերմ պահող ժողովուրդը, շնորհիվ իր ազգային ինքնագիտակցության, հայրենասիրության և եկեղեցասիրության, կապրի և անձուլ կմնա, մինչև կվերադառնա Հայրենիք:

Հանդես եկե՛ք, հայր սո՛ւրբ, Ձեր հարտար լեզվով, հայրենասիրական շնչով հյուսած ազգային-կրոնական քարոզներով և ոգեշնչեցե՛ք ու մխիթարեցե՛ք մեր սիրելի հոտը, վառ պահեցե՛ք նորա ազգային ինքնագիտակցությունը և ազգապահպանման զգացմունքը. ուսուցե՛ք հավատարիմ մնալ Հայ եկեղեցուն, պահպանել նորա միասնականությունը և ազգի միությունը, անսասան պահել իր կապը Հայրենիքի և հայրենի ժողովրդի հետ, որպեսզի անձուլ մնա. և երբ ժամանակը գա, Հայրենիք վերադառնա, ազատվի օտարին ծառայելուց և ջանագործվելուց և՝ իր հայրենի երկրում խաղաղ ու հանգիստ կյանք վայելե, իր տոկուն աշխատանքի և՝ ի բնե օժտված ընդունակությունների շնորհիվ՝ զարգացնե իր նյութական և հոգեկան մշակույթը, զարգացնե իր արդյունաբերությունն ու տեխնիկան և տնտեսությունն իր բոլոր հյուղերով և՝ իբրև արժանավոր անդամ մարդկային մեծ ընտանիքի՝ ձգե իր ստեղծագործական լուման ընդհանուր մարդկային գանձարանը՝ կատարելով իր բարոյական պարտքը հանդիպ իրեն և հանդեպ մարդկության:

Իմ սիրելի՛ ժողովուրդ, ժամանակը շատ շար է: Քո բարեկամներդ քո ցեղակիցներդ ու հարազատներդ են: Աչքդ միշտ դեպի Հայրենիք դարձրու, որովհետև միայն այնտեղ կգտնես հշմարիտ բարեկամություն, եղբայրություն և անշահասեր օգնություն, միայն այնտեղ՝ քո Հայրենիքումդ, քո պաշտած Ս. Էջմիածնիդ, քո սիրած ազգիդ և հայրենի պետությանդ կողմից կգտնես հոգեկան մխիթարություն, միայն Հայրենիքիդ պատմական հուշարձանները և հայրենի պետությանդ շնորհիվ ու հարազատներիդ ջանքերով և ընդունակությամբ ստեղծած կուլտուրան ու տնտեսական վերելքը կմխիթարեն քեզ, և միայն այնտեղ՝ Հայրենիքումդ, քո հայրենի հարազատ պետությունդ կնովանավորե և հենարան ու պաշտպան կհանդիսանա քեզ:

Իմ սիրելի ժողովո՛ւրդ, ասուվածային օրհնությունն ենք հայցում, որ պարգևե աշխարհին խաղաղություն, զսպե մարդկային կրքերը, որոնք կուրացնում են մարդկային հոգու տեսությունը և անընդունակ դարձնում մարդուն արդարություն և ճշմարտություն որոնել և տեսնել աշխարհում, որի հետևանքով ալեկոծվում է նորա հոգին և ալեկոծում կյանքի խաղաղությունը:

Ասուվածային օրհնությունն ենք հայցում նաև Փարիզի հայոց եկեղեցական խորհրդի վերա. Մենք հետևել ենք նորա անցյալ ու ներկա կազմերի գործունեությանը և շատ կարևոր ու օգտակար ենք գտել. նա կոչված ու հենված է մեր հոգի գոյության ու կյանքի, մխիթարիչ՝ նորա հոգու և խորհրդատու և աջակից՝ նորա տնտեսականի:

Մենք մաղթում ենք նաև Տիրոջը, որ զորացնե Հայրապետական պատվիրակի ույժն ու շնորհը՝ պատվով կատարելու իր պարտականությունները հանդեպ իր հոտի:

Մենք մաղթում ենք նաև, որ մեր Փրկիչը տարածե իր ամենազոր հովանի բազուկը հայ ժողովրդի վերա, որ նա հանգիստ ու խաղաղ կյանք ունենա և՝ Աստուծո ընտրյալ ժողովրդի նման, արժանանա իր Հայրենիքի տեսության:

Ողջ լերուք, զորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և օրհնեալ ի Տեառնէ և ի մէջ. ամէն:

Գեորգ Զ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25-ե հոկտեմբերի
1952 Փրկչական ամի և ի տումարիս Հայոց ՌՆԹ,
յուրեարդ ամի Հայրապետութեան Մերոյ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սեպտեմբերի 27-ին մեծաշուք հանդիսությամբ տոնվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսի գահակալության 8-րդ տարեդարձի և անվանակոչության կրկնակի տոնը: Ցնծության օր էր Ս. Աթոռի միաբանության և ողջ հավատացյալ հայ ժողովրդի համար:

Վեհափառի գահակալության և անվանակոչության տոնը վերածվել էր համաժողովրդական սիրո և հարգանաց մի հսկայական ու խանդավառ ցույցի: Հայ հավատացյալ ժողովուրդը այդ օրն պատվում է իր մեծանուն ու մեծագործ Հայրապետի բարձր անձնավորությանը և սրտառուչ անկեղծությամբ իր սերն ու նվիրվածությունը արտահայտում դեպի Հայաստանյայց Եկեղեցու դարավոր կենտրոն Ս. Էջմիածինը և նրա Գահակալը:

Նորին Ս. Օծություն Գեորգ Զ.ի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա մեր եկեղեցական պատմության նորագույն շրջանի ամենաբախտաբեր երևույթներից մեկն է: Նա մեր եկեղեցական այն բացառիկ դեմքերից է, որի կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակում տեղի ունեցած պատմական իրադարձությունների հետ. երբ՝ պատահականություն չէր այն անկաշառ հավակրանքն ու բարձր վստահությունը, երբ 1945 թվականին Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական մեծ ժողովը միաձայնությամբ նրան կոչեց Ամենայն Հայոց Հայրապետության պատասխանատու պաշտոնին:

Վեհափառը դժվար ու բարդ պայմաններում ձեռնարկեց հայրապետական իր պաշտոնին: Մեր օրերում նրանից բացի ոչ ոք չպիտի կարողանար այնքան բարձր պահել Ամենայն Հայոց Հայրապետության բարձրագույն հեղինակությունը, Աթոռի հմայքը, Ս. Էջմիածնի պատմական նշանակությունը, ազգային-եկեղեցական միասնությունը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կարգն ու կանոնը, դարավոր ավանդները, ազգային իմքնուրույնությունը: Նրանից բացի ոչ ոք չպիտի կարողանար իրագործել այն ամենը, ինչ հետևողականորեն իրագործել է նա: Բախտավորություն է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու համար Գեորգ Զ.ի գահակալությունն իբրև հայրենասեր, եկեղեցասեր Հայրապետ, որի արժվանքն նայվածքից չի վրիպել ու չի վրիպում երբեք իր հոտին վերաբերող ոչ մի հանգամանք ու գործ:

Արդարև, մեծարյալ Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պնցյալ ու ներկա հայրապետների շարքում ամենակարկառուն և մեծագործ հայրապետներից մեկն է, որն իր անկաշառ հայրենասիրությամբ, ժողովրդանվեր գործունեությամբ, բարոյական ու հոգեկան եզակի բարեմասնություններով նվաճել է ողջ հայության սերն ու հարգանքը:

Հայ ժողովրդի սիրտը, անվերապահորեն, այսօր ավելի քան երբեք կապվել է իր հայրապետական Մայր Աթոռի և նրա Գահակալի հետ: Մայր Աթոռը հայ ժողովրդի սրբություն սրբոցն է, մեր ազգային-եկեղե-

ական միասնության դարավոր շաղկապն ու իսկական դանշանը:

Գեորգ Զ.ը համայն հայ ժողովրդի հայրն ու հովվապետն է: Վեհափառի համար ազգային միասնության հարցում դավանանքի խարությունը որոշիչ ազդակ չէ: Նա նույն անաչառ հոր աչքով է նայում, քաղաքական ու տնտեսական տխուր պայմանների հարկադրանքով հայ ազգի միասնությունից և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բնդհանրությունից բաժանված, բռնի պոկված իր հայ կաթոլիկ և բողոքական զավակների վրա. «Զիա՜ղ համանարք և միոյ մոր որդիք երկպառակք լինիցին և ոչ միաբանք» (Եղիշե): Նրա գահակալության մեծագույն ու անխարդախ ուրախություններից մեկը կլիներ այն, որ իր աչքերով տեսներ հայ կաթոլիկ և հայ բողոքական իր զավակների վերադարձը դեպի Մայր Եկեղեցու գիրկը, իր կենդանության ժամանակ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Գեորգ Զ.ի հայրապետության օրով, և՛ Մայր Հայրենիքում և՛ Սփյուռքում, ապրում է զարթոնքի մի նոր շրջան: Այսօր ավելի քան երբեք, լուսաաւածաւ փողոցում է և՛ հայոց պայծառ երկնքում և՛ Մայր Աթոռում Լուսավորչի անմար կանթեղը: Հավատք՝ Քրիստոսից, լույսը՝ Լուսավորչի Աթոռից. սա այս է եղել մեր նավատացյալ ժողովրդի մշտական իղձը:

Ուրեմն տարին է, որ նա բազմել է Լուսավորչի գահի վրա, սակայն այդ կարճ ժամանակաշրջանը եղել է բեղուն ու շնորհաբեր հայ գործունեության հարուստ մի շրջան: Այսօր ավելի քան մի այլ ժամանակ իր հոգևոր հոչման բարձրության վրա, նա իր բովանդակ ուժն ու ուշադրությունը կենտրոնացրել է իր ժողովրդի հոգևոր սպասի և ծառայության մեծ գործին:

Փառավոր ու պատասխանատու է եղել Վեհափառի անցած գործունեության ուղին: Նրա կյանքի ու գործունեության բոլոր հանգրվանները, աշխատանքի բոլոր բնագավառներում եղել են արդյունավոր՝ հագեցված հայ ժողովրդի և Հայաստանյայց Եկեղեցու դիտակից ծառայության մեջ:

Վեհափառի գահանալության առաջին ու կարևոր ձեռնարկումներից մեկն է հանդիսացել Հոգևոր Ճեմարանի վերաբացումը, որին կանոնադրանքի հաստատ համարում:

Մեծ ու պատասխանատու դեր է վիճակված նաև մեր կրոնական մամուլին, հայ ժողովրդի կրոնական, ազգային դաստիարակության և տեղեկատվական հարցերում: 1944 թվականին, Վեհափառի տեղակալության օրերին, սկսեց հրատարակվել «Էջմիածին» ամսագիրը, որը հանդիսացավ նախկինում հրատարակվող «Արարատ» ամսագրի շարունակությունը: «Էջմիածին» ամսագիրը—Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթն է. Վեհափառի կենդանի խոսքը, ուղղված իր զավակներին: «Էջմիածին» ամսագիրը, ըստ կարելվույն, կատարում է իր առաջ դրվող խնդիրները:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին հուզվող հարցերից մեկն էլ, որը հույնքան համազգային պատմական նշանակություն ունի, միջազգային արդարադատության առաջ մեր պատմական բռնագրավված հողերի կցման հարցն է մեր նվիրական Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին: «Հայ ժողովրդի առաջ այսօր հրամայական հանգամանք են երկու հակատագրական խնդիրներ. հայության ազգանավարն իր նվիրական հողի վրա և վերտիրացումը մեր Հայրենիքի բռնագրավված հողերին», — գրել է Վեհափառը: Ամբողջ առաջադեմ մարդկությունը, մտավորականությունը, մամուլը պաշտպանեցին այդ պահանջների օրինավորությունը: Բայց խիղճը կորցրած միջազգային հետադիմությունը Պիտատոի նեխած ջրով լվաց իր արյունոտ ձեռքերը և հրաժարվեց հայ ժողովրդի արդար ու արժանական պահանջներից: Բայց «Հայ ազգը և նորա ծերունազարդ Պատրիարք-Կաթողիկոսը իրենց հուսն առաջին հերթին կապել են Սովետական Միության արդարամիտ կառավարության հետ, որի հանձնարարությամբ միշտ պաշտպան ու ապավեն է եղել հայ ազգի. հայ Հայրենիքի»,— գրում է Վեհափառը: Վեհափառի արտահայտած այս պատմական նշանակությունը խոր ու սրտառուչ համոզմունքն է բովանդակ հայ ժողովրդի, ի ծագս ապխարհի: ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԵՆ ՄԵԿ ԱՆԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՄ ՈՒ ՊԱՇՏՊԱՆ. ԴԱ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ՆՐԱ ՄԵԾ ՂԵԿԱՎԱՐԸ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱՐԱՐ, ԲԱՐԵԿԱՄ ՈՒ ՓՐԿԻՉ ԳԵՆԵՐԱԼԻՍՍԻՄՈՒՍ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԸ: Վեհափառ Հայրապետը համոզված է, որ խաղաղասեր Սովետական կառավարությունն այդ հարցը կլուծի խաղաղ բանակցությունների ճանապարհով:

Երջանի՜կ և սուրբ Հայրապետ, որին վիճակվեց տեսնել հայ ժողովրդի դարավոր ազգներից նաև մեկի շրջի իրականացումը դա իր տարագիր, «զօրէն մոլորական ասաստաց» ցրված զավակների հայրենադարձն է: Սփյուռքում վերջ է դրվում մեր ժողովրդի իսրայելական թափառումներին: Վեհափառի մեծագույն ու վառ բաղձանքներից մեկն է՝ իր կենդանության հավատված տեսնել ողջ հայությանը Լուսավորչի գահի շուրջ և հայ-

ունի հարազատ պետության իշխանության մականի ներքև:

Գեորգ Զ.ի օրով Հայաստանյայց Եկեղեցու և հայրենի հարազատ պետության փոխհարաբերությունները եղել են ավելի քան սերտ ու բարեկամական: Ամենայն Հայոց Հայրապետության դիրքը՝ Գեորգ Զ.ի օրով, դեպի մեր Սովետական կառավարությունը՝ եղել է միշտ օրինական, ուղիղ, ազնիվ, ինչպես պարտ էր լինել ոստ տերունական պատգամին՝ «Տուք գկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»: Հայրապետի իմաստուն ու շրջահայաց քաղաքականության շնորհիվ, մեր Պետության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միջև հաստատված է փոխադարձ հարգանք, անկեղծ, մնայուն բարեկամություն: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Ամենայն Հայոց Հայրապետության գլխավորությամբ, կանգնած է իր հարազատ ժողովրդի կողքին: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը պատվով են կատարել միշտ իրենց հայրենասիրական պարտքը Հայրենիքի նկատմամբ, և՛ խաղաղ աշխատանքային տարիներին և՛ Հայրենական Մեծ պատերազմի օրերին:

Նորին Ս. Օծություն Գեորգ Զ. հայրենասեր Հայրապետի գահակալությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նորագույն շրջանի պատմության փառքն է կազմում: Անձնվի՜ր Հովվապետ, որ իր ժողովրդի ներկա ու ապագա միավորման, բախտավորության երջանիկ նպատակին է նվիրել իր հայրապետական բարձր ուշադրությունը: Անա թե ինչո՞ւ այժմ այնքան հուսադրիչ են հնչում Վեհափառի խաղաղասիրական պատգամները իր հոտի ականջներում. «Աշխարհը այլևոծված է. մարդկությունը հուզված է, խաղաղությունը պայքարում է պատերազմի դեմ: Պատերազմ նշանակում է միլիոնավոր անծանց մահ, շեն քաղաքների և գյուղերի կործանում»: Սիրելի Վեհափառի կոչով ու իր երկարամյա կենսափորձի շնորհիվ, այսօր, Հայաստանյայց Եկեղեցին և հայ ժողովուրդը, խաղաղության համար պայքարողների առաջին շարքումն են այն խորը համոզումով, որ խաղաղությունը, կհաղթի պատերազմին: Հայ ժողովուրդը իր պատմական անցյալում լիովին ճաշակել է պատերազմի սարսափները: Այսօր նա շատ քանկ է գնահատում իր պատմության վերջին երեսնամյակում գտած խաղաղությունը, որովհետև իր ողջ գոյության ընթացքում մի օր անգամ նա խաղաղություն չի տեսել:

Անգլիայի տխուր դեպքերը անգոր են եղել խախտելու Մայր Աթոռի դարավոր կյանքի պատմական նշանակությունն ու խորհուրդը: Կանգուն է այսօր Ս. Էջմիածինը, կանգուն է նրա Գահակալը. «Աստուածարեալ Քահանայապետ. որ աստուածատիպ գաղարան օծուրեամբ ինքնիշխան գլուխ Եկեղեցւոյ ես կարգեալ»:

Այս հակիրճ տողերի մեջ չի կարելի ասատել մեծազոյն Հայրապետի ծառայությունների տեսակարար կշիռը:

«Էջմիածին» ամսագիրը, բարգմանը լինելով Վեհափառի գահակալության և անվանակոչության առթիվ հայ ժողովրդի երախտագետ զգացմունքներին և բոցավառ սիրույն դեպի Մայր Աթոռ և նրա արժանավոր Գահակալը, երկա՜ր ու երկա՜ր օրեր է մաղթում Նորին Ս. Օծության և, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի, սրտեռանդ աղոթում Լուսավորչի կանթեղի առաջ՝ նրա բանկագին կյանքի երկարության և երկարության ու առողջության համար:

Տերը հավետ անսասան ու պայծառ պահե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին: Ամեն:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ

Առ ի տեղեկություն մեր ընթերցողներուն, ստորև կհրատարակենք թարգմանությունը այն հայտարարության, որ ընդունված է Ֆրանսահայ երիտասարդական միության (ԺԱՖ) ընդլայնված Ազգային կոմիտեեն.

«ԺԱՖ-ը, հավատարիմ հայ ժողովուրդի դարավոր ավանդությանց և բաղձանքներուն, անոր իրազործումներուն, անոր սքանչելի մշակութային գանձարանին, որոնք արդյունք են խաղաղ շրջանի,

Հավատարիմ զորավիգը մեր եկեղեցիին և սերտորեն կապված մեր ժողովուրդի բաղձանքներուն և խաղաղության պայքարներուն,

Գիտակից, որ մեր ժողովուրդի իրավունքները, այսինքն Թյուրքիայեն իր հողային արդար պահանջները իրենց լիակատար և ամբողջական լուծումը պիտի գտնեն միմիայն խաղաղության մեջ,

Նկատի ունենալով մեր Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հսկայական իրագործումները, որ այդ ունք են խաղաղ աշխատանքի մը, և անհրաժեշտ ապահովելու իր ամբողջական զարգացումը մեր ժողովուրդի շահերու տեսակետեն— կնկատե, որ հրամայական կդառնա խաղաղության պաշտպանությունը։

Ընդլայնված Ազգային կոմիտեն, որ գումարվեցավ Փարիզի մեջ 1952 ապրիլի 12—13-ին, կհաստատե ԺԱՖ-ի 5-րդ և 6-րդ համագումարներու որոշումները, ի նպաստ խաղաղության և հատկապես հինգ մեծերու միջև խաղաղության Դաշինքի մը կնքման պայքարին, ընդդեմ սպառազինմանց և հյուլեական ռումբի գործածության, ինչպես նաև մեծ բանդումներ պատճառող զենքերու։

Ընդլայնված Ազգային կոմիտեն կմնա հավատարիմ Ատլանտյան բլոկի մեջ հետադիմական Թյուրքիո դեմ առնված որոշումներուն։

Ընդլայնված Ազգային կոմիտեն կդատափետե հակահայրենասիրական արարքը հայ հետադիմական տարրերուն, որ պայքար կմղեն ընդդեմ Սովետական Հայաստանի, ընդդեմ մեր ժողովուրդի կենսական շահերուն, և կհրավիրե հայ ծագումով բոլոր երիտասարդները միանալու և դատափետելու ոճրային լռությունը, զոր այս նույն հակառակորդները կպահեն հանդեպ այն ամենածանր վտանգներուն, որ կթնածեն մեր ժողովուրդի և Սովետական Հայաստանի վրա։

Ընդլայնված Ազգային կոմիտեն ի լուր մանրեաբանական զենքին գործածության Կորեայի և Չինաստանի մեջ, կորոշե պայքար մղել բոլոր բարի կամեցողություն ունեցող և շերմորեն խաղաղասեր մարդոց հետ վերջնականապես արգիլելու համար բոլոր զենքերեն ավելի այս բարբարոս զենքի գործածությունը, որ վտանգի մեջ կդնե մարդկության գոյությունն իսկ։

Այս իմաստով, ընդլայնված Ազգային կոմիտեն նեցուկ կհանդիսանա խաղաղության Համաշխարհային Խորհուրդի Ստոկհոլմի մեջ ընդգրկած բանաձևերուն։

Ընդլայնված Ազգային կոմիտեն կորոշե իր գործոն մասնակցությունը բերել խաղաղության Համաշխարհային Խորհուրդի նախաձեռնություններուն, որոնք տեղի պիտի ունենան առաջիկա հուլիսի սկիզբը։

Ֆրանսայի ծագումով հայ երիտասարդության պայքարի շրջանակին մեջ, ընդլայնված Ազգային կոմիտեն կորոշե նախա-

ձեռնություն ստանձնել խաղաղության Մշտական Կոմիտեի մը կազմության հնարավոր ամենալայն հիմերու վրա. և որ ներկայացնե մեր ազգաբնակչության ամենալայն խավերը։

Իրականացմանը համար այս խաղաղության Կոմիտեի ճիգերուն, նմանապես կնախատեսվի նմանօրինակ կոմիտեներ կազմել այն շրջաններուն մեջ, որոնք ուղղակիորեն կապված են խաղաղության Կեդրոնական Կոմիտեին։

Հիշյալ խաղաղության Կեդրոնական Կոմիտեն պիտի ունենա հետևյալ էական դրությունները.—

1. Մշտապես հարաբերություն հաստատել խաղաղության Ազգային և Համաշխարհային խորհուրդին հետ.

2. Ֆրանսական դուրս, գանազան հայ գաղութներուն մեջ կազմել նման կոմիտեներ.

3. Պրոպագանդ մղել, հիմնված անհրաժեշտ վավերագրությանց վրա, թե՛ ազգային և թե՛ միջազգային դեռնի վրա։

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ԾԱԳՈՒՄՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱՐԵՐ», 31 Եուլիսի 1952 թ.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄՅՈՒՆԻԿԵ

ՊՐԱԳԱ, 22 օգոստոսի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային խորհրդի քարտուղարությունը հրապարակել է հետևյալ կոմյունիկեն.

Մեր ստացած առաջին տեղեկությունները ցույց են տալիս, որ ի պաշտպանություն խաղաղության ժողովուրդների կոնգրես հրավիրելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային խորհրդի կողմից Բեռլինում հուլիսի 6-ին ընդունված կոչը արագ հասնում է ժողովուրդների գիտակցությանը։

Ժողովուրդները ջերմորեն ողջունում են խաղաղության Համաշխարհային խորհրդի որոշումները, և ներկայումս խաղաղության կողմնակիցները ծավալում են ժողովուրդների կոնգրեսի նախապատրաստման լայն կամպանիա։

Շատ երկրներում տարբեր ձևերով բնակչության մեջ կատարվում է ժողովրդական հարցում, որի օգնությամբ նախապատրաստվում է կոնգրեսը։

Հնդկաստանում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Չինաստանում, Բուլղարիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Բելգիայում, Ալբանիայում, Կորեայում, Ճապոնիայում, Իրանում, Բրազիլիայում, Չիլիում խաղաղության կողմնակիցները որոշել են ժողովրդական հարցում սկսել։

Տարբեր երկրներում ժողովրդական հարցումը տարբեր ձևեր է ընդունում։ Ֆրանսիայում և Իտալիայում առանձին տներում, փողոցներում, թաղամասերում, ձեռնարկություններում և գյուղերում տեղի են ունենում հազարավոր ոչ մեծ դիսկուսիոն ժողովներ։ Դրանցում քննարկվում են բոլոր առաջարկները և ընդունվում են դրանցից լավագույնները, ընտրվում են տեղական կոնֆերենցիաների դելեգատներ, որոնք իրենց հերթին նախապատրաստում են դեպարտամենտային, նահանգական (մարզային) և, վերջապես, ազգային կոնֆերենցիաները։

Որոշ երկրներում կազմակերպվում են բանվորների ժողովներ ի պաշտպանություն խաղաղության (պրոֆմիությունների օգնությամբ), ինչպես նաև գյուղացիների կոնֆերենցիաներ, որոնցում քննարկվելու է նրանց ավանդը խաղաղության պահպանման համար մղվող պայքարի գործում, հաշվի առնելով բնակչության սոցիալական այդ խավերի հատուկ շահերը։

Բելգիայում խաղաղության կողմնակիցների շարժումը նախատեսում է բազմաթիվ դելեգացիաներ ուղարկել տեղական և նահանգական ներկայացուցչական օրգանների անդամների մոտ (ընտրված անձանց), ինչպես նաև պառլամենտի դեպուտատների մոտ, որպեսզի նրանց արտահայտեն բնակչության խաղաղության կամքը։

Տրանսվաալում (Հարավային Աֆրիկա) որոշվել է անցկացնել «խաղաղության շաբաթ» նշելու համար դեկտեմբերի 5-ի նշանակալից տարեթիվը՝ այն օրը, երբ պետք է դումարվի ժողովուրդների կոնգրեսը։

Այդ ամբողջ կամպանիան, որն անցնում է մեծ ակտիվությամբ, ինչպես և խաղաղության կողմնակիցների առանձին ազգային

շարժումները, թույլ կտա ամրապնդվել կազմակերպորեն և ամրապնդել կամ ստեղծել խաղաղության տեղական կոմիտեները։ Միևնույն ժամանակ, մասամբ փոստանիշների վաճառքի միջոցով, մասամբ դրամի հավաքման միջոցով, կուտակվում են դրամական ֆոնդեր, որոնք թույլ կտան ֆինանսավորելու կոնգրեսի նախապատրաստությունը և, մասնավորապես, վճարելու դելեգատների ճանապարհածախսերը։

Մինչև դեկտեմբերի սկիզբը խաղաղության կողմնակիցների ազգային կոնֆերենցիաներ տեղի կունենան Ցապոնիայում, Ֆրանսիայում, Ռումինիայում, Շվեյցարիայում, Բուլգարիայում, Տաիլանդում և բազմաթիվ այլ երկրներում։

Այսպիսով, կոնգրեսի նախապատրաստման հետ կապված գործողությունները թույլ կտան բանավոր կամ գրավոր ձևով խաղաղության Համաշխարհային խորհրդի կոչը հասցնել ամբողջ աշխարհի յուրաքանչյուր տղամարդու և յուրաքանչյուր կնոջ գիտակցությանը։ Դրանք պայմաններ կստեղծեն, որպեսզի խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսը վերածվի մի վիթխարի ցույցի, որը կհանդիսանա խաղաղությունը պաշտպանելու ժողովուրդների կամքի հզոր արտահայտությունը։

ԿԱԹՈԼԻԿ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ

Հունգարական «KARS» (ԽԱՁ) թերթը մեծ անդ է տալիս Բուդապեշտի և գավառի Կաթոլիկ քահանաների խաղաղության կոմիտեի նիստին, որը տեղի ունեցավ Հունգարական մայրաքաղաքում։

70 կաթոլիկ քահանաներ համախմբվելով իրենց նոր բնակարանում ուսումնասիրեցին, ամբողջ երկու օր, վերջին միջազգային անցուդարձը և Հունգարիո ներքին քաղաքականությունը։ Այդ կարևոր նիստին նախագահում էր դր. Միքլոս Բեռեշթոյին։

Ի վերջո հանգեցին հետևյալ գլխավոր եզրակացություններին.

1. Քահանաները չեն կարող տեղ գրավել այն ոճրագործների մեջ, որոնք շահագործել են ուզում պատերազմը.

2. Որևէ քահանա չի կարող անտարբեր մնալ, նա պետք է դիրք բռնե խաղաղության խնդրի վերաբերմամբ իր խոսքերով, իր ուսուցումով, իր օրինակով.

3. Պատերազմը մի չարիք է, որ բխում է մարդկանցից. կաբելի է փոխել մարդկանց. քահանաների պարտականությունն է օգնել բոլոր բարյացակամ մարդկանց միությանը։

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ», 2 սեպտեմբերի 1952 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 14-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում ավանդական շքեղությամբ կատարվեց Խաչվերացի տոնը։ Տոնի առթիվ Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Տաճարի գավիթն էին լցվել Հայաստանի զանազան քաղաքներից ու գյուղերից եկած բազմաթիվ ուխտավորներ։ Այդ օրը ուխտի մեծ օր էր հավատացյալների համար։ Ուխտավորներն իրենց հետ բերել էին մատաղացու ոչխարներ և աղավնիներ ու սկսած շաբաթ օրվանից, խմբերի բաժանված, զվարճանում էին եկեղեցու գավթում, Տաճարի շրջակայքում, այգիների մեջ, ծառերի ներքև։ Ժողովրդական երգն ու պարը թնդացնում էին օդը։

Կիրակի օր պատարագիչն էր գեղեցիկ Տ. Սահակ եպիսկոպոսը, որն ավուր պատշաճի քարոզ խոսեց, վեր հանելով Խաչվերացի տոնի պատմական ու կրոնական նշանակությունը։

Երեկոյան ժամերգության ժամանակ կատարվեց Խաչվերացի պատմական մեծաշուք հանդիսությունը՝ մեծ «Անդաստանը» Տաճարի բակում։ Կազմվեց եկեղեցական մեծ թափոր, խաչով ու խաչվառով, որը դուրս գալով եկեղեցուց մեր հիանալի շարականների ու մեղեդիների երգակցությամբ, շրջեցավ եկեղեցու չորս կողմը։

Թափորը կանգ առավ եկեղեցու արևմտյան դռան զանգակատան մոտ։ Հանդիսավոր սրբազանը օրհնեց ուխտավոր ժողովրդին ու արձակեց։

***

Սեպտեմբերի 27-ին մեծավայելուչ հանդիսությամբ Մայր Աթոռում տոնվեց Ամենայն Հայոց Հայրապետի և մեր սիրելի Հոր՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի գահակալության և անվանակոչության տոնը։ Ցնծության օր էր ամբողջ միաբանության, Հոգևոր Ճեմարանի ուսանողության և հավատացյալ ժողովրդի համար։

Շաբաթ օր Վեհափառ Հայրապետը, միաբանության ու սարկավագների առաջնորդությամբ, հանդիսավոր մուտք գործեց Մայր Տաճարը։ Պաշտվում էր սուրբ պատարագ։ Հավատացյալների բազմությունը լցրել է Մայր Տաճարը, գավիթը, շրջափակը։ Երգչախումբը երգում է այսօր հրաշալի կատարողությամբ։ Հանդիսավոր է ամեն ինչ։

Սուրբ պատարագից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք։

Մաղթանքից հետո բազմությունն ամենայն երկյուղածությամբ մոտենում է Վեհին, շնորհավորում է նրա անվանակոչությունը աջահամբույրով և հեռանում՝ մաղթելով նրան երկար կյանք և արևշատություն։

Նույն հանդիսությամբ միաբանությունը Վեհափառ Հայրապետին առաջնորդում է դեպի Վեհարան, որտեղ տրվում է ճոխ ճաշասեղան։ Բացի միաբանությունից, պատվո ճաշին ներկա էին նաև շատ հյուրեր մայրաքաղաքից։

Առաջին հերթին Վեհափառ Հայրապետը բարձրացնելով բաժակը դիմում է սեղանա-

կիցներին. «Ամենայն Հայոց Հայրապետի վերա դրած պարտականությունները շատ ծանր են. հայ ժողովուրդը մեծ հույսեր է կապում Հայոց Հայրապետի հետ և միշտ էլ սպասում այդ հույսերի իրականացումը տեսնելու համար։ Այդ հույսերն ու ծանր պարտականություններն այսօր ընկած են Մեր վերա. կաշխատենք անել Մեր կարելին»։

Այնուհետև բաժակաճառերով հանդես եկան Հոգևոր Ճեմարանի ռեկտոր տիար Մ. Մինասյանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը. սարկավագության անունից հանդես եկավ Փայլակ սարկավագ Այնթաբյանը։

Կիրակի օրը ուխտավորների բազմությունն այնքան մեծացավ, որ Մայր Տաճարի գավիթը չէր բավարարում իր ընդարձակ շրջակայքով։ Հայկական երգն ու պարը, դհոլ-զուռնայի նվագը, ուխտավորների կանչը ականջ էին խլացնում։ Մինչև ուշ երեկո ուխտավորները զվարճանում էին։

Այդ օրը՝ սեպտեմբերի 27-ը, անմոռանալի կմնա միաբանության և ուսանողության հիշողության մեջ։



ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ ՎԵՀԱՓԱՌՈՒՆ

(Ասված Վեհափառ Հայրապետի գահակալության և տեվանակոչության տոնի առթիվ)

Երուանդարդ Հայրապետիդ թանկագին կյանքը բազմաթիվ արժանիքների գոհարներով հյուսված մի շողարձակ մանյակ է, որն իր երփներանգ գեղեցկությամբ ունի բացառիկ շքեղություն և արժեք։

Մենք բարեխղճորեն հետևել ենք մեր ժողովրդի և մեր եկեղեցու իրար հետ սերտորեն միահյուսված պատմությանը և կրկնակի հարգանքով, հաճախ նույնիսկ հպարտությամբ, կարդացել նրանց լավագույն էջերն արժեքավորող մեր այն հոդվորականների անունները, որոնք ժողովրդի, Հայրենիքի և եկեղեցու սրբազան դատին ի խնդիր նվիրաբերել են իրենց բոլոր հնարավորությունները, մինչև անգամ՝ կյանքը։ Այսօր հպարտանում ենք, որ նրանց փառապսակ անունների շարքում, մեր ժողովուրդը դասում է Ձերդ Վեհափառության մեծ անունը։

Շատ են Ձեր էությունը կերպավորող արժանիքների տարբերակները։ Ձերդ Վեհափառության ուսերին հանդչող տարիների ելևէջին նայելու փորձն անգամ հոգեմայլ պատկառանքով է համակում ուսումնասիրողին։ Սակայն Ձեր հոյակապ նկարագրի հիմնական գիծը — Ձերդ Վեհափառության անհնահանջ հայրենասիրությունն է.... Հայաստանյայց աշխարհի առաքելական գեղեցկությունը, նրա քաղցր բուրմունքները, նրա հողի, ջրի, նրա վեհանիստ լեռների կախարդիչ շուրջպարերը՝ Ձեր հոգուն տվել և տալիս են կենսական սնունդ։ Ձեզ մոտ հայրենասիրությունը լոկ զգացմունք չէ, այլ միտք և իմաստություն...։ Ձեր հարազատ երկիրը դուք սիրում եք, քաջ գնահատելով նրա անցյալի վսեմ մարտիրոսությունները, ընդվզումներն ու պայքարը և նրա ներկա վիթխարի նվաճումները՝ գիտության, արվեստի և մշակույթի զանազան ասպարեզներում։ Խորապես պատճառաբանված է Ձերդ Վեհափառության ցուցաբերած անսահման սերն ու հոգատարությունը ժամ առ ժամ բարգավաճող Սովետական Հայաստանի նկատմամբ, որտեղ Ձեր սիրելի ժողովուրդը իր իսկական սկեղարն է ապրում։

Ձեր կյանքի երկրորդ կարևորագույն դարկերակը—ժողովրդասիրությունն է։ Դուք Ձեր ժողովրդին սիրում եք, որովհետև ճանաչում եք նրան։ Դուք արցունքով և հպարտությամբ եր հետևել նրա անցյալի տառապանքներին և հերոսական պայքարին և միաժամանակ հիացել են Ձեզ նրա հաղթանակներն ու ոսկետառ նվաճումները։ Հայ բազմաչարչար ժողովրդի նկատմամբ ցուցաբերած Ձեր բյուրեղացած սիրո էական հատկանիշը—շերմությունն ու հետևողականությունն է։ Ձեր կյանքի մատղաշ տարիներից մինչև այսօրվա այեզարդ հասակը Ձեզ նվիրաբերել եք ժողովրդին։

Ձեզ համար խորը վիշտ է, որ դեռևս անդորր և գոհացած հոգեվիճակ չեք ապրում այն բանի պատճառով, որ հայ ժողովրդի մի մեծ հատվածը թափառաշրջիկ կյանք ունի Սփյուռքի ցույտ ավազուտներում և անհյուրընկալ մայթերի վրա։ Սակայն Ձերդ Ս. Օծությունը հավատացած է, որ Սփյուռքի հայ հատվածի տառապանքներն ևս շուտով վերջ կգտնեն։

Դուք հոգեպես հրճվում եք, երբ սեփական աչքերով տեսնում եք մայր հողի վրա հայ ժողովրդի շքեղ վերածնունդը, բացարձակորեն ապահով կյանքն ու երջանկությունը։ Ձեզ համար ավելի քան մխիթարական է մանավանդ այն, որ մեր ժողովրդի ապագան խորհրդանշող արշալույսը մշտավառ շողարձակում է։

Խորապես հոգատար և նախանձախնդիր եք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու

բարգավաճման և հարատևության գործին բացի նյութական միջոցառումներից, շատ մեծ ձեռնհասությամբ և իմաստուն գործակերպով, Դուք նրան ապահովում եք արժանավոր հոգևորականներով, որոնք պատրաստ են հետևելու Ձեր օրինակին։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին բազմիցս դնահատվել է Ձեր կողմից, որպես ազգային-դեմոկրատիկ եկեղեցի։ Դուք քանիցս շեշտել եք նրա վճռական դերը մեր անցյալի պատմության մեջ ազգապահպանման և հայ ժողովրդի մշակութային կյանքը դաստիարակելու տեսակետից։ Թվել եք նրա բազմապիսի ծառայությունները և երախտագիտական զգացմունք ներշնչել մեզ դեպի նրա հնավանդ սրբություններ։ Նա եղել և մնում է Ձերդ Վեհափառության սրբությունսրբոցը, որի շինության, անսասանության և բարձր հեղինակության համար մատուցել եք Ձեր անձնվիրությունն ու մեծ միտքը։ Դուք արդար վրդովմունքով եք խոսում նրա դեմ ոտնձգություններ կատարող բոլոր դույնի Ազգաշանյանների մասին։

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նկատմամբ Ձեր հայրական հոգատարությունն ես մի փայլուն գրավական է Ձերդ Վեհափառության եկեղեցասիրության և հայ մշակույթի նկատմամբ ցուցաբերած ջերմ սիրո և հարգանքի։ Դուք մեծ իմաստությամբ նախատեսել էիք Հոգևոր Ճեմարանի անհրաժեշտությունը և ձեռնարկել նրա վերաբացման գործին։ Դուք սրբազան խնդիր եք դրել նրա առաջ՝ «Տալ Հայոց հնագույն եկեղեցուն և չքնաղ մշակույթին արժանավոր սպասավորներ»։ Դուք թելադրել եք Ճեմարանի հոգատար վարչությանը, որ նա լինի հայ հոգևոր կյանքի և տոհմիկ դիտության ամենաջերմ օջախներից մեկը։

Ձեր սերը ուսանողության հանդեպ անսահման է։

Այսոր ուրախալին հատկապես այն է, որ շնորհիվ Ձերդ Ս. Օծության ամենօրյա հետաքրքրության և հոգատարության, Հոգևոր Ճեմարանն արդեն կյանքի է կոչել իր նպատակները։ Նա պտղաբերել է, տալով իր անդրանիկ և երեսուներորդ շրջանավարտները։ Ի մխիթարություն Ձեզ պետք է ասել, որ Հոգևոր Ճեմարանի լավագույն ուսանողները իրենք հոգուն հարազատ զգալով Հայրենիքի, ժողովրդի և Եկեղեցու գործին նվիրաբերվելու պարտավորություններ և անսասով Ձեր սգեորիչ հոգատարներին, ընդգրկվել են հոգևոր ասպետներում։ Գրենթ Հիսուսի աշակերտների թվի բոլորող այդ երախտագետ սարկավագների սրտաբուխ զգացմունքների թարգմանը լինելով Ձերդ Վեհափառության առաջ, ինձ պակասում են բառերս, որակել կարենալու համար Ձեր անսահման սիրն ու գուրգուրանքը մեզ, յուրաքանչյուրիս հանդեպ։ Չեմ կարող փոխանցել Ձեզ այն շերմությունն ու հարազատությունը, որոնցով Դուք համակում եք մեզ, «Ի՞մ սիրասուն սարկավագնե՛ր» խոսքերն ասելիս...։ Հոգևոր Ճեմարանի անմիջական նվերները հանդիսացող սարկավագները, տոգորված երախտագիտությամբ, աննահանջ վճռականություն ունեն կատարելու Ձեր բոլոր պատգամներն ու ներշնչումները։

Հայ դպրության և հայ մշակույթի հանդեպ ունեցած Ձեր անխորտակ սիրո և հավատքի արտահայտիչն է «Էջմիածին» պաշտոնաթերթը։ Հանդիսանալով «Ամբարտաս» ամսագրի տրամաբանական շարունակությունը և նրա լավագույն տրադիցիաների որդեգրողը, «Էջմիածինը» կատարում է պատմա-բանասիրական, հնագիտական, գրական, գիտական, գեղարվեստական, կրոնա-բարոյական, ազգային, հայրենասիրական չափազանց մեծ և շնորհալի աշխատանք, որը միայն փառ ու պատիվ կբերի Ձեր մեծ անվանը։

«Եկեղեցին Հայրենիքի հետ... Եկեղեցին ժողովրդի համար. ահա՝ Ձեր իմաստուն ղեկավարության խարիսխը։ Դուք անձամբ այս սկզբունքի ոչ միայն պատգամողն եք, այլև կենսագործողը։ Ձեր կյանքը հարատև է վերոհիշյալը հաստատելու բազմաթիվ կենդանի ապացույցներով, սկսած սարկավագության տարիներից մինչև հատկապես Հայրենական պատերազմի տարիներն ու մինչև հիմա։

Հայ եկեղեցու հնարավորությունների ի սպաս դրվելը Հայրենիքին և հայ ժողովրդին, նրան տվել է ազգային-դեմոկրատիկ բնույթ։ Ձերդ Վեհափառությունը, հետևելով մեր երջանկահիշատակ հոգևորականների օրինակին, որոնք մեր Եկեղեցուն տվել են այդ երանգը, տարել ու տանում է ամենաճշմարիտ ղեկավարությունը թե՛ որպես Հայոց Հայրապետ և թե՛ որպես հայ ազնվագույն մարդ։

«Հայ ժողովուրդն ունի միայն մի Հայրենիք՝ Սովետական Հայաստանը. ահա՝ Ձերդ Ս. Օծության ազգային գործունեության անկյունաքարը։ Հայոց Հայրապետությունը միշտ էլ միասնական է եղել Հայրենիի պետության հետ, և այն առանձին շեղումները, որոնք տարվել են որոշ կաթողիկոսների կողմից, դատապարտված են պատմության արդարադատ քննադատությամբ։ Հայրենի պետության հետ համերաշխ ու միասնական աշխատանքը Հայրենիքի և ժողովրդի բարօրության, ապահով ու երջանիկ կյանքի համար, Ձեզ միայն փառք և պատիվ կարող է բերել։

Երկրի վրա տնական խաղաղության ապահովման համար Ձերդ Վեհափառության

աննահանջ պայքարը՝ Ձեզ վերապահում է մեծ հումանիստի նվիրական տիտղոսը։

Երկիրը տագնապի մեջ է։ Պատերազմի հրձիգները կորցրել են իրենց հավասարակշռությունը և նախապատրաստում են մարդկային սպանդներից ամենասարսափելին։

Հայ ժողովրդի համար, որը բոլոր ժողովուրդներից շատ ավելի ծարավ է խաղաղության արևի կենսափյուռ շողերին, ազգային մեծ հպարտություն է, որ իր Ծկեղեցու ժերոմազարդ Հայրապետը տնական խաղաղության համար մղվող պայքարում բերում է իր անմիջական գործուն մասնակցությունը։

Հավատարիմ լինելով Քրիստոսի աստվածային վարդապետությանը, հավատարիմ լինելով Հայաստանյայց Առաքելական Ծկեղեցու նմիրական սկզբունքներին ու տրադիցիաներին և Ձեզ պատասխանատու համարելով մարդկության և մանավանդ հայ ժողովրդի արդար պահանջների առաջ, Ձեր խղճի սրբազան թելադրանքով նվիրվել եք խաղաղության մեծ գործի անխուսափելի հաղթանակին։

Ձերդ Վեհափառության գործունեության այս լայն ասպարեզի վերլուծությունն ու դնահատակաը պատմությանն է վերապահվում. ինձ մնում է միայն ցանկանալ Ձեզ ուժ և կարողություն, որպեսզի ևս առավել երկարաձգվի և արդյունաբերվի Ձեր գործունեության թանկագին ժամանակը հօգուտ Հայրենիքի, ժողովրդի և Ծկեղեցու։

Հայ Ծկեղեցու պատմության մեջ Ձեր անունը կարձանագրվի ո՛չ միայն որպես Լուսավորչի, Ներսես, Սահակ-Մեսրոպի, Շնորհալու, Ներսես Ա-ի, Գեորգ Դ-ի և Խրիմյան Հայրիկի արժանավորագույն հաջորդի, այլև որպես հայ բոլոր լավագույն արժանիքների ամենաներդաշնակ համադրողի և կենսագործողի...։

Վեհափառ Տե՛ր.

Ձեր սիրասուն սարկավագները այս բոլորը դիտում են հպարտությամբ և հիացմունքով։ Մեզ համար անպատում երջանկություն է, որ Դո՛ւք եք մեր սիրելի Հայրը։ Մենք կրկնակի հպարտ ենք զգում մեր Ձերդ Ս. Օծությունը մեզ այսպես մոտիկ ունենալու համար։ Դուք, լինելով մեր արժանավորագույն հոգևորականներից մեկը, սովորեցնում եք մեզ մեր խղճի ազնվությամբ պրպտել մեր երբեմնի արյունոտ. բայց հերոսական պատմության ամեն մի անկյունը, ամեն մի էջը։ Ուսուցանում եք մեզ, միշտ տիպար օրինակ լինելով, յուրացնել մեր սրբազան նախնիքների լավագույն ավանդները և զինված նրանց մեզ հասցրած խնկարույր ավանդներով, հոժարակամ պատրաստվել նվիրվելու մեր սուրբ ուխտին։ Հուզումնալից և դողդոջուն ձեռներով մատնացույց եք անում մեզ մեր հարազատ ժողովրդի արյամբ և արտասուքով խոնավացած և ապա մամռոտած Միածնաէջ Տաճարի սրբատաշ քարերը և պատգամ տալիս մեզ՝ աչքի լույսի պես պահել նոանը։ Ակնահման հմտությամբ և հպարտորեն առաջնորդում եք մեզ դեպի հայ հարուստ մշակույթի մեծարժեք գանձարաններն ու նվաճումները։ Պարտք եք դնում մեզ վրա, մեր խղճի վրա՝ սիրե՞լ, սիրե՞լ հայրենե սրբազան հողը՝ Սովետական Հայաստանը, հարազատ ժողովրդին, Հայաստանյայց Առաքելական սրբանվեր Ծկեղեցին, և անհրաժեշտ դեպքում լինել անձնազոհ...։

Դուք հավատով եք խոսում մեր Սիլյուռի մեռած ցուրտ, մերթ կիզիչ ափերում անտուն թափառող մեր հայրենակարոտ պանդուխտների մասին, և պարտավորեցնում մեզ՝ ամբողջ հոգով սիրել նրանց, մեր բոլոր հնարավորն անել, որպեսզի իրականանան նրանց դարավոր երազները։

Շատ են Ձեռանից մեզ եկած բարիքները, որոնք հարստացնում են մեր միտքը, սիրտն ու հոգին, և առանձնապես յափով ոտեանդում մեզ՝ լիապես եռատարելու համար Ձեր սրբազան ատաղձները։

Վեհափառ Տե՛ր, հավաստիացնում ենք Ձեզ, որ մենք եռեստոռեն Ձեզ պահանջները, նարդատարենք Ձեզ հույսերը։

Մեզ համար անսահման ուրախություն է տեսնել Ձեզ այսպես առույգ, փուլեռանդ, կենսախինդ։ Կարծես բնությունը Ձեզ մոտ մեծ հոգատարություն ունի. Դուք հետզհետե երիտասարդանում եք։

Աղոթում ենք, որ ամենաբարի Տերը լիակատար հաջողությամբ պսակի Ձեր ձեռնարկած բոլոր գործերը։

Աղոթում ենք, որ մարդասեր Աստված Ձեզ առժանի անի հառասատ այքերով տեսնելու Ձեր ցանած սերմերի փարթամ արն ու բազմաբուսն հունձը, Ձեր մեծ և սրբազան նպատակների կատարումը և Ձեր լավագույն իղձերի իրականացումը...։

Աղոթում ենք Ձեր թանկագին կյանքի հարատևության և արևշատության համար։

Երկա՞ր, շա՞տ երկար ապրեք, Վեհափառ Տե՛ր, մեր սիրելի Հայրի՛կ...։



ՔԱՐՈԶ

ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»։

ՄԱՏԹ., Գ 2։

Ի՞նչ առաքելության սկզբնավորությանը, այս հրաշունչ խոսքերով է սկսում Հովհաննես Մկրտիչը Հրեաստանի անապատում իր կրակոտ քարոզը, իրենց կրքերի ու աղտերի ծովի մեջ ապականված բազմությանը։ Աստծու մարգարեն կամենում էր դրանով ցույց տալ, որ Աստծու Որդին շուտով պիտի գար աշխարհ և դատաստան տեսներ չապաշխարողների ու իրենց մոլությունների ետ չդարձողների հետ. «Սրբեսցէ զկալ իւր և ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր և զյարդն այրեսցէ անշէջ հրովն (Մատթ., Գ 12)։ Հովհաննես Մկրտիչը քարոզում էր, որ մոտեցող երկնից արքայությունը ընդունելու և նրան արժանանալու համար շատ մեծ նշանակություն ունի ապաշխարությունը, առանց որի հնարավոր չէ ազատվել հանցանքների ու մեղքերի ծանրությունից։

Մարգարեի բոցավառ խոսքերը արձագանք են գտնում մարդկանց կարծրացած սրտերում։ Բազմաթիվ մարդիկ մկրտվում են Հորդանան գետում, ապաշխարում ու սրբվում իրենց մեքերից։

Ապաշխարությունը այն փրկական դուռն է, որով հավատացյալները կարող են մտնել երկնային կյանքը՝ սրբված ու մաքրված իրենց մեղքերից։ Եվ զուր չէ, որ մեր Եկեղեցին ապաշխարությունը դասել է յոթը հիմնական խորհուրդների շարքում։ Ապաշխարության և պահքի օրերին լսում ենք մեղքի ալիքների մեջ խեղդված ապաշխարող հավատացյալի ողբաձայն աղաղակը՝ «Ալիք յանցանաց զիս ալեկոծեն և մեղք իմ բազում զիս յանդիմանեն։ Նա լաց է լինում, անդադար աղերսում գթասեր Տիրոջից՝ թողություն, իր մեղքերից սրբվելու համար. «Աղաչեմ զքեզ Տէր, պարգեւեա ինձ ապաշխարութեամբ լուսաւոր զմեղս իմ»։

Ինչպես ամեն գարնան բնությունը զարթնում է իր խոր քնից և վերակենդանանում, այնպես էլ զարթնում է և հավատացյալը մեղաց քնից՝ ապաշխարությամբ։ Նրա սրբատում ծագում է ապաշխարության արեգակը, և նա լալահառաչ աղաղակում է առ Աստված. «Զուր շնորհեա աչացս, զերամ հեղուլ զարտասուս, զնշել զյանցանս»։

Ապաշխարությունը հոգեկան բազմապիսի երևույթների բարդ պրոցեսն է։ Երբ մարդը միանգամից սթափվելով իր մեղքերի խորը քնից, զգում է իրեն մութ խավարի մեջ, կործանման անդունդի եզրին, դրկված երկնային լույսից ու Հիտաս Փրկչի հովանավորությունից. նա խորապես զղջում ու դառնապես լաց է լինում իր հոգու խորքում ապերանելով Փրկչից թողություն։ Որքան էլ ծանր լինի նրա մեղքը, ապաշխարողը սակայն չի ընկղմվում հուսահատության մեջ։ Նա ձանձ է իր Փրկչի անչափ ներողամտության ու գթասատության վրա, որ Տերը մեղավորների մահը չի ցանկանում, այլ նրանց ապաշխարությունը։ Նա դիտի, որ ամենազոր Աստվածը իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ ո՛չ թե արդարներին, այլ մեղավորներին ապաշխարության կանչելու համար. «Ոչ եկի կոչել զարդարսն, այլ զմեղաւորս յապաշխարութիւն». ո՛չ թե կորցնելու. այլ փրկելու ամբողջ աշխարհը մեղքի ճիրաններից։ Տիրոջ այս խոսքերը սվելի են բոնկում փրկության և հույսի կրակը սպաշխարող հավատացյալի սրբ-

տում և թնավորում նրան։ Ոչ ոք զերծ է մեղքի որոգայթներից, մեղանչելը մարդկային է, ազամական բնության մեջ իսկ է մեղքի արմատը. «Եթէ ասիցեմք եթէ մեղս չունիմք, զանձինս խաբեմք և ճշմարտութիւն ի մեզ ո՛չ գոյ» (Հովհ., Թուղթ Ա, Ա 8)։ Հավատացյալի ապաշխարության դառն արտասուքները փոխարկվում են ուրախության փայլատակող արտասուքների, երբ նա սրտանց զղջում է իր մեղքերի վրա։ Նրա մեղքերի բեռը սկսում է թեթևանալ։ Մարդասեր Փրկիչը պատվիրում է մեզ՝ ներել մեր դեմ յոթանասուն անգամ յոթը մեղք գործող բայց զղջացող մարդուն. ապա նա առավել ևս պետք է լինի ներողամիտ իր առջև ծունկի եկած ապաշխարողների նկատմամբ։ Այս վառ հույսը ունենալով իր սրտում, ապաշխարողը խոստովանում է իր հանցանքները, բաց է անում քահանայի առջև իր սրտի դռները, լալով ու պաղատելով խնդրում նրա միջոցով Թողություն իր Փրկչից։ Գթասիրտ Փրկիչը կարեկցությամբ նայելով ապաշխարության հոգի արտասուքներով իր ոտքերը թրջող մեղավորի վրա, ասում է. «Թողեալ լիցին քեզ մեղք քո»։

Երբ մենք՝ Հիսուսի արյամբ փրկվածներս, կամա թե ակամա ընկնում ենք մեղքի մեջ, բայց սրտանց զղջում ու ներում հայցում, ապա նա արդարությամբ ներում է մեզ և նորից սրբում մեր հոգու կեղտերից. «Եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա (Փրկիչը) և արդար առ ի թողուլ զմեղս մեր, և սրբել զմեղ յամենայն անիրաւութենէ» (Հովհ., Թուղթ Ա, Ա 9)։

Կարո՞ղ եք պատկերացնել, թե որպիսի՜ ահավոր հոգեվիճակի մեջ է ապրում մեղավորը, ընկած իր կրքերի ու մոլությունների խուլ հորձանքի մեջ։ Մեղքերի հատակին նա զգում է իրեն կործանման անդունդի եզրին, անօգնական, հյուծված ու տկարացած։ Մարել է նրա մեջ աստվածային կրակը, որ մի ժամանակ կենդանություն էր պարգևում նրա հոգուն ու մարմնին, քարանում է սիրտը, բազմապատկվում են կրքերն ու մոլի ցանկությունները։ Դավիթ մարգարեն էլ ընկավ այսպիսի ծանր մեղքի որոգայթի մեջ. նա իր այդ որբերդական դրության մեջ, զղջալով, լալով ու արտասվելով, օգնություն էր պաղատում ամենաողորմ Տիրոջից. «Ողորմե՛ա ինձ, Տէ՛ր, զի նեղեալ եմ ես. խոովեցան ի սրտմտութենէ ակն իմ՝ անձն իմ և փոր իմ։ Պակասեցան ի ցաւոց կեանք իմ... աղքատացաւ ի տկարութենէ զօրութիւն իմ, և ոսկերք իմ խոովեցան... Եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ... որպէս զանօթ կորուսեալս (Սաղմ. Լ (ԼԱ)։

Եվ ընդհակառակը, կարո՞ղ եք պատկերացնել, թե որպիսի՜ ուրախալի ու մխիթարական հոգեվիճակ է ապրում մեղավորը, երբ ներում է ստանում Փրկչից, սրբվում ու նախկին, արդարության ուրբ զգեստը հագնում։ Օ՜հ, անզոր ենք արտահայտելու այդ ամենաերջանիկ զգացմունքները։ Դրանք կարող են ապրել խորապես միայն իսկական ապաշխարող մեծ մեղավորները։ Ապաշխարության այդ քաղցր պտուղները ճաշակեց իր հաստատուն և աներկբա հավատքի շնորհիվ մեղքերի կեղտի միջից վերածնված Դավիթ մարգարեն և ոգևորված բացագանչեց. «Երանի՛ ում թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա» (Սաղմ. ԼԱ (ԼԲ)։ Վերածնված ու մեղքերից սրբված հավատացյալը այժմ ավելի բուռն սիրով սիրում է Փրկչին, որը ներողամիտ գտնվեց նրա նկատմամբ, փրկեց հավիտենական կորստից, պարգևելով նորից երկնային առաքաստին հասնելու հույսեր։

Դառն են ապաշխարության արտասուքները, բայց անհամեմատ քաղցր՝ նրանց պտուղները։ Ապաշխարության արտասուքներով իրենց մեղքերը քավող մարդիկ պիտի ողորմություն գտնեն իրենց երկնավոր Տիրոջից և մտնեն նրա հավիտենական երանության մեջ, ուր այլևս մահը իշխանություն չունի, չկան արտասուք, վիշտ, ցավ, խավար, այլ՝ հավիտենական ուրախություն։

Ապաշխարել նշանակում է ճանաչել մեր մեղքերը, ողորմած Փրկչից ներումն աղերսել, փորձել դուրս գալ մոլությունների ու կրքերի ճահճից, լինել հեզ, խոհեմ, «ակնածող ի Տեառնէ», հավիտենական խավարից դեպի հավիտենական փրկություն գնալ։ Հիշե՞նք անառակ որդու առակը, ուր խորապես արտահայտված է այս պահը, նաև մեր երկնավոր Հոր անսահման գթասրտությունը իր արարածների նկատմամբ։ Հիշե՞նք մեղավոր կնոջը՝ Մարիամին, որն ապաշխարության հոգի արտասուքներով սրբում էր Փրկչի ոտքերը, սրբվում էր իր հանցանքներից ու աղտերից. Պետրոս առաքյալին՝ որը ճանաչել էր իր մեղքը և դառնապես լաց լինում։

Կրքերի ու մոլությունների ճնշումից քարացած մեր սրտերից բխում են ապաշխարության հոգի արտասուքներ, երբ մի պահ հիշում ենք Փրկչի խոսքերը հոգու անմահության մասին, բացվում են մեր հոգու աչքերը և տեսնում ենք մի կողմից երկնային, հավիտենական կյանքը Աստծու և գառնուկի փառքով լուսավորված, մյուս կողմից՝ հավիտենական կորստի ահավոր անդունդը։ Վերջինից սարսափած և առաջինին նկրտելու բաղձանքով տարված՝ մենք վճռում ենք մեկ անգամ ընդմիշտ թոթափել մեր վրայից

մեղքերի ու կրքերի փոշին, կատարել Փրկչի պատվիրանները, ամեն ինչ զոհել նրան հաճելու համար։ Այդպիսին էր հարուստ մաքսապետ Զակքեոսը, որը երկնից արքայության սիրով տարված՝ իր տունը այցելած Փրկչին ոգևորված հայտարարեց. «Ահա՛ր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց, և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին» (Ղուկ., ԺԹ 8)։

Ապաշխարության եկած հավատացյալը դիմում է դեպի եկեղեցի, ուր ստացել է հոգևոր ծնունդ ու դաստիարակություն և գտնում մխիթարություն։ Ինչպես մութ ամպերը բարձրանում և ծածկում են երկինքը, երկիրը մթնում է, թափվում է հորդառատ անձրևը և հանկարծ փարատվող ամպերի տակից նորից փայլում է պայծառ արևը, նույնպիսի երևույթ է կատարվում իսկական ապաշխարողների հոգեկան աշխարհում։ Անթիվ մեղքերից վշտանում ու ամպանում են հավատացյալի սիրտն ու հոգին։ Նա շտապում է դեպի եկեղեցի, ծունկի դալիս ամենագութ Փրկչի առաջ և կուրծքը ծեծելով լաց լինում իր հուսահատական, ողբալի դրությունը՝ «Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ։ Զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ, զի անթիւ են յանցանք իմ, անասելի են անարէնութիւնք իմ, աններելի են ցաւք իմ և անլուծելի են վէրք իմ։ Ամենագութ և մարգասեր Փրկիչը, սակայն, նորից է նրան թողություն պարգևում։ Ապաշխարող հավատացյալը հավատքով և երկյուղածությամբ մոտենում է սուրբ սկիհին, հաղորդվում Փրկչի կենարար մարմնի և արյան հետ և նորից սրբվում իր հանցանքներից։ Նրա հոգուց փարատվում են վշտի ամպերը և ծագում է նրա համար մխիթարության վառ արեգակը։ Նա վերադառնում է տուն հոգով ուրախ ու խաղաղ։ Մեր եկեղեցիները ո՛չ միայն լույսի ու սրբության, այլև քավության ու փրկության խորաններ են։

Տերը կնների մեզ և կլսի մեր ապաշխարության լացն ու աղաղակը, եթե անկեղծարար զղջալով, հաստատապես վճռենք այլևս կրքերին գերի չլինել, Հիսուս Փրկչից չհեռանալ և կատարել նրա սուրբ պատվիրանները։ Ամենակարևորն այն է, որ մենք տանք սիրո, հեզության, պարկեշտության և հատկապես ներողամտության ու գթասրտության իսկական օրինակներ, որովհետև՝ «Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր» (Մատթ., Զ 14), կամ, ինչպես ասվում է Հին Ուխտի մեջ՝ «Աղօթմուխեամբ և հաւատովք՝ սրբին մեղք» (Առակք, ԺԵ 27)։

Մենք, որ առատապես ստացել ենք Ս. Հոգու շնորհքը դեռևս մկրտության սուրբ ավազանից, այլևս մեղքի հատակը չգլորվենք ու չզրկվենք հավիտենական լույսից։ Այժմ մենք լուսո որդիներ ենք։ Մեր երկնային տունը արդար խղճով մտնելու համար, աշխատենք միշտ արթուն լինել մեր չերմեռանդ հավատքով ու բարեգործություններով։ Չէ՞ որ չարը՝ սատանան, հարվածի թունոտ սլաքը միշտ ուղղում է շղթայի դեպի թույլ օղակը։ Անհետևողականությունը և դեպի ծուլությունը գլորվող հավատացյալներին նա ավելի հեշտությամբ է աշխատում գցել իր ծուղակը և կլանել։ Ահա հենց դրա համար է, որ Պետրոս առաքյալը խիստ զգուշացնում է մեզ. «Արթուն լերուք, հսկեցէք, զի ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ. շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ» (Պետր., Ե 8)։ Ապաշխարությամբ, անկեղծարար զղջալով ելք որոնել այդ ահավոր դրությունից, նշանակում է փառավոր հաղթանակ նվաճել մեծ հակառամարտում. լինել հոգևոր, քաջամարտիկ զինվոր։

Գոհանանք և հանապազ փառավորենք մեր սիրելի երկնավոր Հորը, որը մեզ այս երկրավոր աշխարհում պարգևել է երկար ժամանակ՝ սթափվելու մեր մեղքերից, սրբվելու ապաշխարության արտասուքներով և պատրաստվելու երկնային կյանքի համար։ Հիշե՛նք, որ մենք պանդուխտներ և ժամանակավոր հյուրեր ենք երկրավոր կյանքում և շուտով մեր երկնավոր Հորը մոտ պիտի գնանք, կանգնենք նրա ահավոր դատաստանի առջև։ Ուրեմն, քանի շուտ է, ժամանակը մեր ձեռքին՝ թեև չափազանց կարճ, աշխատե՛նք տալ ապաշխարության արժանի պտուղներ, լինել բարեբեր ծառ մեր երկնավոր Հոր համար, եթե ոչ՝ «Ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի՝ հատանի և ի հուր արկանի» (Մատթ., Գ 10)։

Աղոթենք հանապազ, որ երկնավոր Հոր Աչը միշտ հովանի լինի Հայոց Եկեղեցու հավատացյալ զավակների վրա, որ, ինչպես նա իր ամենակարող զորությամբ անապատի մեջ ապառաժից ջուր բխեցրեց ծարավից սուլորված Իսրայելի ժողովրդի համար, այնպես էլ մեր ապառաժ սրտերից բխեցնի ապաշխարության հորդ արտասուքներ, մեր հոգևոր աղտերից հավիտյան սրբվելու և ձերկնից արքայությունը ժառանգելու, ամեն։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՊԱՏ ԿԱՄ ՆՈՐ-ՎԱՐԱԳ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համշադինի շրջանի հյուսիս-արևմտյան սահմանին գուգահեռ հոսող Հասանի-Ջուր (Հասան-Սու) գետակի ձորում է գտնվում այս կարևոր պատմական հուշարձանների խումբը, որը սովորաբար կոչվում է Վարագա վանք։

Բանուկ ճանապարհներից հեռու գտնվելու պատճառով, այդ հուշարձանները շատ քիչ են այցելվում, և այդ իսկ պատճառով հանրածանոթ չեն։

Երևանից Վարագա վանք գնալու համար պետք է Դիլիջան—Իջևան խճուղով գնալ Ցղստաֆա կայարանը և այստեղից դեպի Ռովուզ տանող ճանապարհով 3—4 կիլոմետր գնալուց հետո թեքվել աջ, դեպի Պառավաչար և այդտեղից Հախում գյուղը։ Շրջանային կենտրոնից՝ Բերդից՝ Հախում կարելի է գնալ Զինչինի վրայով։

Հուշարձանները գտնվում են Հախումից հարավ-արևմուտք, Հասանի-Ջուր գետակի ձախ ափին ձգվող անտառապատ լեռնաշղթայի բարձրության կիսում, գյուղից մոտ 2 կիլոմետր հեռավորությամբ, մի փոքրիկ բացատում։ Դիրքը գեղեցիկ է և հորիզոնն ընդարձակ։

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանների գլխավոր խումբը, որն առաջ պարսպված է եղել, բաղկացած է երեք մասից.

1. Անապատ, որը բաղկացած է դեղնագույն սրբատաշ քարերով երեսպատված 4 շենքից, համարյա հավասարակող քառանկյունի տարածություն է գրավում վանքի հարավային մասում.

ա. Գավիթ. իր երկարությամբ ձգված է հարավից հյուսիս և բռնում է Անապատի քառակուսի տարածության արևմտյան մասը։ Այդ շենքը եղել է թաղապատ, որին սպացույց են պատերին կից մնացած թաղակալ կամարների հենարան կազմող կիսամույթերը։ Ներկայումս գավթի տանիքը և հարավային պատն ամբողջությամբ փլած են։ Հարավային կողմից իր տեղում մնացել է միայն պատին կից եղած արևելյան ծայրի կիսամույթը։

Գավթի մեջ են բացվում այդ խմբի մնացած հետևյալ երեք շենքերը, սկսած հյուսիսային եզրից։

բ. Տապանատուն, որը մի փոքրիկ թաղապատ մատուռ է։

գ. Եկեղեցին գրավում է Անապատի արևելյան կիսի կենտրոնական մասը, նույնպես փոքրիկ թաղապատ շենք է, նշանավոր իր արևելյան աբսիդով, որը մեջտեղից միջնորմով երկու մասի է բաժանված, որով ստացվում է զույգ բեմ, մոտ 3 մետր լայնություն ունեցող եկեղեցում։ Այս տիպի եկեղեցին հազվադեպ երևույթ է մեր կրոնական հուշարձանների մեջ։ Եկեղեցու թաղը կիսով չափ քանդված է։ Գեղեցիկ կերպով ձևավորված է մուտքը փոքրիկ կիսասյուներով, քանդակներով և աջից ու ձախից պատի մեջ ամրացված խաչքարերով։

դ. Հարավից եկեղեցուն կից է մի մատուռ, որն իր չափերով համապատասխանում է տապանատանը։

Վերջին երեք շենքերից միջինի, այսինքն եկեղեցու արևելյան ճակատը մոտ 2 մետր դուրս է ընկնում տապանատան և մատուռի համապատասխան ճակատներից։

Երեք շենքերի տանիքներն էլ խարխլված են և արևելյան ճակատի սրբատաշ քարերը թափված կամ քանդված։

2. Աստվածածին կաթուղիկե. 13-րդ դարի համար սովորական տիպի՝ կենտրոնական գմբեթակիր՝ մի գեղեցիկ շենք է, բարձր, նյացիկ գմբեթով, առանց սյուների, կից Անապատի հյուսիսային պատին։ Այս եկեղեցու անկյուններում կան չորս զույգ կրկնահարկ խորաններ. աբսիդի կողքերի վերին հարկի խորանների մուտքը բեմից է, իսկ արևմտյան կողմի վերին հարկերը կարելի է բարձրանալ պատերի մեջ հագցրված քարե աստիճաններով։ Ունի երկու դուռ, որոնցից հարավայինը բացվում է Անապատի դավթի մեջ, իսկ արևմտյանը՝ այդ կողմից եկեղեցուն կից, հետագայում կառուցված, ժամատան մեջ։

Եկեղեցու չափերն են՝ 15,6×10,7 մետր։ Դրսից և ներսից սրբատաշ քարերով երեսպատված այս հուշարձանը ամենից լավ դրությամբ մնացած շենքն է ամբողջ խմբից։ Տեղ-տեղ թափված են պատերի արտաքին երեսպատ քարերը և տանիքի կղմինտրաձև սալերի մեծագույն մասը և գմբեթի վեղարի ծածկը։

Առհասարակ այս շենքը տպավորիչ է իր պարզությամբ, զերծ զարդարանքների խճողումից։ Արտաքին զարդարանքի ամբողջ թափը կենտրոնացած է եկեղեցու արևմտյան մուտքի շրջանակի վրա։ Այդ լայն շրջանակը հիանալի է իր գեղարվեստական ձևավորումով, որտեղ շինող վարպետները արտահայտել են իրենց բարձր ճաշակը գունավոր քարերի ներդաշնակ դասավորության մեջ և քանդակելու նուրբ արվեստը։ Երկրաչափական ձևեր ունեցող մուգ մանիշակագույն և բաց կապույտ քարերից է կազմված այդ նշանավոր և սքանչելի մոզաիկ շրջանակը, որի մուգ մանիշակագույն քարերի վրա նրբությամբ և գեղարվեստորեն քանդակված են զանազան կենդանիներ, հուշկապարիկներ և ծաղիկներ, մեկը մյուսից տարբեր ձևերով և բովանդակությամբ։

3. Ժամատուն. շինված է Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում։ Չափերն են 14,5×13,2 մետր։ Ըստ երևույթին դա մի կեղեցիկ կառուցվածք է եղել, որից մնացել են միայն չորս պատերը և դրանց կից երդուական մույթեր, որոնց գոյությունը թույլ է տալիս ենթադրելու, որ այդ մույթերի վրայից բարձրացել են առաստաղը գոտկող կամարները, որոնց երկրորդ ոտքերը հենված են եղել չորս սյուների վրա, կենտրոնում կազմելով երդիկ։ Թե՛ սյուները և թե՛ կամարներն ու առաստաղը քանդված են և տեղում դրանց հետքն անգամ չի մնացել։

Ժամատան մուտքը հարավային պատի արևմտյան ծայրում է բացված, իսկ արևելյան ճակատում Աստվածածին եկեղեցու վերոհիշյալ գեղեցկաքանդակ շրջանակ ունեցող դուռն է։

Ժամատան մեջ մնացել են մի քանի հատ խաչքարեր։

Վանքի նկարագրությունը վերջացնելու համար մնում է հիշել, որ դա մի ժամանակ ունեցել է պարիսպ և միաբանության ընակատեղի, որոնց անշան հետքերն են մնացել։ Ունեցել է նաև շրմուղ։ Վանքի հյուսիսային կողմում գտնվում են գերեզմանատունը և մի մատուռի մնացորդները։ Մի երկրորդ մատուռ, խարխուլ դրությամբ, գտնվում է վանքից հարավ ընկած ձորակում, մոտ 100 մետր հեռավորության վրա։

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ

Մի կողմից վիմական և պատմական աղբյուրներում և մյուս կողմից նոր գրականության մեջ, հուշարձանների խմբական անունը տարբեր է հիշատակվում։ Վիմագրության մեջ (արձ. №№ 3, 12 և 20) վանքը հիշվում է Անապատ անունով։ Նույն անունն են տալիս վանքին նաև պատմագիրներ Կիրակոս Գանձակեցին[2] և Վարդան Վարդապետը[3]։ Երկուսն էլ Անապատը վարակցում են Նորբերդի հետ. այսպես, Գանձակեցին հիշատակում է. «... ի վանքն, որ Անապատ կոչի. հուպ ի Նոր բերդն...» (էջ 146), իսկ Վարդան պատմիչը՝ «... ի հռչակատոր վանսն Նոր բերդին, Անապատ կոչեցեալ...» (էջ 155)։ Ինչպես տեսնում ենք, ոչ վիմագրությունը և ոչ էլ պատմիչները «Վարագա վանք» անունը բնավ չեն հիշում։

Նոր գրականության մեջ վանքի իսկական՝ Անապատ՝ անունը չի հիշատակվում և դրա փոխարեն, երևի նկատի ունենալով Վարագա վանքից Սուրբ Նշանն այս վանքը փոխադրելու հանգամանքը, որի մասին մանրամասն

1. Աստվածածին եկեղեցու և ժամատան չափերը վերցված են Մ. Օրբելի եպիսկոպոս Բարխուդարյանի «Արցախ» աշխատությունից (էջ 366),- Բաքու, 1905 թ.։

2. Կիրակոսի Գանձակեցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910 թ.։

3. Վարդանայ Վարդապետի հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1861 թ.։

պատմում է Վարագա վանքի առաջնորդ հայր Ղուկասը № 20 արձանագրության մեջ, Անապատ վանքն անվանում են «նոր Վարագ», «Վարագա Սուրբ Նշան»[4], «Ուխտն Վարագ»[5], կամ պարզապես «Վարագա վանք»։

Նկատի ունենալով հայր Ղուկասի արձանագրության պատմական նշանակությունն ունենալու և վանքը նոր անունով կոչելու հանգամանքը, այստեղ կբերենք այդ արձանագրության կարևոր մասը, քաղվածաբար։ «Ի թվ. ՈՁ (680=1231) ընդ այս աշխարհս յոլով հարաւ գաւազանաւ ցասմանն Աստուծոյ գաւառն Ալաթա ի ձեռն Խորազմին և Թաթարին, ընդ որս և մեծահռչակ ս. ուխտն Վարագ... յայսմ ամի ես Ղուկաս, հայր Վարագա, առեալ զտիեզերահամբաւ Ս. Նշանս... զվեց ամ շրջեցա թափառեալ ի տեղո ի տեղ։ Ի կամս յառաջատես խնամոցն Տեառն հասի ի Նոր բերդ առ քրիստոսասէր իշխանն Վասակ և յաստուածարնակ Անապատ կոչեցեալ վանքս. և ազդումն ինչ եղև առ իս հաճոյանալ Ս. Նշանիս ի տեղւոջս, նկատեցի և զգեղաղեղ եկեղեցիս արժանի հանգստեան սորա և մեծարեալ ի բնափցս, առի զվանքս և ետու յեկեղեցիս Աստուծոյ, միջնորդութեամբ և վկայութեամբ տեառն Յոհաննիսի, շինողի եկեղեցւոյս...»։

Վերոհիշյալը նկատի ունենալով, կարծում ենք, որ ճիշտ կլինի հուշարձանների այս խումբն անվանել Անապատ կամ Նոր-Վարագ, այդպիսով թե՛ վերականգնված կլինի հին անունը, և թե՛ պահպանված նորը՝ ճիշտ իմաստով։

Ինչ վերաբերում է հուշարձաններից յուրաքանչյուրին՝ առանձին, պետք է ասել, որ դրանցից միայն մեկի՝ կաթուղիկե եկեղեցու՝ անունն է մեզ հասել, այն էլ Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ (էջ 146), որտեղ ասված է. «Եւ եղև աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կնքեցաւ յանուն Սրբոյ Աստուածածնին», որը Վասակի № 19 արձանագրության մեջ կոչվում է «մեծ եկեղեցի»։

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՇԻՆՈՂՆԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ինչպես վիմագրությունից, հատկապես ամենահին, թերի մնացած, մեր № 11 (ՈՆԹ=1193 թվակիր) արձանագրությունից երևում է, Անապատը եղել է Նոր-բերդի Կյուրիկյան Բագրատունիների վանքը և պանթեոնը։ Այդ արձանագրության մեջ ասված է. «Ես Դաւիթ, որդի Վասակա, թոռն Կիւրիկէ արքայի, շինեցի զեկեղեցիս և զտապանատունս...»։

Նույն տեղեկությունը կրկնվում է ինչպես Դավթի մյուս՝ № 3, նաև Աստվածածին եկեղեցու № № 18 և 19 արձանագրություններում, որոնցից վերջինը, Դավթի որդի Վասակի արձանագրությունը, նախորդներից տարբերվում է նրանով, որ այդտեղ Կյուրիկեի անունը չի հիշատակվում, այլ շեշտը դրվում է Բագրատունյաց ցեղից սերված լինելու վրա։

Այսպիսով ստացվում է Նոր-բերդի իշխանների հետևյալ տոհմագրական կարգը. Կյուրիկե—Վասակ Ա., Դավթի (Անապատի շինողը) և Վասակ Բ. (Աստվածածին եկեղեցու շինողը), կամ շինության օժանդակողը)։

Նոր-բերդին իշխողներից վերջին երկուսի, այսինքն Դավթի և Վասակ Բ.ի մասին միայն հիշատակություն ունեն այդ ժամանակաշրջանի պատմագիրներ Վարդան վարդապետը, որը իր «Հաւաքումն պատմութեան»

4. Ակադեմիկոս Աճառյան, Անձնանունների բառարան, հատոր Գ, էջ 591, № 204։

5. Շահխաթունյան, «Մատենագրութիւն...», Էջմիածին, 1842 թ., հատոր Բ, էջ 368։

155-րդ էջում հիշում է Վասակ Բ.ի մասին (Աստվածածին եկեղեցու շինության կապակցությամբ), անվանելով նրան «թագաւորաղն Բագրատունի», և Կիրակոս Գանձակեցին, որը մանրամասն պատմում է Դավթի և Կյուրիկյանների գլխավոր Էյուղի ժառանգ, վաղամեռիկ Աբասի ապօրինի որդի Աղսարթանի մասին, որը ժամանակակից էր պատմիչին, և Վասակ Բ.ի մասին։ Բերենք պատմիչից այդ հատվածը քաղվածաբար. «...Աղսարթան, որ եղև ժառանգակալ Մածնաբերդոյ, այր աստուածապաշտ և քահանայասէր։ Սա որ եհաս յաւուրս մեր, սորա ի ծերութեան ցաւեցին ոտք. ընդ սա խաբէութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան Նոր բերդին, զի էր և նա յազգէ Բագրատունեաց, հայրն Վասակա իշխանի, որ շինեաց զեկեղեցին հրաշագան ի վանքն՝ որ Անապատն կոչի, հուպ ի Նոր բերդն, առաջնորդութեամբ և ձեռնադրութեամբ արքեպիսկոպոսին Յոհաննիսի Տուեցոյ քաղաքին Շամքորոյ, և Գարդմանայ, և Երգեվանիցն, և Տէրունականին, և Տաւշոյ, և այլ կողմանց իշխանութեան Վահրամայ իշխանի։ Եւ եղև աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կնքեցաւ յանուն Սրբոյ Աստուածածնին ի ՈՁԹ թուականին Հայոց։ ...Իսկ Դաւիթ իշխան Նոր բերդին խաբեաց զմանուկն Աղսարթան և փեսայացուց զնա ի դուստր իւր. և ինքն տիրեաց Մածնաբերդոյ, և ապահան զդուստր իւր ի նմանէ։ Իսկ Աղսարթանայ իւր արարեալ զրենակիցս իւր բերդին.

յանկարծակի յեղակարծ ժամու ըմբռնեալ զՀաւիթ հանդերձ ամենայն ընտանեօքն հանիւ արտաքս ի քերդէն և ետուն զքերդն Աղսարթանայ։

Ինչպես Կյուրիկյանների, նույնպես և Նոր-բերդի իշխանների տոհմագրությունը և դրանց փոխհարաբերությունները պարզելու տեսակետից այդ հատվածը կարևոր է։ Ինչպես երևում է, պատմագրի համակրությունը Աղսարթանի կողմն է, որը, չնայած Աբասի ապօրինի որդին լինելու հանգամանքին, Կյուրիկյանների գլխավոր ճյուղի օրինական ժառանգն է ճանաչվում, իսկ Դավիթը հիշվում է լոկ «յազգէ Բագրատունեաց»։ Չի կարելի ասել, որ պատմիչը համակրում է Աղսարթանին, որովհետև նա էլ «այր աստուածապաշտ և քահանայասէր», չէ՞ որ Դավիթն էլ «աստուածասէր» էր, որովհետև Անապատ վանքն էր շինել, մի բան, որը չէր կարող պատմիչին ծանոթ չլինել։ Նման վերաբերմունքը թերևս հասկանալի լինի հետևյալ հարցի լուծումից։

Այդ կարևոր հարցն այն է, թե ո՞ր Կյուրիկեից էր սերված Նոր-բերդի իշխանական տոհմը։

Այս առթիվ Կ. Ղաֆադարյանն իր «Պատմահնագիտական դիտողություններ Նոր-բերդի Կյուրիկյան իշխանության մասին» հոդվածում[6] անբեկբա այն կարծիքն է հայտնում, որ Վասակ Ա.-ի հայրը Կյուրիկե Գ.-ն է, որը գթագավորել է 12-րդ դարի երկրորդ կեսին, 1145 թ. մինչև 1185 թ. ...Սակայն Նոր-Վարագա վանքի արձանագրություններից պարզվում է, որ Կյուրիկե Գ.-ն ունեցել է նաև մի ուրիշ որդի՝ Վասակ անունով, որը Նոր-բերդի Կյուրիկյան ճյուղի հիմնադիրն էր։ Հետևապես 19 տարեկան հասակում մահացած Աբասը և Նոր-բերդի իշխան Վասակ Ա.-ն եղբայրներ էին։



Անապատ կամ Նոր-Վարագ վանքի բեղմնաւոր տնտարանը հարավ-արևելքից

Սակայն, նկատի ունենալով հոդվածների վիմագրական տարբերությունները և Կիրակոս Գանձակեցու մի քանի որոշակի տեղեկությունները, դալիս ենք այն եզրակացության, որ Անապատը շինող Դավիթ Նոր-բերդցու հայր Վասակ Ա.-ը չէր կարող Կյուրիկե Գ.-ի որդին լինել, հետևյալ պատճառներով.

6. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1940 թ., № 4—5, էջ 165—180։

1. Ըստ Գանձակեցու, Կյուրիկե Գ.ը «... փոխեալ յաշխարհէս, թողու ժառանգակալ զորդի իւր զմանուկ Աբաս երկոտասանամեայս։ Ինչպես վերը հիշված է, Կյուրիկե Գ.ը վախճանվել է 1185 թվականին, հետևապես Աբասը ծնված է եղել 1173 թվականին, և վախճանվել է «ամաց ընդ 19 և տասանց», ուրեմն 1192 թվականին։

Նրա (Աբասի) ապօրինի որդի Աղսարթանը հոր մահվան ժամանակ եղել է «մանուկ մի ստնդեայս», որը մկրտված էլ չի եղել, որովհետև Աբասի քույր Բյուրինան «առնու զմանուկն և մուցանէ, և անուանեաց զանուն նորա Աղսարթան», հետևապես Աղսարթանը ծնված է եղել իր հոր մահվան տարում, այսինքն 1192 կամ 1191 թվականին։

Աղսարթանն ամուսնանում է տղայության հասակում, որովհետև «...Դավիթ իշխան Նոր բերդին խաբեաց զմանուկն Աղսարթան և փեսայացուց զնա ի դուստր իւր», հետևապես մոտ 15—16 տարեկան հասակում, այսինքն 1207 կամ 1208 թվականին։

Նկատի ունենալով, որ Դավիթ Նոր-բերդցին 1193 թվականին սկսել է շինել Անապատը և տապանատունը, այսինքն այդ ժամանակ այնպիսի տարիք է ունեցել, որ իր մահվան և հոգու փրկության մասին է մտածել, և որ 1207/8 թվականին հարսնացու, թերևս հասուն աղջիկ է ունեցել, որովհետև «խաբեաց զմանուկն Աղսարթան», թվում է թե սխալված չենք լինի, եթե նրան, իր դստեր ամուսնության (1207/8) թվականին համարինք շուրջ 50—55 տարեկան հասուն և փորձված մի մարդ, որն այդ հաշվով պետք է ծնված լինի մոտ 1152—1157/8 թվականին։ Այսպիսով Դավիթն Աբասից շատ մեծ է և ժամանակակից Կյուրիկե Գ.ին (իշխած 1145—1185 թ. թ.), թեև նրանից տարբերվով բավական փոքր։

2. Մի կողմ թողնելով երկու եղբայրներից մեկի որդու և մյուսի թոռան (Աբասին և Վասակ Ա.ին եղբայրներ ընդունելու դեպքում) ամուսնության խնդրում «հասի կամ չհասի հարցը, կարևոր ենք համարում նշելու Գանձակեցու հետևյալ խոսքերը, երբ նա նկարագրում է Աբասի մահից հետո նրա քույր Բյուրինայի մտատանջությունը։ Գանձակեցին գրում է. «Իբրև ետես քոյր նորա Բիւրինայ անուն, եթէ բնաջինջ եղաք յազգէ՝ անհնարին սգով վարանէր», որից հետո նա տեղեկանալով, «եթէ է կին մի, որ ունի մանուկ մի ստնդեայ բեղբօրէն քումմէն, զվարթանում է և վերցնելով այդ մանկան, դարձնում է ժառանգ իր «ազգի»։

Այստեղ ինքնըստինքյան հարց է առաջանում, թե ինչո՞ւ պետք է վարաներ և սգար Բյուրինան իր «ազգի» ընաջինջ լինելու մասին, երբ, ըստ վերոհիշյալ տեսակետի, կային այդ «ազգի» օրինավոր և ավելի իրավատեր ժառանգորդները՝ Կյուրիկե Գ.ի որդի Վասակ Ա.ն և նրա որդի Դավիթը, որոնք առաջնության իրավունք պետք է ունենային նույնիսկ Աբասի նկատմամբ։ Եթե դրանցից առաջինի՝ Վասակի՝ այդ ժամանակում կենդանի լինելը հարցականի տակ լինի, փոխարենը երկրորդը՝ Դավիթը՝ հաստատապես կար։ Այսպիսով, վերոհիշյալ տեսակետն ընդունելու դեպքում, որևէ կերպ չի կարելի համաձայնվել, որ Բյուրինան «անհնարին սգով վարանէր», որովհետև Կյուրիկե Գ.ի ժառանգությունն առանց այլևայլի կանցներ նրա օրինավոր ժառանգին՝ Վասակ Ա.ին կամ նրա որդի Դավթին՝ և կարիք չէր լինի ապօրինի ծնված մի ժառանգ մեջտեղ բերել։

Այս բոլորը նկատի ունենալով կարելի է անել հետևյալ եզրակացությունը.

1. Անապատի շինող, Նոր-բերդի իշխան Կյուրիկյան-Բագրատունի Դավթի հայր Վասակ Ա.ը չէր կարող Կյուրիկե Գ.ի[7] որդին լինել, այլ, հավանաբար, Նոր-բերդի տիրակալները սերված են եղել Կյուրիկե Բ.ից։ Կյուրիկե Բ.ի մահվան թվականի մասին հետևյալն է ասում «Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը» աշխատության հեղինակ Հ. Ղեոնդ Մովսեսյանը. «Թագաւորիս մահուան թուականը որոշ չէ. վերջին անգամ կը յիշուի 1089-ին, ուստի հաւանաբար մահը 1089—1100 թուականներուն պատահած պիտի ըլլայ՝ քանի որ իւր յաջորդն 1105 թուին կը յիշուի»[8]։

2. Նախորդ կետում հիշված եզրակացությունն ընդունելու դեպքում, հասկանալի

7. Կյուրիկեների հերթականությունը ամեն տեղ բերված է ըստ Կ. Ղաֆադարյանի։

8. Հ. Ղեոնդ Մովսեսեան, Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923 թ., էջ 59։

կլինի Աբասի քույր Բյուրինայի մատնոգությունն իր ազգքի բնաջինջ լինելու մասին և Աղսարթանին իր տոհմի օրինական ժառանգ ընդունելու փաստը։ Հասկանալի կլինի նաև Կիրակոս Գանձակեցու համակրությունն Աղսարթանի նկատմամբ և Դավթի՝ Մածնաբերդին տիրելու փորձի՝ պախարակումը։

Թամարա թագուհու և նրա անմիջական հետևորդների ժամանակ վրաց պետության զորեղանալու պատճառով, Կյուրիկյանները կորցրել էին ոչ միայն իրենց քաղաքական իրավունքները, այլև կալվածքները։

Կյուրիկյանների դրությունն ավելի վատթարացավ սելջուկների տիրապետության ժամանակ։ Այսպիսով, ըստ Վարդան վարդապետի «Հաւաքումն պատմութեանց» (էջ 106), Դավիթ Անհողինի 13 բերդ ունեցող պետությունից, մեզ հետաքրքրող շրջանում, նրա ժառանգորդներին մնացել էր միայն մեկական բերդ, որոնցից գլխավոր ճյուղի ներկայացուցիչ Աղսարթանը տիրապետում էր Մածնաբերդին, իսկ երկրորդ ճյուղի ներկայացուցիչները՝ Դավիթը և նրա որդի Վասակ Բ. ը՝ Նոր-բերդին։ Ինչպես տեսնում ենք, Կյուրիկյան տոհմի այս ժառանգներից յուրաքանչյուրը մի փոքրիկ իշխան էր, «իշխանաց իշխան» փքուն տիտղոսով (տես արձ. № 18)։

Հիշյալ բերդերից Նոր-բերդը, որին Վարդան պատմիչը վերագրում է, իսկ Գանձակեցին շատ մոտ է համարում («հուպ») Անապատը, ըստ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի («Արցախ», էջ 359), գտնվում է այդ վանքի և Իշևանի շրջանի էլ գյուղի միջև «Ճից քարա կոչված ժայռի վրա։ Թե որքան ճիշտ է Նոր-բերդի այդ տեղադրությունը՝ ասել չենք կարող։

Հուշարձանների խմբից բուն Անապատը, որն ամենահին մասն է, շինել է Վասակ Ա.ի որդի Դավիթը, որի մասին մանրամասն հիշեցինք վերը։

Անապատի շինության մասին, հուշարձանի վրա պահված է երեք արձանագրություն, № № 3, 5 և 11։ Դրանցից № 5-ը՝ մի խաչքարի վրա՝ անթվակիր է, իսկ № 11-ը, որը կիսատ է մնացել, կրել է ՈՆԲ (642)=1193 թվագիրը։ Ասում ենք կրել է, որովհետև այդ թվագիրը սուր գործիքով խփված, եղծված է, և միայն գրերի հետքերով կարելի է վերծանել։ Այս արձանագրության մեջ հիշվում է եկեղեցու և տապանատան շինության մասին և փորագրված է տապանատան մուտքի ճակատաքարի վրա։ Այդ արձանագրության պակաս լրացնում է № 3-ը, որը փորագրված է եկեղեցու մուտքի ճակատաքարի վրա և լրիվ է, ուստի և այստեղ բերում ենք որոշ կրճատումներով. «Ես Դաւիթ որդի Վասակա թոռն Կիւրիկէ արքայի շինեցի զԱնապատս յիմ իշխանութեանս, ձեռամբ վարդապետին Մխիթարա, և ի ՈՆԷ թվիս շինեցի զեկեղեցիս ձեռամբ հաւր Գրիգորոս և նորին արբանեկին Պետրոսի և եղբարց նորա Յովանիսի և Ազարիայի, և ետու հող ի Տանձեկո և յեզեր գետին և զդրախտն ընդուզի ի ջաղացէն Համրնոս մինչ յնգուզուտն խարբի և ջաղաց մի և ի Բաին այգի, և շինական մի...»։

№ № 3 և 11 արձանագրությունները, բացի Կյուրիկյան տոհմի երկրորդ ճյուղի մասին ունեցած կարևոր տեղեկություններից, որի մասին վերը հիշեցինք, պարզաբանում են նաև մի քանի արժեքավոր հարցեր։

1. Այն հանգամանքը, որ ըստ ժամանակագրական կարգի առաջին շինարարական ընույթի № 11 արձանագրությունը փորագրված է ոչ թե եկեղեցու, այլ տապանատան մուտքի ճակատին, թեև տեքստում առաջ եկեղեցու մասին է հիշվում՝ «շինեցի զեկեղեցիս և զտապանատունս», դրան ավելացրած այդ արձանագրության կիսատ մնալը, իրավունք է տալիս ենթադրելու, որ տապանատան շինությունից հետո Անապատի շինարարությունը մի առժամանակ ընդհատվել է։ Այդ կարծիքը հաստատում է շինարարական հաջորդ (№ 3) արձանագրությունը, որը փորագրված է արդեն եկեղեցու մուտքի ճակատաքարի վրա։ Այս վերջին արձանագրության մեջ, որն սկզբում թվագիր չունի, Դավիթ իշխանը հիշատակում է, որ շինել է Անապատը Մխիթար վարդապետի ձեռքով և հետո ավելացնում է «և ի ՈՆԷ թվիս շինեցի զեկեղեցիս ձեռամբ հաւր Գրիգորոս և այլն։ Ուստի Դավիթ իշխանը սկզբում Մխիթար վարդապետի և ապա հայր Գրիգորի ձեռքով շինարարությունը կատարելու հիշատակությունները գալիս են հիմնավորելու վերը հիշված կարծիքը և № 11-ը

արձանագրության ՈՒԲ թվագրի վերծանության ճշտությունը։

2. Տապանատան ճակատի Ն 11-րդ (ՈՒԲ թվակիր) արձանագրության մեջ փաստորեն ՈՒԷ թվականին շինված եկեղեցու կառուցման մասին հիշատակություն անելը ևս մի փաստ է, որ գալիս է ապացուցելու շինարարությունը չվերջացած դրա մասին կանխորեն արձանագրելու սովորույթը։ Նման մի փաստ կա նաև Աստվածածին եկեղեցու վիմագրության մեջ, որի մասին կհիշվի իր տեղում[9]։

Ամփոփելով բուն Անապատի շինարարության և շինողների մասին եղած վիմագրական տվյալները, ստանում ենք հետևյալը.

Անապատի կառուցողը եղել է Կյուրիկե Բ. Բագավորից սերված Վասակ Ա.ի որդի Դավիթ Բագրատունի-Կյուրիկյան իշխանը։ Շինարարությունն սկսվել է ՈՒԲ (642)=1193 թվականին և վերջացել ՈՒԷ (647)=1198 թվականին։ Կառուցման ղեկավարները եղել են, տապանատան համար Մխիթար վարդապետը, իսկ եկեղեցունը՝ հայր Գրիգորը։ Վերջինի «արբանեակ» Պետրոսը և նրա եղբայրներ Հովհաննեսը և Ազարիան հավանաբար եղել են ճարտարապետ և կառուցող վարպետներ։ Այստեղ պետք է ավելացնել նաև Ն 7 արձանագրության մեջ հիշված Հազարդեղին, որը շինարարության համար քար է կրել։

Բուն Անապատի մասին մեր նյութը վերջացնելու համար, մնում է ասել հետևյալը. թեև գավիթը և եկեղեցուն հարավից կից մատուռը մտնում են Անապատի կոմպլեքսի մեջ, սակայն դրանց շինության մասին հատուկ հիշատակություն չկա։ Արդյոք դրանք ՈՒԲ թե ՈՒԷ թվականին են շինվել, կամ թե ավելի ուշ՝ դժվար է ասել։



Անապատի եկեղեցու արևմտյան ճակատը

3. Կարևորագույն տեղեկությունը, որ մեզ սալիս է Ն 3 արձանագրությունը, գյուղացիության սոցիալական կրության մասին է։ Դավիթը մի շարք անշարժ կալվածքների (հող, այգի, պարտեզ, շրջաց) հետ միասին վանքին նվիրում է նաև մի շինական։ Այդ փաստը, ի շարս մի քանի այլ հուշարձանների վիմագրության մեջ պահված նման հիշատակությունների, ապացուցում է, որ մեր վանքերը 12—13-րդ դարերում ունեին ճորտ գյուղացիներ։

9. Նման փաստի մասին հիշել ենք «Էջմիածին» ամսագրի 1951 թվականի հուլիս-օգոստոսի համարում, էջ 50, «Բարձրաքաշ վանքը և նրա վիմագրությունը» հոդվածում։

Աստվածածին կաթուղիկե եկեղեցու շինության մասին տեղեկություն են տալիս թե՛ այդ եկեղեցու վիմագրությունը և թե՛ Կիրակոս Գանձակեցին ու Վարդան վարդապետը։

Կիրակոս Գանձակեցուց համապատասխան քաղվածքը մենք բերինք Կյուրիկյանների տոհմագրության մասին խոսելիս [10]։

Պատմիչ Վարդան վարդապետն ասում է հետևյալը (էջ 153—155). «Յեսոքն հարիւր և երկոտասան թուին հանդեաւ ի Քրիստոս անուանի ճգնաւորն և արժանաւորն պատուելի աստիճանաց և կոչմանց, ուր կոչեաց շնորհն Աստուծոյ ի քահանայութիւն, ի վարդապետութիւն և յարքեպիսկոպոսութիւն տանն Գարդմանայ և այլոց բերդից և գաւառաց, այրն անուանի և յերևանի աշխարհի՝ տէրն Յովհաննէս Տուեցին անուանեալ.....հանդեաւ ի Քրիստոս, ի հոչակաւոր վանն Նոր բերդին Անապատ կոչեցեալ. թաղեցաւ ի դոտն եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ, և այլ բազում շինուած և արդիւնս վաստակեալ հրամանաւ, կամօք և ձեռնտուութեամբ Վասակայ Թագաւորազին Բագրատունւոյ։

Վիմագրության մեջ Աստվածածին եկեղեցու շինության մասին հիշատակություն կա № № 18 և 19, նաև հին Վարագա վանքի վանահայր Ղուկասի № 20 ՈՉ թվակիր արձանագրությունների մեջ։

Այդ արձանագրություններից № 18-ը փորագրված է կաթուղիկեի արևմտյան մուտքի բարավորի (վերնասյամի) վրա։ Այս արձանագրությունը կիսատ է (վերջավորությունն անընթեռնելի է), բացի այդ, թվագրի առաջին երկու գրերի (հարյուրավորի և տասնավորի) տեղում քարը ջարդված է։ Բովանդակությունը հետևյալն է. «ի թվ. ..Գ շինեցաւ եկեղեցիս ձեռամբ Յովանէս վարդապետի, հրամանաւ և իշխանութեամբ իշխանաց իշխանի Վասակա որդո [Դաւթի թո]ռն Կիւ-[ռիկէ]ի արքայի և սահմանեցաք զսա ազատ...», շարունակության մեջ, հավանաբար, պիտի լինի «յամենայն չարեաց» կամ «հարկաց»։

№ 19 արձանագրությունից բերում ենք միայն շինարարությանը վերաբերող մասը. «Ի թվին ՈՁԶ, ի թագաւորութեան Թուզուքանա դստեր Թամարի, ես Վասակ, որդի Դաւթի, որդո Վասակա, ի տանէ Բագրատունի, ի տոհմէ Դաւթա մարգարէի, ի փառս Աստուծոյ կատարեցի զեկեղեցիս, զոր շինեցի ի ձեռն տեառն Յովանէսի և ընծայեցի զՇաղկնագուզի իւր կոպարովն ի վանքս, և հաւանութեամբ եղբարցս հաստատեցաւ ինձ պատարագ Յայտնութեան և Զատիկն յիմ շինեալ մեծ եկեղեցին, որպէս իմ հաւրն յիւր շինեալ փոքր եկեղեցիսն։ Գրեցաւ և կնքեցաւ անուամբն Աստուծոյ, յատուր որում Վարագա հայրն Ղուկաս զՍուրբ Նշանն ետ յեկեղեցիս...»։

Ինչպես տեսնում ենք, ըստ Կիրակոս Գանձակեցու և № 19 արձանագրության, վանքի շինող է հանդիսանում Նոր-բերդցի Վասակ Բ. Կյուրիկյան-Բագրատունի իշխանը, իսկ ըստ Վարդան պատմիչի և № № 18 և 20 արձանագրությունների՝ Հովհաննես վարդապետը։ Մեր կարծիքով այս, ըստ երևույթին տարբեր հիշատակությունները կարելի է հաշտեցնել, ընդունելով, որ եկեղեցու շինությունը կատարվել է Վասակ Բ.ի հրամանով և նյութական օժանդակությամբ (ձեռնտվությամբ), իսկ շինողը, այսինքն շինության նախաձեռնողը, ղեկավարը, թերևս և ճարտարապետը եղել է Հովհաննես վարդապետը, ուստի եկեղեցու շինողների մասին եղած հիշատակությունների ձևակերպումներից հաջողը պետք է համարել պատմիչներից Վարդան Վարդապետինը, իսկ վիմագրության մեջ՝ № 18 թերի արձանագրությունը։

Աստվածածին կաթուղիկե եկեղեցու շինողի մասին եղած հարցը փակելու համար, մնում է մի երկու խոսք ասել վիմագրության մեջ հիշվող Հովհաննես վարդապետի (վանահոր) և պատմիչների հիշատակած Հովհաննես Տուեցի հռչակավոր վարդապետ-արքեպիսկոպոսի մասին։ Այս հարցը բարձրացնում ենք, որովհետև բանասիրության մեջ երբեմն դրանք տարբեր անձնավորություններ են համարվում։ Օրինակ. ակադեմիկոս պրոֆ. Աճառյանի «Անձնանունների բառարանի Գ հատորում, 591 էջում, № 304-ի տակ բերվում է Հովհաննես վարդապետը, իսկ 592 էջում՝ № 308-ի տակ՝ Հովհաննես Տուեցի արքեպիսկոպոսը, իբրև տարբեր անձնավորություններ, երկուսն էլ Նոր-բերդի եկեղեցու շինողներ։ Մեր կարծիքով այս երկու անուններն էլ վերաբերում են միևնույն անձին։ Անապատի Աստվածածնի եկեղեցու շինողը Հովհաննես Տուեցին է.

10. Այստեղ սոսիգված ենք նշել, որ Կ. Ղաֆադարյանը իր հոդվածում (Տեղեկագիր, 1940 թ., № 4—5, էջ 167) իզուր է սխալված համարում Կ. Գանձակեցուն, ասելով, որ իբրև թե պատմիչը «... ամբողջ շինությունը, կամ ավելի ճիշտ կլինի ասել, Անապատի շինությունը վերագրում է Վասակին», այնինչ պատմիչը 146-րդ էջում պարզապես միայն Աստվածածին եկեղեցու շինությունն է վերագրում Վասակին, ասելով. «... որ [Վասակ] շինեաց զեկեղեցին հրաշագան ի վանքն, որ Անապատ կոչին։

սկզբում վարդապետ և հետո արքեպիսկոպոս, որը մինչև իր մահը (1263 թ.) եղել է այդ վանքի վանահայրը և այնտեղ էլ թաղվել, ըստ պատմիչ Վարդան վարդապետի։

Ինչպես վերը բերված վիմագրական և պատմագրական քաղվածքներից տեսանք, այս եկեղեցու շինության մասին հետևյալ երեք թվական հիշատակությունները կան, տարբեր արտահայտություններով.

ա. № 18 արձանագրությունը ..Գ եղծված թվագրով. «շինեցաւ սկեղեցիս».

բ. Վասակի № 19 արձանագրությունը ՈՁԶ թվագրով. «կատարեցի զեկեղեցիս. զոր շինեցի».

գ. Կիրակոս Գանձակեցու հիշատակությունը. «և եղև աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և մկնքեցաւ... ի ՈՁԹ»։

Դրանցից № 18 արձանագրության եղծված թվագիրը կարող է լինել ՈՀԳ կամ ՈՁԳ։ Մենք այն կարծիքին ենք, որ այս արձանագրությունը շինարարության սկզբին է վերաբերում և հետևապես պետք է թվագիրը եղած լինի ՈՀԳ, որովհետև հուշարձանի պատերին կան ՈՀԹ թվակիր № № 24 և 25 և ՈՁ թվակիր № 20 արձանագրությունները, որոնց առկայությունը հաստատում է շինարարության այդ թվականից առաջ սկսված լինելը։ Այս խնդրում մասնավորապես արժեքավոր են հայր Ղուկասի № 20 արձանագրության մեջ «նկատեցի և զգեղաղեղ եկեղեցին արժանի հանգստեան սորա (Ս. Նշանի)» խոսքերը, որոնք ապացույց են, որ ՈՁ թվականին եկեղեցու շինարարությունը հիմնականում արդեն ձևավորված էր և նկատվում էր նրա «գեղաղեղ» և Ս. Նշանի հանգստյան արժանի լինելը։

Ինչ վերաբերում է շինարարությունը չվերջացած այդ մասին արձանագրելու հանգամանքին, այդ արդեն, ինչպես վերը՝ Անապատի մասին գրելիս՝ հիշեցինք, ժամանակի սովորույթ էր։ Այս եզրակացությունն է հաստատում նաև Վասակի № 19 ՈՁԶ թվակիր արձանագրությունը, որտեղ ասված է. «Կատարեցի զեկեղեցիս, զոր շինեցիս»։ Այստեղ թվագիրը «կատարմանն» է վերաբերում, այսինքն շինարարական գործունեությունը վերջացնելուն։ Եթե նկատի ունենանք Կյուրիկյանների այդ ճյուղի նման մի փոքր իշխանության տնտեսական ուժ պայմանները և երկրի քաղաքական բարդ և ծանր դրությունն այդ ժամանակ (Խորեզմշահ Ջալալ-էդդինի և դրա հաջորդող մոնղոլների արշավանքները), հասկանալի կլինի, որ նման խոշոր մասշտաբի շինարարությունը պետք է տարիներ տևեր, քանի որ անհամեմատ ավելի լավ պայմաններում և ավելի փոքր շինարարությունը նույն վանքում (բուն Անապատ) Դավիթ իշխանը կատարել էր 5—6 տարում։

Իսկ ինչ վերաբերում է Կիրակոս Գանձակեցու հիշատակած ՈՁԹ թվագրին, դա պարզապես հուշարձանի օծմանը և անվանակոչությանն է վերաբերում, որը վերոհիշյալ քաղաքական պայմաններում կարող էր նույնպես շինարարությունը վերջացնելուց մի քանի տարի հետո տեղի ունենալ, երբ ավարտված մյուսներին նաև շինարարական բնույթի մնացած մանր աշխատանքները և ներքին սարքավորումը, որով «եղև աւարտումն» խոսքերը չեն հակասում, այլ լրացնում են եկեղեցու ավարտման պրոցեսը։

Եկեղեցու անվանակոչությունը ավելի ուշ կատարվելուն ապացույց է նաև այն փաստը, որ № 19 արձանագրության մեջ չի հիշվում եկեղեցու անունը։

Այսպիսով գալիս ենք այն եզրակացության, որ Աստվածածին եկեղեցու շինարարությունն սկսվել է ՈՀԳ (673)=1224 թվականին և վերջացել ՈՁԶ (686)=1237 թվականին և օծվել ու անվանակոչվել ՈՁԹ (689)=1240 թվականին։ Այսպիսով այս հուշարձանի շինարարությունը տևել է 13—14 տարի։

Ժամատունն, ըստ ժամանակագրական կարգի, ամենից վերջն է շինված, սակայն դրա շինության ժամանակի և շինողի մասին որևէ տեղեկություն չի պահվել։ Սակայն, նկատի առնելով Աստվածածին հուշարձանի շինության կատարման մասին եղած № 19 արձանագրության ՈՁԶ և ժամատան մուտքի ճակատաքարի վրա փորագրված Հայրուտի արձանագրության ՁԺ թվագրերը, պարզ է, որ այս հուշարձանը շինված է 1237—1261 թվականների ժամանակամիջոցում, Հովհաննես Տուեցու օրոք, որի անունը հիշատակում է Հայրուտը։

(Շարունակելի)

ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ԱԹԱՆԱՍՅԱՆ

ԻՄ ԱՇԱԿԵՐՏԵԼԻՍ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔՈՒՄ ԵՎ ՄՈՒՇԻ Ս. ԿԱՐԱՊԵՏՈՒՄ

Ի. ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՍ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Լաթսունական թվականի գարնան սկիզբն էր։ Մի օր Երևանի Կոնդ կոչված թաղամասից իջնելով քաղաք, ինչ որ մի գործով մտա Բունիաթյանների խղճուկ և անփառունակ իջևանատունը։ Այստեղ ապաստանում էին Գարսկաստանի խոյ և Մարաղա քաղաքներից եկած պարսիկ արհեստավորները, որոնք վաճառքի համար կոպիտ բրդից թաղիքներ և կլոր թասակներ էին պատրաստում։ Իջևանատանն իմ ուշադրությունը գրավեցին եվրոպական տարազ հագնված երկու երիտասարդներ։ Մտածեցի՝ գուցե սրանք էլ պարսիկներ են, որոնք եկել են իրենց հայրենակիցներին տեսության և այստեղ մի քանի օր մնալուց հետո, պիտի Տփխիս կամ մի այլ քաղաք ուղևորվեն։ Այնուամենայնիվ, իմ հետաքրքրությունը շարժվեց։ Ուղիղ գնացի մտա այն հյուղատունը, որտեղ քիչ առաջ տեսել էի երկու ինձ համար անծանոթ մարդկանց։ Ողջունեցի։ Նրանք հարդանքով ոտքի ելան և բարևեցին հայերեն։ Միմյանց ձեռք տվինք, ծանոթացանք։ Իմ առաջին հարցին՝ թե ո՞ւմ հետ պատիվ ունեմ ծանոթանալու, նրանք, ժպտալիր, պատասխանեցին, որ իրենք Խրիմյան Հայրիկի աշակերտներն են, եկել են Վանից, որպեսզի դնան Տփխիս, Գանձակ, Ղարաբաղ՝ Վարագում հրատարակվող «Արծիվ Վասպուրականի» թերթի համար բաժանորդներ գտնելու։

Հյուղում նստելու տեղ չկար։ Ես, ներողություն խնդրելով դուրս եկա, ասելով, որ իսկույն կվերադառնամ։ Նրանք երևի շատ զարմացան իմ այս անսպասելի երևալու և անմիջապես դուրս գնալու վրա...։ Այնինչ՝ ես դուրս գալով հյուղից, մի ծանոթ տղայի ուղարկեցի կառքի հետևից։ Կառքը չուտով դուռն առջև կանգնեց։ Ես ներս մտա և նրանց հրավիրեցի կառք նստել՝ մեզ մոտ հյուր տանելու նպատակով։ Նրանք լսեցին։ Օտարականներից մեկը Գարեգին Սրվանձտյանն էր, իսկ մյուսը՝ Հաջի Միքայելը։ Կառքը շարժվեց դեպի Կոնդի դարիվերը։ Ճանապարհին ես դիտել տվեցի, որ նրանք անհարմար տեղում են իջևանել։ Կառքը եկավ և կանգնեց մեր երկհարկանի տան դուռն առջև։ Ես հյուրերիս ներս տարա մեր յոթ սենյակից բաղկացած բնակարանը, կահավորված եվրոպական և ասիական կահկարասիքով ու արդուզարդով։ Ես նրանց ցույց տվեցի մեր դահլիճը և նրան կից մի սենյակ, որտեղ դրված էին մահճակալներ, իսկ պատերի և հատակի վրա փռված ու կախված պարսկական գորգեր, և խնդրեցի մեզ մոտ մնան այնքան ժամանակ, ինչքան նրանք Երևանում են լինելու։

— Ահա՛ և ձեր պատվին արժանի ենջարանը,— ասացի ես։

Իմ հյուրերի ուրախությանը սահման չկար։ Գարեգին Սրվանձտյանը լրջամիտ և ծանրաբարո անձն էր, իսկ Հաջի Միքայելի երեսից ծիծաղն ու ժպիտը չէին պակասում։

Երեք օր նրանք մնացին մեզ մոտ և հյուրասիրվեցին։ Ես նրանց տարա իմ մի քանի ծանոթ բարեկամներիս մոտ այցելության. ամեն տեղ պատշաճ պատիվ ցույց տրվեց նրանց։ Երեք օրից հետո, հյուրերս ճանապարհվեցին։ Բայց նախքան հեռանալը, Գարեգին Սրվանձտյանը իմ մայրս Խրիմյան Հայրիկին գրեց մի շատ սիրուն նամակ և միջնորդեց ինձ ընդունելու Վարագա ծառանգավորաց վարժարանը որպես աշակերտ։ Ինձ խոստացան, որ վերադարձին կրկին

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

կանցնեն Երևանով, կվերցնեն ինձ և կճանապարհվենք Թավրիզ—Սալմաստ—Վան ճանապարհով դեպի Վարագ։

Այդպես էլ եղավ։ 1860 թվականի ամռանը նրանք Ղարաբաղից եկան Ագուլիս, իսկ այդտեղից Հին-Նախիջևանի վրայով՝ Երևան։ Ինձնից շատ գոհ մնացին, երբ տեսան, որ ես «Արծիվ Վասպուրականիի համար բավականին բաժանորդներ եմ ճարել և բաժանորդագրման դումարները կանխիկ ստացել։

«Արծիվ Վասպուրականիի բաժանորդագրությունը բավականին հաջող էր ընթացել Ղանձակում, Ղարաբաղում և Ագուլիսում։

Երևան վերադառնալիս, նրանք ամաչել էին կրկին մեզ մոտ կանգ առնել, իջևանել էին մի անշուք հյուրանոցում, որը, համեմատաբար, ավելի պատվաբեր էր, քան Բունիաթյանների կեղտոտ իջևանատան ցած ու խոնավ հյուղը։

Սրվանձտյանը և Հաչի Միքայելը, հենց իրենց վերադարձի օրը, եկան ինձ մոտ այցելության։

Վերադարձի այդ այցելության միջոցին, Գարեգին Սրվանձտյանի առաջին խոսքը եղավ այն ավետավոր լուրը՝ թե դեռևս Ղարաբաղում, ի պատասխան իր կողմից գրած դիմության, Խրիմյան Հայրիկը հայտնել է իրեն, որ ինձ ընդունում է սովորելու Վարագա ժառանգավորաց դպրոցը։ Այդ ասելով, Սրվանձտյանը ծոցից հանեց Հայրիկի նամակը, ուր ասված էր մոտավորապես հետևյալը. «Երանի՞ թե մեզ մոտ ալ գտնվեր հարուստ մը Վազարյան տոհմին պես, որ ընծայաբերեր այնպիսի գումար մը, որ մենք ընդարձակելով մեր Վարագա դպրոց, ի վիճակի բլլայինք Ռուսաստանեն, Պարսկաստանեն և այլ վայրերեն աշակերտներ ընդունել...»։ Այնուհետև Սրվանձտյանը պատմեց, թե իրենք ի՞նչ սիրալիր ընդունելություն են գտել իրենց այցելած վայրերում, առավել ես Ղարաբաղում։

2. ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻՑ ԴԵՊԻ ՍԱԼՄԱՍՏ

1860 թվականի օգոստոս ամսի սկզբին, Սրվանձտյանի և Հաչի Միքայելի հետ որոշել էինք փոստային սայլակով ուղևորվել դեպի Ջուլֆա, բայց երբ լսեցինք, որ Երևանցի Հայտնի վաճառականներից մոտ ութ հոգի ֆուրգոններով են գնալու մեր ճանապարհով, Երևանցի մի վաճառականի հետ մենք էլ մի ֆուրգոն վարձեցինք և պատրաստվեցինք ճանապարհվելու։ Մերոնք, հորեղբորս հետ, Դարաչիչակի Ալափարս գյուղը ամառանոց էին գնացել, ուստի, մինչև ճանապարհվելս, պետք էր, որ գնայի մերոնց մոտ հրաժեշտ տալու։ Եվ ահա, ձիով Երևանից վաղ առավոտյան դուրս գալով, հասա Ալափարս։ Հորեղբայրս, իմանալով իմ մտադրությունը, հավանություն չտվեց, խորհուրդ տվեց, որ ես հետ կանգնեմ Վան գնալու մտադրությունից, բայց ես համառեցի։ Երբ տեսավ, որ է՛լ ճար չկա, իր մոտ ունեցած 100 ռուբլուց 50-ը տվեց ինձ, և ես վերադարձա նորից Երևան։

Ալափարսից վերադառնալու հաջորդ օրը, դեռ լույսը չբացված, Երևանի Գյուրջի կոչված իջևանատնից ճանապարհ ընկանք և Երեկոյան դեմ հազիվհազ հասանք Դավալու գյուղը, որը գտնվում էր Երևանից 40 վերստ հեռավորության վրա։ Այնուհետև մենք անցանք Հին-Նախիջևան, իսկ այնտեղից՝ Ջուլֆա։ Հաջորդ օրը Ջուլֆայից լաստառագաստով անցանք Մայր Արաքսը ու դուրս եկանք Պարսկաստանի վրա։ Այնուհետև փոստային կայարանից ժամը 11-ին ճանապարհ ընկնելով, երեկոյան դեմ հասանք Մարանդա գյուղաքաղաքը։ Մեզ մնում էր այստեղից անցնել Թավրիզ։ Գիշերը անցկացրինք Մարանդայում, որը բավականին կոկիկ քաղաք էր։ Այստեղ կային խաղողի այգիներ, տանձ, կարմիր խնձոր, ձմերուկ և այլ պտուղներ։

Հաջորդ օրն առավոտյան դուրս եկանք և ճաշից քիչ անց, արդեն Թավրիզումն էինք։ Իջևանցինք խանի իջևանատանը։ Օգոստոսի 15-ին, Աստվածածնա վերափոխման տոնին, գնացինք եկեղեցի, շապիկ հագանք, երդեցինք։ Ժողովրդի մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ։ Պետք է ասել, որ Հաչի Միքայելը շատ լավ բարիտոն էր և գուրեկան ձայն ուներ։ Այդ օրվա մեր ժամերգության մասնակցելը, մանավանդ երբ իմացան, որ ընկերներս Խրիմյան Հայրիկի աշակերտներից են, եկել են Թավրիզ, որպեսզի Սալմաստի վրայով գնան Վան, մեծ հետաքրքրություն առաջացրեց ժողովրդի մեջ։ Կազմակերպվեց ընդհանուր հանգանակություն և տրվեց ճաշկերույթ մի թյուրք հայու այգում, ստվերաթիտ սոսու տակ։ Գարեգին Սրվանձտյանը և Հաչի Միքայելը, իրենց շատ ազդու և ճարտար ատենախոսությամբ, հոգեզմայլանք առաջացրին ժողովված մարդկանց շրջանում։

Թավրիզում, տասը օր վայելելով տեղի հասարակության կողմից ցույց տված սիրալիր հյուրասիրությունը, վերջապես, սրտառուչ զգացմունքներով, բաժանվեցինք։ Վաճառականներից մի խումբ, ոոն եկել էր Անդրկովկասի տարբեր քաղաքներից, եկավ մեզ ճանապարհելու մինչև Դալայ։

Ղալայում երկար չմնացինք։ Հաջորդ օրը առավոտյան, մինչ մենք թեյի բաժակները առաջներիս խմում էինք, նկատեցինք, որ

դիմացի թյուրք գյուղի կողմից դուրս եկան մի քանի երիտասարդներ, որոնք մտադրաղ առաջ էին գալիս դեպի մեզ։ Սրանք թվով հինգ հոգի էին։ Մեզ առաջնորդող թյուրք ջուվլադարը [1], որը ջահել մարդ էր, ինքն ևս նկատելով դեպի մեզ եկող երիտասարդ թյուրքերին, մոտեցավ մեզ և ցածրաձայն զգուշացրեց, որ այդ եկողները օրինավոր մարդիկ չէին, ապա դառնալով ինձ, ասաց.

— Աղա՛, հենց որ նրանք մոտենան, դու ինձ վրա քարկացի՛ր և մի երկու ապտակ էլ հասցրո՛ւ երեսիս և ռուսերեն ինձ մի լավ հայհոյի՛ր...։

Այդ առաջարկը ինձ համար թե՛ հասկանալի եկավ և թե՛ շատ դուրեկան, և երբ մեզ հետապնդող այդ թյուրքերը, 15—20 քայլ հեռու կանգնած, դիտում էին մեզ, ես հանկարծ վեր թռնելով տեղից, ռուսերեն հայհոյելով, մեր թյուրք ջավլադարին երկուերեք ապտակ հասցրի, այնպես, որ խեղճ մարդու փափախը նույնիսկ վայր ընկավ գետին։

Թյուրք երիտասարդներն այս պատկերը տեսնելով, մեր ջավլադարին իրենց մոտ կանչեցին և սկսեցին հարցուփորձ անել, թե այդ ովքե՞ր էին, որ համարձակություն ունեցան Պարսկաստանի մեջ մուսուլմանին ապտակել և հայհոյել։ Մեր պատվական ձիապանը, որին Հասան էին կոչում, երկյուղածությամբ ասում է, որ իրեն ծեծողը և հայհոյողը ռուսաց դեսպանի եղբորորդին է, որը գնում է Սալմաստ։

Երևի իմ շեկ մազերս, կապույտ խած աչքերս և եվրոպական հագուստս նրանց մեջ ո՛չ մի կասկած չթողեցին և նրանք շուտով մեզանից հեռացան։

Այդ դիշեր, շնորհիվ մեր ձիապանի քարեկամության և խելացի տնօրինության, մենք անվտանգ ու հանգիստ քնեցինք, չնայած գտնվում էինք մի վայրի դաշտում։ Հետևյալ օրը հասանք Սալմաստ և փչանեցինք տեղի եկեղեցու երեցփոխի տանը, որը Խրիմյան Հայրիկի լավ ծանոթն էր և մեզ մեծ սիրով ընդունեց։

3. ՍԱԼՄԱՍՏԻՑ ԴԵՊԻ ՎԱՆ—ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔ

Մեզնից շաբաթներ առաջ Փուրգոնով Սալմաստից դուրս էին եկել մի ուրիշ խումբ մարդիկ, որոնց, լսեցինք, տեղի քուրդերը ճանապարհին թալանել էին և քանի որ այդ նույն քարավանի հետ գտնվում էր և մեր ճանապարհի նախկին ընկեր վանեցի վաճառականը, հետևապես նա էլ էր թալանի ենթարկվել։

Մեզնից անտեսանելի մի սարկավագ, ճանաչելով Գարեգին Սրվանձտյանին և Հաջի Միքայելին, տեսնելով նաև իրեն համար անծանոթ մի երիտասարդի՝ ինձ, մի քառորդ ժամ շուտ վանք հասնելով, հայտնել էր մեր գալստյան մասին, և մինչ մենք, ձիերիս սանձը քռնած, ոտքով բարձրանում էինք Վարագա լեռան սիրուն, կանաչազարդ ու ծաղկուն դարիվերը, հանկարծ, մեզնից անսպասելի, Վարագա Ծառանգավորաց վարժարանի մի ամբողջ խումբ, 30—40 հոգի, խնդությամբ, շրջապատեցին Սրվանձտյանին և Հաջի Միքայելին, որոնք նրանց ուսուցիչներն էին։

Գարեգին Սրվանձտյանի և Հաջի Միքայելի հետ նրանք գրկախառնվում էին որպես երկար ժամանակ ծնողներին չտեսած երեխաներ։ Սրվանձտյանը, ցանկանալով ինձ ևս անմասն չթողնել այդ ուրախությունից, մի առ մի ինձ ներկայացրեց իր աշակերտներին, որոնք քաղցրությամբ մոտենում էին, և չնայած իմ փուռն դիմադրության, քաշելով ձեռքս համբուրում։

Աշակերտներից անմիջապես հետո, մեզ ընդառաջեցին ուսուցիչներ Մեսրոպ և Եղնիկ վարդապետները, Մելքոն վարժապետը, Վերջինս, իր հասակի կարճությամբ պատճառով, Հայրիկից ստացել էր «Պարթև» մականունը. նրան բոլորը «պարոն Պարթև» էին կանչում։

Վանքի մոտիկ մեզ ընդառաջեց մեր պաշտելի Խրիմյան Հայրիկը, վիթխարի հասակով, շատանավագույն թավ մորուքով, արծվի քթով, կաթնագույն կաշվով, շատ գրավիչ և դուրեկան արտաքին տեսքով մի անձնա-

[1] «Ջավլադար»— ձիապան, որն ապրանքի բեռ է փոխադրում։

վորություն, որի գեղեցկության նկարագիրը իմ գրիչը դժվարանում է տալ։

Ես մոտեցա Հայրիկին և, չնայած նրա ընդդիմադրությանը, ջերմորեն համբուրեցի ոտքը, ասելով.

— Անցյալ տարի (1859 թվականին) երեվանից հատկապես Տփխիս եկա Ձեզ տեսնելու, Ձեր աջը համբուրելու նպատակով, բայց այդ միջոցին Դուք մեկնած էիք Տփխիսից Գանձակ, Ղարաբաղ. այժմ իմ վաղեմի բաղձանքը կատարվեց։

— Թող այդպես ըլլա, համբուրե՛,—ասաց Հայրիկը։

4. ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔԸ

Խրիմյան Հայրիկը հիմնելով Վարագա ժանգում ժառանգավորաց վարժարանը և հրատարակելով «Արծիվ Վասպուրականի», նպատակ ուներ նոր լույս սփռել Հայաստանի այդ խավ անկյունի վրա։

բարձր, առատահոս մի աղբյուրի մոտ։ Վանքի դիմաց, ավելի քան 350 դեսիատին[2], քիչ թեք դաշտավայր էր տարածվում, իսկ հանդեպը՝ Վանա կապուտակ լիճը, որն ահագին եկամուտ էր տալիս վանքին։



Վարագա վանքի ընդհանուր տեսարանը

Իսկապես ասած, Վարագա վանքը, իր ճարտարապետական տեսքով, մի առանձին շքեղություն չուներ ո՛չ ներսից և ո՛չ էլ դրսից, ինչպես ունեին Ս. Հովհաննու վանքը Ծաղկաձորի (Կեչառուփ), Ս. Գրիգոր և Ս. Նշան եկեղեցիները, Հաղբատի և Սանահինի վանքերը Լոռու գավառում և այլն։ Բայց Վարագա վանքի դիրքը հիանալի էր։ Նա գտնվում էր մոտ 2.500 ոտնաչափ ծովի մակերեսից

Սիրուն ծառատունկ պարտեզը, վանքի շուրջը գտնվող շենքերը և պարիսպը, նորոգված յոթը ավերակ մատուռների քարերից, քիչ թե շատ բարեկարգություն էին տվել վանքի արտաքին կազմվածքին։

---

2. «Դեսիատին»— տարածության ռուսական չափ է, որը հավասար է 1,093 հեկտարի։

5. ՎԱՐԱԳԱ ԴՊՐՈՑԸ

Վարագա դպրոցը, որը երկհարկանի մի շենք էր, կառուցված էր պարիսպներից դուրս։ Նա ուներ 30 կանգուն ճակատ, 20 կանգուն լայնություն և մոտ 10 կանգուն բարձրություն, միջակ և չափավոր լուսամուտներով։

Շենքը իր մեջ պարունակում էր երկու ընդարձակ Դահլիճ և երկու սենյակ։ Ներքին հարկում տեղավորված էր նեջարանը, հասարակ մահճակալներով, անբարեբարդ և անպաճույճ անկողիններով, իսկ վերին հարկի դահլիճներում գտնվում էին նստարաններ և դրատախտակներ։ Այստեղ պատերին կախված էին աշխարհագրական քարտեզներ և բնագիտության վերաբերյալ մի քանի պլակատներ։ Շենքի ճակատին, ներքին հարկի դեպի արևմուտք գտնվող սենյակում գտնվում էր հանդերձարանը, իսկ վերին հարկի հուլնպես արևմտյան սենյակում գտնվում էր գրադարանը, որտեղ ապակյա դռներով պահարաններում դրված էին գրքեր։ Սենյակի մի անկյունում դրված էր Վենետիկում տրպված մի մեծ երկրագունդ (գլոբուս)։ Ինչ վերաբերում է դպրոցում դասավանդելի առարկաների բաշխմանը ուսուցիչների մեջ, այդ հետևյալ կերպով էր կատարվում. կրոնի և բարոյագիտության դասերը ավանդում էր Խրիմյան Հայրիկը, հայոց լեզուն և պատմությունը՝ Գ. Սրվանձտյանը, աշխարհագրությունը՝ պարոն Մելքոնը, թվաբանությունը և բնագիտությունը՝ Մեսրոպ վարդապետը, եկեղեցական շարականագիտության առարկան՝ Եղնիկ վարդապետը, վայելչագրության և գծագրության առարկան՝ Հաչի Միքայելը։ Վերակացուի պարտականությունը տրված էր եղբայր Արտակին, որը դեմքով մի շատ ծաղրածու անձն էր, բայց զրուցասեր էր և ուներ լավ բնավորություն, միշտ զվարթ և ուպախ տրամադրության մեջ էր։

Խրիմյան Հայրիկի կարգադրությամբ, ես տեղավորվեցի Գարեգին Սրվանձտյանի սենյակում, որտեղ գրվեց մի փայտյա մահճակալ լավ անկողինով։ Այդ սենյակում կային մի սեղան, երկու աթոռ, մի պատի ժամացույց, սեղանի մի փոքր հայելի և մի անշնորհք պահարան գրքերի համար։

Ես պարապում էի սենյակում, իսկ վարժարանի դասերին երբեմն-երբեմն ունկընդրում։ Աշակերտական խումբը միշտ այն կարծիքին էր, թե ես ձկած եմ Ռուսաստանից, որպեսզի դասավանդեմ ռուսաց լեզու և սպասում էին, թե ե՞րբ պետք է սկսեմ պարապմունքները։ Բայց, նախ որ ես ռուսաց լեզվին այնչափ չէի տիրապետում, որ կարողանայի դասավանդել և երկրորդ, եթե նույնիսկ կարողանայի պարապել, դա այն ժամանակ վտանգավոր էր՝ Օսմանյան կառավարությունը հետապնդում էր։

Իմ Վարագ գալստյան մեկ տարին բոլորեց։ Եկավ 1861 թվականի սեպտեմբեր ամիսը։ Նախընթաց 60-ական թվականին, Մուշի նահանգի հայ ազգաբնակչությունն իր մելիքներով, տանուտերներով և Ս. Կարապետի հռչակավոր վանքի միաբանությամբ, մի առանձին հանրագրությամբ դիմել էին Կոստանդնուպոլսի Ազգային ժողովին և պատրիարքին ու թախանձագին խնդրել, որ Խրիմյան Հայրիկին իրենց վիճակի վրա առաջնորդ կարգեն և միաժամանակ Ս. Կարապետ վանքի վանահայր նշանակեն։ Թե՛ Պատրիարքարանը և թե՛ Ազգային ժողովը չէին կարող մերժել Մուշի ժողովրդի խնդիրը. նամանավանդ, երբ Կուսանդնուպոլսից ավելի քան 15—20 հոգի մարդիկ միշտ Պատրիարքարանի դռները լցված, իրենց ճնշումն էին գործադրում պատրիարքի և Կրոնական ու Ազգային ժողովների վրա։

Մի բարի օր, մշեցի երեք պատգամավորներ Վարագ եկան՝ բերելով թե՛ Ազգային ժողովի վճիռը և թե՛ պատրիարքի կոնդակը։

Շատ ափսոսում եմ, որ «Մասիս» օրաթերթի առաջնորդող հոդվածը՝ Խրիմյանի Մուշի առաջնորդ նշանակվելու մասին, պահած չունեմ, ուր տեսնեիք թե ի՞նչ աստիճանի մեծ համակրությամբ և սիրով էր լցված Մուշի ժողովուրդը դեպի Խրիմյանը։ Այդպիսով, Մուշ գնալու և Ս. Կարապետ վանքի վանահայրության հարցը լուծված էր։ Հայրիկը, Գարեգին Արվանձտյանի, Հաչի Միքայելի և եղբայր սարկավագների հետ միասին, պետք է ուղևորվեր Մուշի Ս. Կարապետի վանքը։ Մնում էր ինձ ես կողմնորոշվել՝ մնալ Վարագո՞ւմ և նրա ժառանգավորաց

վարժարանում, թե՞ այդ հեռացող խմբին միանալ և գնալ Ս. Կարապետ։ Բայց չէ՞ որ Վարագում փոքրիշատե կանոնավոր դպրոց կար իր ուսուցիչներով, իսկ Ս. Կարապետում ամեն ինչ նոր պետք է կազմակերպվեր Խրիմյան Հայրիկի՝ նոր առաջնորդի միջոցով։ Սակայն ինքս իմ մեջ մտածում էի՝ եթե իմ նպատակը լիներ ավելի ուսում և գիտություն ձեռք բերելը, չէ՞ որ այդ նպատակին հասնելու համար, ինձ պետք չէր Վան—Վարագ ճանապարհվել, չէ՞ որ նույնը կարելի էր ձեռք բերել Երևանում կամ Տփխիսում, բայց չէ՞ որ ես եկած եմ Վան—Վարագ՝ Խրիմյան Հայրիկին աշակերտելու, նրա հայրենասիրական և վառ ազգասիրական շնչով սնվելու, նամանավանդ, որ Գարեգին Սրվանձտյանի ընծիր արժանիքները տեսնելով, նրանից օգտվում էի։ Ուստի և իմ այս մտքերը հայտնեցի Մեսրոպ վարդապետին։ Նա իր կողմից հայտնել էր Հայրիկին, որը հավանություն էր տվել և ես, այդպիսով, միացա Մուշ գնացողների խմբին։

Խրիմյան Հայրիկի՝ Ս. Կարապետ վանքի վանահոր և Մուշի վիճակի առաջնորդի պաշտոնում նշանակման լուրը տարածվելով, Վանի մի քանի հայտնի անձինք, որոնց թվում նաև Վանում հայտնի Շարա բեկը և տեղի առաջնորդը եկան Հայրիկին հրաժեշտի տեսակցության և այստեղ պատշաճ հյուրընկալություն և հյուրասիրություն գտան։

Մեր ճանապարհվելուց մի քանի օր առաջ, Հայրիկն ինձ ասաց.

— Պարո՛ն Նահապետ, չե՞ք ցանկար արդյոք Վան քաղաք գալ և մեր Այդեհատան տեսնել ու նորին վերադառնալ։

— Ամենայն սիրով և ուրախությամբ,— պատասխանեցի ես ժպտադեմ։

Հայրիկը հրամայեց իր ձին պատրաստել և վանքի մի ծառայի հետ դնելով և մի նամակ էլ Թերլեմեզյան Մկրտիչ աղայի վրա գրելով, մյուս օրը ճանապարհ դրեց ինձ Վան։ Այստեղ, Վանում, ինձ ամենից շատ դուր եկավ Այդեհատան արվարձանը, որն ամենից ընտիր թաղն էր։ Վանում ես իջևանեցի Մկրտիչ աղայի տանը, որն ինձ ընդունեց սիրալիր։ Նախաճաշից հետո նրա հետ միասին գնացինք քաղաքը շրջագայելու։ Մկրտիչ աղան միակ մարդն էր, որը ջերմ սիրով սիրում և հարգում էր Խրիմյան Հայրիկին և նյութական կարող ունեցած միջոցին, փոխարինաբար և կամ հենց այնպես բացում էր իր առատաբաշխ քսակը և օգնում իր պաշտելի Հայրիկին։

Կարծեմ, հենց այդ ճանապարհորդության համար, Մկրտիչ աղան 150 ռուբլու չափ դրամ տվեց Հայրիկին, գիտենալով, որ մշեցի պատգամավորների բերած դրամը չի բավարարի։

Եվ, այսպիսով, 1861 թվականի սեպտեմբեր ամսի 15-ին, մենք պատրաստ էինք ճանապարհ ընկնելու։ Նախքան այդ, Հայրիկը վանական և դպրոցական կառավարման համար մի հիանալի կանոնադրություն էր գրել։ Նա եկավ դպրոցի դահլիճը, ուր վաղօրոք դրված էր բազկաթոռ, նստեց ու սկսեց կարդալ կանոնադրությունը, ապա տալով այդ Մեսրոպ և Եզնիկ վարդապետներին ի գործադրություն, ոտքի կանգնեց և հիշեց Փրկչի այն խոսքը, որն ասել էր նա Երուսաղեմի վերնատան խորհրդավոր ընթրիքի ժամանակ իր աշակերտներին. «Գացեք լիս և ես ի ձեզ։» Այս խոսքերը Հայրիկն արտասանեց այնպիսի զգացմունքով, որ ամենքը հուզվեցին և արտասվեցին... Դրանից հետո, ամենքը մոտենալով Հայրիկին, համբուրեցին աջը և արտասուքը աչքերին ճանապարհ դրին դեպի Ս. Կարապետ։

(Շարունակելի)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ—ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

10. ԵՐՋԱՆԻԿ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԸ

Իսկապես երջանիկ են հայրենադարձները։ Ջնայած, որ վերջին զանգվածային հայրենադարձությունից ի վեր հազիվ անցել է 4—5 տարի, նրանք՝ հայրենադարձները, արդեն իսկ թոթափել են օտարության ամեն մի դրոշմ և դարձել իսկական սովետական քաղաքացիներ, կենտրոնական երջանիկ։ Նրանց դեմքերի վրա այլևս չի նկատվում անհայրենիք մարդկանց հատուկ տրտմության որևէ նշույլ։ Ընդհակառակը, հայրենադարձների յուրաքանչյուր շարժումնի և արտահայտության մեջ փայլում է սովետական նախաձեռնության փառավոր ոգին, դիտակից աշխատանքով լավագույն և առատ արտադրելու վճռակամությունը։

Համարյա ամեն հիմնարկում պատվավոր տեղ են գրավել նրանք՝ հայրենադարձները, բանվոր թե արհեստագործ, ուսանող թե ուսուցիչ, կոլտնտեսական թե ծառայող։

Ինչպես Երևանի կենտրոնում, նույնպես և նրա արվարձաններն եղող Նոր-Արաբկիրում, Նոր-Ջեյթունում, Նոր-Մարաշում, Սարիթաղում, Նոր-Արեշում, Սովետաշենում, Նոր Բյուրնանիայում, Նոր-Խարբերդում, Նոր-Մալաթիայում, Նոր-Կիլիկիայում բնակվող հայրենադարձներն էլ, յուրաքանչյուր սովետական քաղաքացու նման, անչափ եռանդով են լծվել ստեղծագործ և արդյունաբեր աշխատանքին, լավագույնն ու շատն արտադրելու գործին։

Իսկապես երջանիկ են հայրենադարձները։ Նրանց երջանկության անհունությունն ինձ նշեց հայրենադարձ որմնադիր վարպետ Սողոմոն Արծիվյանը, որն եկել էր ինձ բարի գալուստ ասելու։

Ես Հալեպից ճանաչում էի վարպետ Սողոմոնին, որի գլխից շատ տաք ու պաղ բաներ էին անցել արտասահմանում։ Նա տեսել էր իր ծննդավայրի՝ Եդեսիայի (Ուրֆայի) հայության կրկնակի փոտորածներն ու կոտորածներից հրաշքով ազատված հայերի տարագրվելը՝ թյուրքերի ձեռքով։ Նա ականատես էր եղել ամերիկացի միսիոնարների կեղծավորությանը՝ հայ որբերի և որբևայրիների հանդեպ, ինչպես նաև գաղութարար ֆրանսիացիների անարդար վերաբերմունքին՝ Սիրիայում ապաստան գտած հայ գաղթականների հանդեպ։ Մանավանդ նա երկար տարիներ աշխատել էր Հալեպի հարուստ կալվածատերերի հատուկ շենքերի կառուցման գործում, բայց էլի մնացել էր մի հասարակ որմնադիր։

1947 թվականի ամառը, վարպետ Սողոմոնն իր ընտանիքով ներդաղթեց Սովետական Հայաստան, իր կյանքի մնացած տարիներում Հայրենիքի շինարարական գործերի մեջ աշխատելու հաստատ առաջադրանքով։

Մեծ եղավ իմ ուրախությունը, տեսնելով վարպետ Սողոմոնին ավելի հաղթահասակ ու առողջ, ավելի երիտասարդացած քան էր Հալեպում։

— Արտասահմանում մեր կյանքն իզուր է անցել,— ասում է վարպետ Սողոմոնը,— այստեղ՝ Սովետական Հայաստանում է, որ ես հասկացա կյանքի իսկական արժեքն ու իմաստը։

1. Շարունակված ամսագրի 1952 թվականի հուլիսի և օգոստոսի համարներից։

Եվ մի խորը շունչ քաշելուց հետո, նա շարունակում է ավելի խանդավառված.

— Այնտեղ, Սիբիրում, իմ կառուցած բազմաթիվ շենքերի համար ո՛չ մի նյութական և հոգեկան բավականություն չեմ ստացել երկար տարիների ընթացքում, իսկ այստեղ, հենց նոր ոտք կոխած, իմ աշխատանքը լրիվ գնահատվել է։ Ո՛չ միայն թեկուզ մի օր անգործ չեմ մնացել, ո՛չ միայն լայնորեն ապրվել է իմ ընտանիքը՝ իմ վաստակի արդյունքով, ո՛չ միայն կառուցել եմ իմ սեփական բնակարանը և ստեղծել տնտեսություն, այլ միանգամայն ընտրվել աշխատավորների դեպուտատ։

Արտասահմանում իր ապրած վաթսուն տարիների վրա մի ուրիշ վաթսուն տարի ևս ապրեր վարպետ Սողոմոնը, արդյո՞ք կարող էր ո՛չ թե դեպուտատ, այլ պարզ թաղական ընտրվել, կամ ունենալ նյութական ու հոգեկան այն բավականությունը, որն ունի նա այժմ Սովետական Հայաստանի սոցիալիստական մայրաքաղաք Երևանում։— Թնավ երբե՛ք։

Հալեպում հասարակ որմնադիր մնալու դատապարտված վարպետ Սողոմոնը, սովետական Երևանում կարճ ժամանակվա ընթացքում դեպուտատ է ընտրվել, որովհետև սովետական կարգերի տակ աշխատավորների հորիզոնը շատ ընդարձակ է և արժեքը՝ բարձր։ Այստեղ, բոլոր մարդանց համար աշխատելու, առաջադիմելու, զարգանալու լայն ասպարեզ կա։ Այստեղ, անխտրաբար բոլոր մարդկանց աշխատանքը պաշտպանող և լրիվ գնահատող կառավարություն կա։

Այստեղ, վարպետ Սողոմոնը նյութական և հոգեկան բավականություն ունի, որովհետև հայրենի հողի վրա, իր սեփական բնակարանում ապրած և իր տնամերձ այգու համեղ պտուղներն ու սննդարար բանջարեղենները ճաշակած ժամանակ նա զգում է, որ իր արդար վաստակն է ճաշակում, որովհետև վարպետ Սողոմոնը, Լենինի հրապարակում թե Երևանի լայնարձակ պողոտաների վրա, իր և իրեն նման վարպետ որմնադիրների հմուտ ձեռքերով բարձրացող հոյակապ հիմնարկների և բնակելի շենքերի մեջ տեսնում է բանվոր դասակարգի հաղթանակը, աշխատավոր մասսաների երջանկությունը, լուսավոր ապագան։

Աշխատավորների դեպուտատ վարպետ Սողոմոն Արծիվյանի աչքերում շողշողացող երջանկությունն ինձ հիշեցրեց Բելգրադում Անդրնահրի մեծ կամրջի կամ Բուդի հրապարակի վրա վաղ առավոտյան շարված բանվորներին։ Այդ թշվառները բահ ու բրիչ, ուրագ ու սղոց շալակած սպասում էին, որ գար մի կալվածատեր և ընտրեր իրենց միջից ամենազորավոր, ամենաերիտասարդ, ամենավարպետ և... ամենաէժանագին բանվորն ու արհեստավորը։ Մարդկային ուժի ի՜նչքան անսիրտ շահագործում։

Այդ բանվորներից շատերը շաբաթներով սպասել են այդպես մի որևէ աշխատանքի համար, բայց առանց գործի տուն են վերադարձել հուսաբեկ և սրտակոտոր, անեծք կարդալով գործազրկություն ստեղծող և աշխատավոր մարդկանց շահագործող կապիտալիստների հասցեին։

Իսկապես երջանիկ են հայրենադարձները, որոնք, որպես հարազատ քաղաքացիներ, առարկա են Սովետական կառավարության ամենօրյա հոգատարությանը։ Եվ ինչքա՜ն ավելի երջանիկ պիտի լինեին նրանք, եթե մի ուրախ օր հայրենադարձության հատուկ մի նոր հրամանագրով, Սովետական բարեխնամ կառավարությունը վերջակետ դնել արտասահմանում ներկայի անապահովության և ապագայի անստուգության տակ հեծեծող հայ բանվորների անտանելի դրությանը։

***

Իմ ամենամեծ ուրախություններից մեկն եղավ տեսնել անձամբ ինձ ծանոթ հայրենադարձ ինտելիգենտներին՝ սովետական Հայրենիքին նվիրված գիտակից աշխատանքով և երջանիկ կյանքով։ Նրանց համարյա բոլորն էլ արդեն իսկ իրականացրել են իրենց իդեալը, դառնալով իրենց հետևած ասպարեզի մասնագետները։

Երբ, արտասահմանում, ամերիկա-անգլիական նենգամիտ դիվանագիտության ստեղծած քաղաքական և նյութական գժընդակ պայմանների ճնշման տակ խաթարվում, խամրում և փչանում է հայ մտավորականության կյանքը, այստեղ՝ Սովետական Հայաստանում, ամեն տարի նոր և ընտիր ուժերով՝ ուսուցիչներով, պատմագետներով, գիտնականներով, գրականագետներով ու բանաստեղծներով են հարստանում մայր երկրի մտավորականության շարքերը։ Այս ամբը, որի հավասարը որևէ ժամանակ չի ունեցել հայ ժողովուրդն իր պատմության ամբողջ ընթացքում, շատ բնական հետևանքն է Սովետական կառավարության, հատկապես մտավորականության նվիրած ուշադրության։ Շնորհիվ պետական այդ ուշադրության և ամենօրյա հոգատարության, օրեցօր զարե-

ռելավվում է մտավորականության կենցաղային մակարդակը և նպաստում մտավորականներին, որպեսզի նրանք ընդլայնելով իրենց մտահորիզոնը, դառնան Ստալինյան դարաշրջանին արժանի մշտակյաց ու փառավոր գործերի հեղինակներ։ Ահա թե ինչո՞ւ սովետահայ որևէ մի մտավորական՝ ուսուցիչ թե գրող, պատմաբան թե գյուղատնտես, գիտնական թե ճարտարապետ, շատ ավելի լիարժեք գործեր է արտադրում, քան արտասահմանում համապատասխան գծով աշխատող մտավորականը։

***

Նոր Արաբկիրում, Շիրվանզադեի անվան դպրոցում, աշխարհագրության դասատու է Թորոս Լուսինյանը, որն ուսուցիչ է եղել արտասահմանում, Ալեքսանդրետի (Սիրիա) և Սուրի (Լիբանան) ազգային դպրոցներում։

— Շատ գոհ եմ ու երջանիկ,— ասում է նա,— որ ես ուսուցիչ եմ եղել։ Ուրիշ ոչ մի ասպարեզ ինձ չպիտի պատճառեր հոգեկան այնքան բավականություն, ինչքան ուսուցչությունը, մանավանդ հայրենի երկրում և սովետական պդրոցներում։ Այնտեղ, արտասահմանում, տախտակաշեն «բարակոնների տակ ուսուցչություն անելը տաժանք էր, չարչարանք էր. այստեղ՝ Սովետական Հայաստանում, դպրոցները հաստատվել են ամենագեղեցիկ շենքերում, իսկ ուսուցիչներն ու աշակերտները վայելում են Սովետական կառավարության անդուլ հոգատարությունը։

Ակնարկելով իր սեփական բնակարանը և տնամերձ այգին, ուսուցիչ Լուսինյանն ասում է ժպտալով.

— Արտասահմանում, հայ ուսուցիչը երբևիցե տեր եղե՞լ է քնակարանի...։

Լուսինյանի այս ակնարկությունից ես պատկերացնում եմ նրա խղճահարությունն արտասահմանյան հայ ուսուցիչների մասին և երջանկությունը սովետահայ ուսուցիչների։

Շիրվանզադեի անվան երկսեռ միջնակարգ դպրոցում ֆրանսերեն լեզու և թվաբանություն է դասավանդում նաև տիկին Թեքարյանը, որը ծանոթ ուսուցչուհիներից է եղել արտասահմանում՝ Հալեպում (Սիրիա) և Տրիպոլիում (Լիբանան)։

Շահումյանի անվան իգական միջնակարգ դպրոցի ֆրանսերեն լեզվի ուսուցիչ է Հովհաննես Կոշկարյանը Հալեպից, որը միաժամանակ ատենակալ է Երևանի Սպանդարյանի ռայոնի ժողովրդական դատարանում։

Առաջավոր ուսուցիչներից է Տիրան Կարա-Սարգսյանը, որը Երևանի 28-րդ իգական միջնակարգ դպրոցի ֆրանսերեն լեզվի դասատուն է։

Այդպես երջանիկ է նաև Ալիշան Թայրամյանը, որը դասախոս է Երևանի Օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում, որտեղ նույն գծով պաշտոնավարում է նաև Հալեպից Գեղամ Շահինյանը։

Ուսուցչական ասպարեզում որոշ տեղ է գրավել Բեյրութից ներգաղթած Պարգև Շահբազը, որը պաշտոնավարում է Երևանի Մաքսիմ Գորկու անվան իգական միջնակարգ դպրոցում որպես ֆրանսերեն լեզվի դասատու։ Հեռակա կարգով նա այս տարի մասնակցելու է Օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի պետական քննություններին և ստանալու համապատասխան վկայական։ Պարգև Շահբազը զբաղվում է նաև գրական աշխատանքով։ Նա թարգմանություններ է կատարում ֆրանսիական գրականությունից։

Երևանի Զայկովսկու անվան 10-ամյա դպրոցում սոլֆեժի (ձայնավարժության) դաս է ավանդում Հրանդ Գեորգյանը, որը միաժամանակ ղեկավարում է Էջմիածնի Մայր Տաճարի կիրակնօրյա ուրբաթագրությունները (քարոզները)։

Միևնույն դպրոցում դաշնամուրի ուսուցչուհի է եգիպտոսից ներգաղթած Թագուհի Հակոբ Արամյանը։

***

Սովետահայ գրականությունն ամեն օր հարստանում է նորանոր ստեղծագործություններով։ Երիտասարդ նոր ուժեր, իրենց շնորհալի տուրքերը տալով, մտնում են գրականության բուրաստանից ներս և եռանդով աշխատում սովետահայ ժամանակակից գրականության վերելքի համար։ Ծուրաքանչյուր փանաատեղծ-գրող, արձակով թե լափածոյով, ջանադիր է լինում ճշգրտորեն նկարագրելու սովետական քաղաքավանդակ կյանքը, հեղինակելու լիարժեք ու մնայուն երկեր։

Գրական այս պանծալի առաջընթացի մեջ ուրախալի երևույթ է տեսնել հայրենադարձ գրողների ակտիվ մասնակցությունը։

— Հայաստան ներգաղթելուց հետո հրատարակվեց իմ «Մեր Հայաստանն էջ գրքույկը, 3.000 տիրաժով. հիմա ոչ մի հատ չունեմ ինձ մոտ,— ասում է Արիս Շաքլյանը, Արաբկիրի իր սեփական բնակարանում ընդունելով մեզ։

Երջանիկ է անշուշտ նա իր այս հաջողության համար, մանավանդ հիշելով արտասահմանում, որպես գրող իր կրած հուսա-

խաբությունները։ Ալեքսանդրեստում և Հաչեպում իր հրատարակած երեք գրքերը՝ (առաջին երկուսը՝ չափածո, երրորդը՝ արձակ) ո՛չ միայն օգուտ չէին բերել իրեն, այլև չէին ապահովել տպարանատիրոջ ծախսերը...»

— Հիմա աշխատում եմ ավարտելու՝ թեման Սիրիայի ռևոլուցիայի շրջանից վերցված՝ մի պատմավեպ՝ «Մուհի-էդ-Դինը», ասում է Շաքլյանն ու ինձ ներկայացնում դեռևս անավարտ պատմավեպի երեք հատորանոց ձեռագիրը։

Նոր Կիլիկիա թաղամասում, Զանգվի ափին, իր սեփական բնակարանն ունի Գրիգոր Գյուլյանը, որի բանաստեղծություններն մի մասը հրատարակվել է «Հայրենիք» անվան տակ, արժանանալով գնահատանքի։ Գյուլյանը անդամ է Սովետահայ գրողների միության, միաժամանակ աշխատում է Հայկոոպի Առևտրի տեխնիկումում որպես գրադարանավար և ֆրանսերեն լեզվի դասատու։

Զանգվի ափին իր տունն է կառուցում նաև Արամ Արմանը (Սուրեն Բասմաջյան), որի քերթվածներից գնահատված նմուշներ թարգմանաբար հրատարակվել են սովետական ժողովուրդների զանազան լեզուներով։ Արմանը Գրողների միության անդամ է և միաժամանակ աշխատում է որպես սրբագրիչ 2-րդ տպարանում, որտեղ աշխատում է նաև Հալեպից ներգաղթած Պետրոս Պարգևը։

Պրոֆեսիոնալ գրող է Գրիգոր Քեշիշյանը, որի արձակ ստեղծագործությունները (պատմվածքներ) Գրողների միության այս երիտասարդ անդամին արդեն իսկ աչքի ընկնող տեղ են ապահովել գրականության մեջ։ Քեշիշյանն ավարտել է Պետական համալսարանի Ֆիլոլոգիական (լեզվագիտական) ֆակուլտետը։ Այժմ նա աշխատում է թեման արտասահմանյան կյանքից վերցված մի վեպի վրա։

Շնորհալի արձակագիրների շարքին է դասվում Ստեփան Ալաջաջյանը, նմանապես անդամ Գրողների միության։ Ալաջաջյանը Նոր-Զեյթունի իր գեղեցիկ բնակարանում գրել ավարտել է իր «Անապատումն» վեպը, որը վերջերս քննարկվեց Գրողների միության քարտուղարության ընդլայնված նիստում, ռեսպուբլիկայի անվանի գրողների մասնակցությամբ։ Ալաջաջյանն ավարտել է Պետական համալսարանի Հոգեբանական ֆակուլտետը։

Երևանի Ակումբա-գրադարանային տեխնիկումի գրադարանավարն ու անգլերեն լեզվի դասատուն է Գրիգոր Սիսվանը (Բեքմեզյան), որը վերամշակում է Գրողների միության կողմից քննարկված իր նոր վեպը՝ «Հայրենի տունը»։ Գրքի թեման վերցված է Լիբանանի ազգային ազատագրության շարժումից և հայրենադարձությունից։ Սիսվանը Արաբկիրում կառուցել է իր սեփական բնակարանը և ապրում է երջանիկ։ Նա անդամ է Սովետահայ գրողների միության։

Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանի բիբլիոգրաֆիական բաժնի մեջ աշխատում է Ջորջ Թյուֆենջյանը, որը Արաբկիր Բլրի իր սեփական բնակարանն ուրախացնելու է մոտերս՝ ամուսնանալով մի շնորհալի հայուհու հետ։

Նույն գրադարանում և նույն գծով աշխատում է նաև Բաղդասար Դարակչյանը։

Հայաստանի Պետական համալսարանի Ֆիլոլոգիական ֆակուլտետի առաջին երկու կուրսերին հետևելով ռուսերեն լեզուն կատարելագործելուց հետո, Գրողների միության հաշվին Մոսկվա է ուղարկվել երիտասարդ գրող Աբրահամ Ալիքյանը (Խաչերյան) որպես ուսանող Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտի։ Ալիքյանի ընտիր քերթվածների մի ժողովածուն մոտերս լույս է տեսնելու «Նախերգանք» ընդհանուր խորագրով։

1947 թվականից ի վեր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության բաժանմունքում աշխատում է Գասպար Գասպարյանը։ Ուիլյամ Սարոյանի մասին նրա գրած մի քննադատական հոդվածը առանձին բրոշյուրով հրատարակվել է Ակադեմիայի կողմից, իսկ 19-րդ դարի հայ առաջադիմական մտավորականների մասին նրա գրած գրքույկը թարգմանված է նաև ռուսերեն։

Արաբկիրի իր սեփական տանը, Գասպարյանն այժմ պատրաստում է իր դիսերտացիան, գիտական աստիճան ստանալու համար։

Վերոհիշյալ հայրենադարձ գրողները, ինչպես նաև Շաքե Վարսյանը (Վարսենիկ Բոյաջյանը, Կիպրոսից), Հակոբ Արամյանը (Եգիպտոսից), Սարգիս Ցափուշյանն ու նրա եղբայրը՝ Ազատ Ցափուշյանը (Հալեպից), բանաստեղծությամբ, նորավեպերով, դրախոսականներով և գրական ակնարկներով աշխատակցում են Երևանի հայ մամուլին՝ «Սովետական Հայաստան» որաթերթին, «Գրական թերթին», «Ավանգարդին», «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրին և այլն։

***

Հայրենադարձ նկարիչների միջև աչքի ընկնող տեղ է գրավել Հովհաննես Ասատրյանը, որպես ակվարելիստ։ Նա իսկական անդամ է Հայաստանի Կերպարվեստագետների միության և մասնակցում է Երևանի ու Մոսկվայի նկարչական ցուցահանդեսներին՝ Հայաստանի շինարարական և կոլտնտեսական աշխատանքները ներկայացնող ակվարել (ջրաներկ) նկարներով, որոնց վրա շողշողում է Հայաստանի վառ արևը։

Ակվարելիստ Ասատրյանը պատրաստվում է մեկից ավելի նկարներով մասնակցելու մոտերս Մոսկվայում բացվելիք մեծ ցուցահանդեսին։ Արտասահմանում ամայկոտ ուսուցիչ Ասատրյանը՝ Հայաստանում դարձել է ինքնավստահ, որակավոր ակվարելիստ նկարիչ և այդ պատճառով էլ երջանիկ է։

Նկարիչների միության թեկնածու անդամ են Կալենցը և նրա կինը՝ Արմինե Պարոնյան-Կալենցը. նրանք ևս մասնակցելու են Մոսկվայի առաջիկա ցուցահանդեսին։

Երևանի Պետական պատմական թանգարանում որպես մանրանկարիչ աշխատում է Եգիպտոսից ներգաղթած Առաքել Պատրիկը։ Նկարչությամբ զբաղվում են նաև Սեպուհ Լուսարարյանը (Հալեպից) և Հովել Սիլիջյանը (Եգիպտոսից)։

***

Հնարավոր չէ անշուշտ հակիրճ տողերով տալ ընդհանուր պատկերն այն բազմակողմանի վերելքի և երջանիկ առօրյայի, որն ապրում է Սովետական Հայաստանի ժողովուրդը։

Այդ թանկագին հոգատարության ապահովված անչափ երջանկությունը անկախորեն երևում է հայրենադարձ երիտասարդների դեմքերի վրա։ Նրանց բոլորը՝ մտավորական, արվեստագետ, բժիշկ, գիտաշխատող, մասնագետ արհեստագործ և այլն, լավ իմանում են, որ իրենց այժմյան բարեկեցիկ վիճակը երբեիցե չէին կարող ձեռք բերել արտասահմանում։

Արդարև, Ալեքսանդրիայի ճահճուտ հյուղավանում մայարիայից տառապած, իսկ ներկայումս Սովետահայ գրողների միության պաշտպանյալն եղող Աբրահամ Ալիքյանը, կամ կոնսերվատորիայի ուսանող Լևոն Գյոդոզյանը կարո՞ղ էին մտքից անցկացնել՝ թե մի օր իրենց կրթությունը պիտի կատարելագործեն Մոսկվայի ամենահայտնի ինստիտուտներում։ Եգիպտոսի անհրապույր սրահներում երգի անփառունակ ելույթներ միայն կատարող Գոհար Գասպարյանը կարո՞ղ էր երևակայել, թե մի օր ինքը պիտի դառնար Ստալինյան մրցանակի լաուրեատ, օպերայի համբավավոր երգչուհի, «Հայաստանի սոխակ»։ Բժիշկներ Տեր-Ստեփանյանը, Սյուլահյանը, Թումյանը կարո՞ղ էին Բեյրութում հասնել այն նախանձելի դիրքին, որին հասել են Սովետական Հայրենիքում։ Սիրված բանաստեղծ Հովհաննես Ղուկասյանը կարո՞ղ էր ժամանակ և նյութական միջոցներ ունենալ 5 տարվա ընթացքում 5 հատոր գրքերի հեղինակը դառնալու։ Անտարակույս ո՛չ։ Բայց ինչ որ կարելի չէ իրագործել արտասահմանում, դերազանցորեն իրագործվել է և իրագործվում է Սովետական Միությունում և միայն Սովետական Միությունում։

Այսօր շատ երջանիկ է սովետական նոր սերունդը, որովհետև նա դաստիարակվում է բացարձակապես դերծ նեղ-անհատական տրամադրություններից և ֆորմալիզմից։ Նրա մտահորիզոնն անսահման է և համայնապարփակ։ Նա առույգ է, անվախ, վճռական, օժտված գիտության ու տեխնիկայի ամենն տեսակ և ամենաուժեղ զենքերով՝ պատրաստ հաղթահարելու բոլոր տեսակի արգելքները։

(Շարունակելի)

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ԵՐԵՎԱՆԵՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԽՈՐՎԻՐԱՊ

(Տպավորություններ)

Արտաշատի և շրջանային գյուղերու գյուղատնտես բարեկամուհիիս հետ, 1952 թվականի օգոստոսի 15-ի կիրակի առավոտուն, ճամբա ելանք դեպի Ս. Գրիգոր Լուսավորիչ Խորվիրապ։ Երևանի կայարանեն սկսյալ մեր ինքնաշարժը ուղիղ գիծի մը պես կկտրեր դեպի Արտաշատ տանող երկարաձիգ ասֆալտապատ ծառուղիները։ Ճամբուն երկու եզերքներուն խոխոջացող առուներու ետևը փռված էին Արտաշատի կոլտնտեսային դաշտերու անսահման տարածությունները, որոնք կտարածվեին մինչև Արաքսի ափերը։

Մինչև Արտաշատ Ճանապարհը կանցնի Շենգավիթ, Նոր-Խարբերդ, Բաղրամյան, Դալար, Աղամզալու և Բուրաստան գյուղերուն ընդմեջեն։ Ճանապարհի երկայնքին տարբեր գեղեցկություններ կպարզվեին մեր աչքերուն։

Երբ Արտաշատ հասանք, գյուղատնտես բարեկամուհիիս ծանոթներուն մոտ քիչ մը հանգստացանք և հյուրասիրվեցանք։

Արտաշատը շրջապատված է կոլտնտեսային անծայրածիր կանաչագեղ դաշտերով. հորիզոնին՝ վեհորեն կանգնած է դարավոր Մասիսը։ Արտաշատը և իր շրջանային գյուղերը անվանի են իրենց բարգավաճ գյուղատնտեսությամբ. անոնց «միլիոնատերը» հրուչակված կոլտնտեսությունները ապահոված են կոլտնտեսականներու տնեսոր կյանքը։ Ամեն կոլտնտեսական ունի իր առանձին բնակարանը, իր տնամերձ խաղողի այգին և տնտեսությունը։ Հանրահայտ են Արտաշատի բազմատեսակ խաղողները, գինին, օղին։ Անոր բամբակի, ցորենի և բանջարեղենի ընտիր բերքը կգնահատվի մեր Սովետական լայնատարած երկրի շուկաներուն մեջ։ Տեղի կոլտնտեսականներուն մաս կկազմեն Իրանեն, Հունաստանեն, Բաղդադեն, Ֆրանսայեն, Ամերիկայեն հայրենադարձ հարյուրավոր ընտանիքներ, որոնք կապրին ազատ ու երջանիկ հայրենի հողի վրա։

Արտաշատի մեր մեկժամյա այցեն վերջ շարունակեցինք մեր ճամբան դեպի Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապը։

Երբ հասանք Դվինի շրջանի Այգեստան գյուղը, մեր ինքնաշարժը կանգնեցավ գլգրլացող առվակի մը եզերքին, ուր կգտնվեր բարեկամուհիիս աշխատանքային գրասենյակը։

Դվինի շրջանի մշակված դաշտային տարածություններուն մեջտեղ կանգնած է Այգեստան գյուղը իր պտղառատ պարտեզներուն ծած ու ծալված գեղեցիկ պատկերով։ Դեպի երկինք սլացող նորածիլ բարդիներով եզերված ուղիներուն ետև, քով-քովի շարված են հայրենադարձ կոլտնտեսականներու նորակերտ տունները կարմրուկ տանիքներով։ Այս տուներեն յուրաքանչյուրն ունի իր խաղողի այգին և տնամերձ հողամասը։ Այգեստանի դպրոցներու հայոց լեզվի և գրականության երիտասարդ ուսուցչուհի Հայկանդուխտի հետ այցելեցինք գյուղի երկու նորակառույց դպրոցները (յոթնամյա և տասնամյա միջնակարգ) և այլ հասարակական շենքերը։ Ցերեկին ճաշի հրավիրվեցանք 1947 թվականին Հունաստանեն Հայրենիք վերադարձած Բրուսացի Հովակիմ Թելյանի և իր քեռայրի՝ Խաչիկ Փիրիպոսյանի բնակարանը։ Ուրախ, բախտավոր մարդիկ։ Հովակիմը հսկա կարասներով «խարբեի գինի» հանած էր։ Թելյանի և Փիրիպոսյանենց տունը շրջապատված էր ընդարձակ այգիներով։

Տեսա իրենց ձմեռային պաշարի մառանները, յուղի, պանիրի կարասները, ցորենի խոշոր ամբարները, չորցուցած պտուղներն ու բանջարեղենները։ Ցերեկվա ժամը 3-ին մեկնեցանք Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապը։

Մեր ինքնաշարժը ճամբաներեն կուրար թոչունի արագութեամբ։ Արտաշատ, Շիրազ, Նոր-Կյանք գյուղերու գոլտնտեսական դաշտերը փովեր էին մեր նայվածքի առջև։ Մասիսի փեշերուն սպիտակ երիզի մը պես կնկարեր հայրենի Արաքսը։

Լուսավորիչ եկեղեցիի մուտքին։ Խաղաղ հայրենի համայնապատկերը իր խորհրդավորութեամբ համակեց զիս։

Վաղ դպրոցական օրերես ինձ սիրելի Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապի ուխտագնացութեան երազիս տեսանելի և շոշափելի իրականութեան առջև կգտնվեի։ Հավատացյալ հոգվույս ամբողջ ջերմեռանդութեամբ համբուրեցի կամարակապ մուտքի պատերուն մեջ փորված խաչերը։ Կյանքի գերիվեր երջանկութիւնը պարուրեց հոգիս։ Կամարա-

Խորվիրապի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին

Վեղի գյուղի կանաչագեղ դաշտերեն հետո, մտանք լերկ ու քարքարոտ տափաստանային տարածութեան մը մեջ։ Մի քանի րոպե, և ապա կհասնեինք Խորվիրապ։ Անդիմադրելի հուզումը պատեց զիս, երբ բարեկամուհիս ինձ ցույց տվավ բլուրին վրա կանգնած Ս. Գրիգոր Լուսավորչի հնադարյան տաճարը, ուր կգտնվի Խորվիրապը։ Քրիստոնեական հավատքի ի՞նչպիսի սրտառուչ պատկերներ ես տեսա այդ քարքարոտ արահետներուն մեջ։ Ուխտավորներու և հավատացյալներու խումբեր, հետիոտն կամ սայլակներով, կվերադառնային Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապեն, իրենց կիրակնօրյա ուխտեն։

Արդեն բլուրին գագաթին ենք՝ Ս. Գրիգոր կապ մուտքեն քանի մը քայլի վրա, աչակոզմը, կանգնած է կարմրորակ տուֆ քարե կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր հնադարյան վեհանիստ տեսքով։ Անոր փոքր և հաստ փայտյա դուռը բաց էր և ներսը դեռ կպլպլային ուխտավորներու վառած մոմերը։ Իր պարզութեան մեջ հոյակապ, որքա՜ն տպավորիչ էր եկեղեցին։ Երեկոյան ժամերգութեան պահն էր։ Քահանան, սուրբ խորանին առջև կանգնած, իրիկնապահի աղոթքները կմրմնջեր։ Ունկի եմ իջեր ու սրտեռանդ կաղոթեմ իմ պապերու այս լուսազարդ սեղանի առաջ, այնպես, ինչպես աղոթեր են անոնք այս կամարներու տակ, որոնք իրենց մեջ կամփոփեն հայ քրիստո-

նական դարու առաջին աղոթքներն ու փառաբանութիւնները։

Ժամերգութենեն վերջ, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին բակեն սկսած մեծ հետաքրքրութեամբ դիտեցինք անոր սկզբնական դարերեն՝ հիշատակելի արտաքին անկյուններեն սկսյալ մինչև օրվան ուխտավորներուն մատաղներուն դեռ ծխացող օջախները։

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կանգնած է սալահատակ փոքր բակի մը մեջ, որ շրջապատված է աղյուսով և կիրով շաղախված պարիսպով և հնադարյան շենքի ավերակներով։ Կարմրորակ գեղեցիկ տեսքով, կաթողիկե գմբեթով եկեղեցին 9-րդ դարեն նորոգված ըլլալով կպահեր իր անվտանգ կառուցվածքը։

Եկեղեցիի բակին մեջ, քանի մը քայլի վրա, մոտանք հազիվ 9—10 քառակուսի մետր տարածություն ունեցող կամարաձև սրահ մը։ Խունկն ու մոմը սեղուցեր էին անոր ամեն կողմը։ Փոքրիկ, քարակերտ խորան մը կար այնտեղ, որուն քով բացված էր Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապը։

Տարիներու երազիս երջանիկ իրականության առջև համբացած կանգնած էի Ս. Գրիգոր Լուսավորչի պատմական վիրապի եզերքին։ Հուզումներ ողողեցին միտքս ու հոգիս... Կրոնքի պատմության առաջին էջերը բացվեցան։ 303 թվականը իր քրիստոնեական վառ պատկերներով շարժանկարի պես կանցներ աչքերուս առջևեն։

Հայացքս կառչած սնախորշ փոսին, կարծես կտեսնեի հայոց առաջին քրիստոնյա Տրդատ թագավորը, Աշխեն թագուհին, լրջնաղ Խոսրովիդուխտը։ Ապա նայվածքիս առջևեն կտողանցեին կաթողիկոսները, եկեղեցականները, մատենագիրները, ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդը ուխտի եկած, որոնք ինձի պես հավատքի գերագույն պաշտամունքով, այս փոսին քով, երկրպագեր և համբուրեր էին անոր սուրբ ավկյունները։

14 տարիներ այս անդնդախոր փոսին մեջ ապրող և աստվածային հրաշքով միայն ողջ մնացող Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապի ներքսի մասը տեսնելու փափագս ալ մասամբ կատարվեցավ։ Մեր մեքենավար Վարդանը վեղիցի ըլլալուն, իր պատանեկական օրերեն իրեն քաջ ծանոթ էին Խորվիրապի անդընդախոր վար իջնող ուղիղ սանդուխները։ Ան, մեկ ձեռքին բռնած գրպանի իր էլեկտրական լամպը, սկսավ վար իջնել սանդուխներեն։ Ես և բարեկամուհիս, իրարու ձեռքն ուժով բռնած, կհետևեինք Վարդանին։ Շուտով ան աննկատելի դարձավ անդընդախոր փոսի խավարին մեջ, ուղղվելով դեպի ձախ։ Քանի մը վայրկյան վերջ ան մեզի բերավ 14 տարի սուրբին շոքած և աղոթած քարի արանքներեն քուռ մը հոդ։ Երբ մեծ հետաքրքրությամբ Վարդանեն տեղեկություններ կքաղեի Խորվիրապի վիհի մասին, ան կպատմեր հետևյալը. «Հողե փոքրիկ հատակի մը վրա սեղանի նման քար մը կայ. այդ քարը Ս. Գրիգոր Լուսավորչի աղոթատեղին կհամարվի։ Մութ փոսի բոլոր կողմերը ուխտավորներու մոմերով կլուսավորվին։ Իսկ Խորվիրապի սանդուխներուն համրանքը՝ երանցուցի 40 ոտքեն վերը։

Ուշ երեկոյան ժամը 7-ն էր, երբ մենք բաժնվեցանք Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապեն։ Ես կրկին ու կրկին համբուրեցի վանքի պատերը, սրբավայրի ամեն կողմերեն քույսեր հավաքեցի, աղոթեցի Խորվիրապի դարավոր խորանին առջև։ Ս. Գրիգոր Լուսավորչի բյուրեն երկար դիտեցինք հայրենի շքնաղագեղ բնությունը։ Արևամուտի ծիրանադույն ճաճանչներուն տակ, Արարատյան դաշտավայրի անծայրածիր տարածությունը հեռավոր ծովերու պատրանքը կուտար։ Եվ Մասիս լեռը՝ հայոց աշխարհի դարերու այդ վկան, իրիկնապահի իր մթնագույն, կանաչ ու կապտորակ փեշերը տարածեր էր արծաթափայլ Արաքսի վրա։ Կյանքիս մեջ առաջին անգամը կդիտեի այսքան մոտիկեն հայրենի Արաքսն ու Մասիսը։

Այդ օրը իմ կյանքի ամենաերջանիկ ու անմոռանալի օրերեն մեկը եղավ։

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՈՐԴԵՆ ՆՈՒՐԲ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ.— Հայաստանի մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների շարքն անցավ բրդյա նուրբ գործվածքների գործարանը։ Երևանի մահուդի գործարանից հետո, այս ձեռնարկությունը երկրորդն է մեր հանրապետությունում, որն արտադրելու է բրդյա գործվածքներ։

Տեսնելով հիացմունք են պատճառում վարդագույն տուֆով կառուցված չորս հարկանի շենքերը, որոնց ընդարձակ, լուսավոր դահլիճներում տեղավորված են մեքենաները։ Շենքերից մեկը մանվածքային բաժին է, որտեղ բրդից պատրաստվում են ամենանուրբ թելեր։ Հենց այստեղ էլ ժամանակավորապես գտնվում է գործվածքային բաժինը։ Մեկ-երկու ամսից հետո կավարտվի գործվածքային բաժնի հոլակապ շենքի կառուցումը և բոլոր գործող մեքենաները կտեղափոխվեն այնտեղ։ Պատրաստվում է նաև գործվածքների ներկման բաժին։

Այս գործարանը պատերազմից հետո Սովետական Հայաստանում կառուցված խոշորագույն ձեռնարկություններից մեկն է։ Այն հագեցված է սովետական նորագույն մեքենաներով։ Բանվորների և բանվորուհիների ճշգրիտ մեծամասնությունը պատրաստված է տեղում մասնագետ վարպետների միջոցով։

ԳՅՈՒՄՈՒՇԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.— Օրնիբուն չեն դադարում Գյումուշի հիդրոէլեկտրակայանի շինարարական աշխատանքները։ Հազարավոր մարդիկ քրտնաջան աշխատում են այս վիթխարի շինարարության վրա։ Այստեղ ամենադժվարին մասը ջրատար մեծ թունելի փորումը և ամրացումն էր։ Կառուցողները հաջողությամբ հաղթահարել են այդ դժվարությունը և ներկայումս թունելի կառուցումը առաջ է տարվում արագ թափով։ Կառուցողների գլխավոր ուշադրությունը այժմ ուղղված է բաց ջրանցքի և հիդրոէլեկտրակայանի շենքի շինարարության վրա։ Ավարտվում է ջրատար մետաղյա վիթխարի խողովակների տեղադրումը և զոդումը։

Գյումուշ գյուղի մոտ կառուցվող այս էլեկտրակայանը լինելու է Հրազդանի վրա կառուցվող էլեկտրակայաններից ամենախոշորը։ Այն կունենա վճռական նշանակություն Սովետական Հայաստանի արդյունաբերության հետագա զարգացման համար։ Այդ պատճառով շինարարները աշխատում են մեծ եռանդով, որպեսզի էլեկտրակայանի կառուցումն ավարտեն սահմանված ժամկետում։

ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆԸ.— Շահագործման հանձնվեց Երևանի նորակառույց Գարեջրի գործարանը։ Այն հագեցված է նորագույն մեքենաներով, ունի ընդարձակ պահեստներ, բոլոր տեսակի հարմարություններ և տարեկան կարող է տալ երիկ անգամ ավելի շատ արտադրանք, քան գոյություն ունեցող հին գործարանը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԸ.— Ավարտվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նիստերի դահլիճի շինարարությունը։ Դահլիճը թե՛ դրսից և թե՛ ներսից ձևավորված է շատ շքեղ, հայկական ճարտարապետության և մանրանկարչության ոճով։ Այս դահլիճով ավարտվեց Հայաստանի կառավարական տան ամբողջ շինարարությունը, ըստ ակադեմիկոս Ա. Թամանյանի նախագծի։

ԹԱԼԻՆԻ ՆՈՐ ՋՐՄՈՒՂԸ.— Ընթացիկ տարվա սկզբներին սկսվեց Թալինի ջրմուղի շինարարությունը։ Այդ ջրմուղը, որն ունենալու է մի քանի տասնյակ կիլոմետր երկարություն, խմելու ջուր է մատակարարելու Թալինի շրջանի 13 գյուղերի, ինչպես նաև նորակառույց ավանների բնակչությանը։ Ջրմուղը սկիզբ է առնելու Իրինդ գյուղի մոտ գտնվող սառնորակ աղբյուրներից, որտեղ կառուցված է մեծ ավազան։ Այդ ավազանից ջուրը մետաղյա խողովակներով կտրվի գյուղերին։

Ջրմուղի շինարարությունն այժմ մոտենում է իր ավարտմանը։ Կառուցմանը գործուն մասնակցություն է ցույց տալիս տեղի բնակչությունը։ Կառուցման ծախսերը, ինչպես և շինարարական նյութերի մատակարարումը հոգում է կառավարությունը։ Ջրմուղի առաջին հերթի շինարարությունը կավարտվի մինչև ընթացիկ տարվա հոկտեմբեր ամիսը։

ԵՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ.— Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկն է։ Պատերազմից հետո, այս ինստիտուտը երկրորդն է իր մեծությամբ։ Ամեն տարի այս ինստիտուտը պատրաստում է մեծ թվով տարբեր մասնագիտություն ունեցող մասնագետներ՝ քիմիկոսներ, կառուցողներ, էլեկտրատեխնիկներ, հիդրոտեխնիկներ և այլն։

Ուսումնական աշխատանքների համար ավելի լայն հնարավորություններ ստեղծելու նպատակով կառավարությունը որոշել է կառուցել ինստիտուտի նոր շենք։ Շինարարական աշխատանքներն արդեն սկսվել են։ Նոր շենքը, որը կառուցվում է հին ոչ հեռու, լինելու է հինգ հարկանի։ Այն կունենա 78 ընդարձակ լսարան։ Ուրը փորձարարանները (լաբորատորիաները) կահավորված կլինեն ամենաբնորոշ և կատարելագործված գործիքներով։ Շենքը կունենա մարմնամարզական դահլիճ, հատուկ գրադարան, ընդհանուր հանդիսասրահ և այլն։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ.— Սեպտեմբերի 1-ին Սովետական Հայաստանի բոլոր միջնակարգ և տարրական դպրոցներում սկսվեց նոր ուսումնական տարին։ Ուսումնական տարին նախապատրաստված էր հաջող։ Դպրոցներն ստացան մեծ քանակությամբ նոր գրքեր և ուսումնական պիտույքներ։ Հրատարակվել է 80 անուն դասագիրք՝ մոտ երկու միլիոն օրինակ ընդհանուր տիրաժով։

Այս տարի ռեսպուբլիկայի հանրակրթական դպրոցներում սովորում են ավելի քան 300.000 աշակերտ-աշակերտուհիներ։ Մանկավարժական կազմը համալրվեց բարձրագույն կրթություն ստացած 1.200 նորավարտ ուսուցիչներով։

Սեպտեմբերի 1-ից սկսվեցին պարապմունքները նաև Հայաստանի 14 բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնք այս տարի առաջին լսարաններն են ընդունել մոտ 3.000 նոր ուսանողներ։

ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ.—Սովետական Հայաստանի գիտական հասարակությունը նշեց մեծ գիտնական, բնախույզ, բժիշկ, փիլիսոփա, տաղանդավոր ժողովրդի հանճարեղ զավակ Աբու Ալի Իբն-Սինայի (Ավիցեննայի) ծննդյան 1000-ամյակը։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ երեկո, որին ներկա էին գիտնականներ, գրողներ, արվեստագետներ։

Ակադեմիկոս գիտնականի կյանքի և գործունեության մասին զեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Լ. Հովհաննիսյանը։ Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վ. Զայոյանը զեկուցեց Իբն-Սինայի փիլիսոփայության կուլտուր-պատմական նշանակության մասին։ Վերջում Աբու Ալի Իբն-Սինայի «Փրկության գիրք» աշխատության մի ձեռագիր օրինակի մասին, որը պահվում է Երևանի Մատենադարանում, հաղորդումով հանդես եկավ Պատմության ինստիտուտի ասպիրանտ Հ. Փափազյանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.— Հայաստանի ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի մի առանձին արշավախումբ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Եղիազարյանի ղեկավարությամբ, ուսումնասիրեց ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրումը Բասարգեչարի, Մարտունու, Նոր-Բայազետի և Սևանի շրջաններում այդ աշխատանքներն ուսումնասիրել է մի շարք հուշարձաններ, կատարել է 50 լուսագրություն, շուրջ 250 լուսանկարում և հավաքել 50-ից ավելի արձանագրություններ, որոնք մեծ նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար։

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՋԵՐՄՈՒԿ ԲՈՒԺՄԱՆԸՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ.— Ջերմուկի հանքային ջրերի համարավ արագորեն տարածվում է ողջ Սովետական Միության մեջ։ Արևելյան Արփա գետի ակունքների մոտ, պատմական Վայոց ձորում գտնվող այս հրաշալի հանքային աղբյուրները, իրենց բացառիկ բուժիչ հատկություններով շատերին են դրավում դեպի իրենց։ Ամեն տարի, ինչպես Հայաստանից, այնպես էլ Սովետական Միության տարբեր ծայրերից այստեղ բուժվելու են գալիս ստամոքսի, հոդերի և ոսկրների ամենատարբեր հիվանդություններով տառապող հազարավոր մարդիկ։ Ակնառոր մասնագետները Ջերմուկի հանքային ջրերը իրենց հատկություններով համեմատում են շեխոսլովակյան հռչակավոր Կարլովի-Վարիի հանքային ջրերի հետ։

Արագ թափով զարգանում է Ջերմուկը որպես բուժավայր։ Կառավարությունն ամեն տարի խոշոր միջոցներ է հատկացնում այս բուժավայրի շինարարության և բարեկարգման համար։ Միայն 1952 թվականին այդ հատկացումները կազմում են շուրջ 15.000.000 ռուբլի։ Բացի գործող բուժական շենքերից, այժմ այստեղ կառուցվում են երեք խոշոր սանատորիա, լողարանների նոր շենք, հյուրանոց, կինոթատրոն և այլն։

Ջերմուկն ունի խոշոր հետազոտական լայն աշխատանք է տարվում բուժավայրի հետագա զարգացման հետ կապված մի շարք խնդիրներ լուծելու համար։ Գիտական այդ աշխատանքների արդյունքները ամփոփելու և Ջերմուկի հետագա զարգացման միջոցառումներ նշելու նպատակով Կուրորտոլոգիայի և բուժման ֆիզիկական մեթոդների ինստիտուտը երեսնում հրավիրել է գիտական սեսիա։

Սեսիային մասնակցում էին ավելի քան 100 մասնագետ բժիշկներ, ինչպես նաև Մոսկվայից, Պյատիգորսկից, Սոչիից, Վրաստանից և Ադրբեջանից հրավիրված հյուրեր։ Սեսիան տևեց 5 օր։ Լսվեց 10 զեկուցում նվիրված Ջերմուկի զարգացման տարբեր հարցերին։ Սովետական Միության Բժշկական գիտությունների և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Լ. Հովհաննիսյանը զեկուցեց Ջերմուկ կուրորտի զարգացման հեռանկարների մասին։ Հետաքրքիր էր գեոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Դեմյոխինի զեկուցումը Ջերմուկի ջրա-հանքային կարողությունների մասին։

Սեսիայից հետո, երեք ժամանած հյուրերը այցելեցին Ջերմուկը և տեղում ծանոթացան բուժավայրի հետ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.—Տեղի ունեցավ Սովետական Հայաստանի երաժշտագետների երրորդ համագումարը։ Երաժշտագետների Միության վարչության նախագահ Ա. Սաֆյանի հաշվետու զեկուցման շուրջը բացվեց մտքերի լայն

փոխանակություն։ Նյութ ունեցողները, խանելով վերջին տարիներում սովետահայ երաժշտագիտների ստեղծագործական որոշ հայողություններ մասին, միաժամանակ խիստ քննադատություն ենթարկեցին մեր երգչության վարչության գործունեությունը, մատնանշելով, որ վերջինս հարկ եղած ուշադրություն չի նվիրել երաժշտության զարգացման հարցերին։

Համագումարն ընտրեց երաժշտագիտների միության նոր վարչություն։ Վարչության նախագահ ընտրվեց երաժշտագետ Գ. Եղիազարյանը։

ՀԵՌՆԱՅԻՆ ՊՏՂԱԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Պտղաբուծության ինստիտուտը (նախկինում ունի իր բաժանմունքը, որն զբաղվում է լեռնային պտղաբուծության զարգացման հարցերով։ Բաժանմունքի աշխատողներն ընտրել են ինչպես Հայաստանում, այնպես էլ Սովետական Միության տարբեր շրջաններում աճող տանձի, խնձորի, սալորի, բալի, մոշի, մորի և այլ պտուղների մի քանի տասնյակ տեսակներ և տարիների ընթացքում խնամքով աճեցրել իրենց փորձադաշտերում, հարմարեցնելով այդ բույսերը Հայաստանի բարձր լեռնային շրջանների ցուրտ կլիմայական պայմաններին։ Ներկայումս Նոր-Բայազետի, Մարտունու, Բասարգեչարի, Ապիտակի, Ախուրյանի, Թալինի և մի քանի այլ լեռնային շրջանների կոլեկտիվ տնտեսություններն ունեն մոտ 800 հեկտար այգիներ, որոնք հիմնվել են լեռնամասի բաժանմունքի աշակցությամբ և այստեղից ստացված տնկիներով։ Միայն այս տարվա գարնանը և աշունը հիշյալ շրջանների կոլեկտիվ տնտեսությունների համար բաց է թողնված մոտ մեկ միլիոն հատ տնկիներ և կտրոններ։

Բաժանմունքի աշխատողները զբաղվում են նաև բոլորովին նոր տեսակի պտուղներ աճեցնելով։ Տարբեր տեսակների տրամախաչումից ստացվել են ուրույն տեսակի խնձորներ, որոնց բաժանմունքի աշխատողներ անվանել են «Շիրակի» և «Վաղարշապատ» խնձորի այդ նոր տեսակներն այլի են ընկնում իրենց մեծությամբ, համով և հյութեղությամբ։

Բաժանմունքը սերտ կապ է պահպանում Սովետական Միության տարբեր մասերում, հատկապես Լենինգրադ-Արևելքում և Սիբիրում գտնվող նման գիտահետազոտական հաստատությունների հետ։ Այդ կապը խոշոր շափով օգնում է նրանց աշխատանքներին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀՅՈՒՐԵՐԸ.— Վերջերս Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի հարտարապետների և կառուցողների պատվիրակությունը այցելեց Սովետական Միությունի՝ ծանոթանալու շինարարական գործի դրվածքին։ Այդ պատվիրակությունը եղավ նաև Հայաստանում։ Մի քանի օր շարունակ հյուրերը մեծ հետաքրքրությամբ դիտում էին նոր Երևանը, ծանոթանում հարտարապետական հուշարձաններին, նրանք եղան Էջմիածնում, դիտեցին Հայաստանի պետական թանգարանը, Պատկերասրահը, Մատենադարանը, մանրամասնորեն ծանոթացան մայրաքաղաքի շինարարությանը։

Մեկնելուց առաջ պատվիրակության ղեկավար, Ն. Լիբլենեխտը, որը հանդիսանում է ճարտարապետության և շինարարության գերմանական ակադեմիայի նախագահը, ինչպես նաև պատվիրակության մի քանի ուրիշ անդամներ խորին շնորհակալություն հայտնեցին Երևանում պատվիրակությանը ցույց տրված ջերմ ընդունելության համար։ Նրանք իրենց հիացմունքը հայտնեցին վերակառուցվող Երևանի շինարարության առթիվ, մատնանշելով հայկական ճարտարապետության ինքնուրույնությունը և վիճությունը, սովետական շինարարական տեխնիկայի խոշոր նվաճումները։ Հյուրերն առանձնապես հիացած էին նրանով, թե ինչպիսի խնամքով ու շքեղությամբ են կառուցվում մեզ մոտ արդյունաբերական ձեռնարկությունների շենքերը, որոնց ուժված են բանվորների համար աշխատանքային հիանալի հարմարություններով և կենցաղային ու առողջապահական բոլոր անհրաժեշտ պայմաններով։



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՊՐՈՖ.—ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 1. *Դավիթ Ալավկա որդու կանոնների մասին առաջին տեղեկությունները մեզ հաղորդել են նրան մոտիկ ժամանակակիցները։ Այսպես, 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին Դավթի կանոնների մասին հետևյալն է գրել. «...Դաւիթ վարդապետն Ալաւկայ որդի... գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմարա և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անունն էր Արքայութիւն, ի քաղաքէն Գանձակայ*[1]։ *Վարդան Արևելցին Դավթին ճանաչում է որպես «դիւրահասս» կանոններ հորինող հեղինակ*[2] *(«դիւրահասս» այստեղ ոճի «դյուրամատչելի», «պարզ», «հասկանալի» իմաստը)։ Դավթին հիշում են նաև Մխիթար Այրիվանեցին, Ստեփաննոս Օրբելյանը և ուրիշները։ Պետք է ենթադրել, որ Դավթի կանոնները, իր ժամանակին, լայն տարածում են ունեցել և մեծ ժողովրդականություն վայելել։*

Տպագիր գրականության մեջ, Դավթի կանոնների վրա առաջին անգամ կանգ է առել Հ. Մ. Ջամչյանն իր «Պատմութիւն Հայոցի» մեջ և բացասական կարծիք հայտնել։ Նա գտել է, որ Դավթի կանոնները գրված են «խառնիխուռն ոճով և անիմաստ բանիւք», ենթադրելով, որ նրանք աղճատվել են ընդօրինակող գրիչների կողմից[3]։ *Ջամչյանի այս չհիմնավորված եզրակացությունը տառացի կրկնել են Ս. Սոմալը*[4] *և նրա աշխատության գերմաներեն թարգմանող Նեյմանը*[5]։

Հետագայում Դավթի կանոնների վրա կանգ են առել Հ. Գ. Զարբհանելյանը[6] *և Հ. Հ. Տաշյանը։ Վերջինս, խոսելով Դավթի կանոնների մասին, համարել է նրանք «մեծ մասամբ խենթական բաներ»*[7]։

Դավթի կանոնների նկատմամբ եղած այս կարծիքները փորձել է ցրել հայտնի բանասեր Կ. Կոստանյանը իր «Դաւիթ վարդապետ Ալաւկա որդի» խորագիրը կրող արժեքավոր ուսումնասիրության մեջ, որը տպագրվել է «Ազգագրական հանդէսի № № 14 և 15 գրքերում։ Կոստանյանը ցույց է տվել, որ Դավթի կանոններն արտացոլում են իր ժամանակի իրավական նորմաներն ու սովորությունները, և այդ իսկ տեսակետից, հայ գրականության պատմության մեջ խոշոր արժեք են ներկայացնում[8]։ *Նա ցույց է տվել նույնպես, որ Դավթի կանոնագիրքը հայկական առաջին դատաստանագիրքն է հանդիսացել—Մխիթար Գոշը օգտվել է Դավթի Ալավկա որդու կանոններից։*

Կոստանյանի այս արժեքավորումից հե-

1. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909 թ., էջ 107։

2. Վարդան Մեծ, «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 159։

3. Հ. Մ. Ջամչյան, «Պատմութիւն Հայոց», հատոր Դ, էջ 41։

4. M. P. S. Somal, „Quadro della storia etc.", Venezia, 1828, p. 90.

5. C. F. Neumann, „Versuch einer Geschichte der Arm. Literatur". Leipzig, 1836, p. 168.

6. Հ. Գ. Զարբհանելյան, «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Վենետիկ, 1897 թ., էջ 652։

7. Հ. Հ. Տաշյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», 1895 թ., էջ 656։

8. «Ազգագրական հանդէս», գիրք 15, էջ 67։

տու ևս Դավթի կանոնները զարմանալիորեն թողվել են անուշադրության, չնայած Հ. Ղ. Ալիշանն ևս իր «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» աշխատության մեջ, հին հայկական հավատալիքների կապակցությամբ, բարձր գնահատական է տվել Դավթի կանոններին և մի շարք մեջբերումներ արել նրանցից[9], իսկ Հ. Բ. Սարգսյանը հրատարակել է Դավթի կանոնների նախաբերդին՝ 94-րդ գլուխը[10]։

Դավթի կանոններին, նոր ժամանակներում, դրական տեսանկյունով, անդրադարձել են սովետական մեր հայագետները։ Այսպես, պրոֆ. Մ. Արեղյանը գտնում է, որ Դավթի կանոնները հայկական օրենսդրքի կազմման փորձն է, և այդ «երկը, իր տեսակով, մի նոր քան է եղել մեր հին գրականության պատմության մեջ և այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի»[11]։

Վերջապես, Դավթի կանոնների վրա, Կոստանյանի վերև հիշված հոդվածի հիման վրա, կանգ է առել հանգուցյալ պրոֆ. Ն. Սամվելյանը իր «Հայ իրավունքի պատմության» մեջ, բայց չի ծավալվել, որովհետև ձեռքի տակ չի ունեցել Դավթի ձեռագիր ընդօրինակություններից ոչ մեկը։ Նա միայն ցավով նշել է, որ «այդ դատաստանագիրքը դեռևս տպագրված չէ, ոչ էլ ուսումնասիրված, մեր գրականության մեջ կան միայն մի քանի կցկտուր տեղեկություններ...»[12]։

§ 2. Դավիթ Ալավկա որդին 12-րդ դարի մատենագիր է։ Ծնվել է 11-րդ դարի 70—80-ական թվականներին Գանձակ քաղաքում (Ներկայիս Կիրովաբադ)։ Դավիթն ստացել է իր ժամանակի բարձր կրթություն։ Ըստ Վարդանի մի վկայության, նա «ծածկեցաւ հանդիսացեալ Հովհաննես Սարկավագ Իմաստասերին, որից և պիտի ենթադրել, որ նա կա՛մ սովորել է նրա հետ միասին Հաղբատի վանքում և կա՛մ միասին պաշտոնավարել Անի քաղաքում[13], Դավիթ Ալավկա որդին երկար ժամանակ դրաղվել է մանկավարժությամբ[14]։

Դավիթը իր ժամանակի մեծ հեղինակություն ունեցող անձնավորություններից մեկն է հանդիսացել։ Նրան ժամանակակից հիշատակագիրներից մեկը, խոսելով Արևելյան Հայաստանում աչքի ընկնող անձնավորությունների մասին, գրում է. «էր և յարևելս Սարկաւագ վարդապետ՝ Հաղբատացին և անուանի Դաւիթ որդի Ալօկայ և այլ բազումք աշակերտք և ընկերակիցք սոցա»[15]։

Թե որքան մեծ հեղինակություն է վայելել Դավիթը իր ժամանակակիցների կողմից, կարելի է դատել այն փաստից, որ Դավիթը Գրիգոր վարդապետի հետ միասին միջնորդել են Ամենայն Հայոց Կաթողիկոսության առաջ, որն այն ժամանակ գտնվում էր Կիլիկիայում, որպեսզի Աղվանից կաթողիկոսական գահի վրա հաստատվի Գագիկ եպիսկոպոսը։

Դավիթը մահացած պիտի լինի 1139 թվականին։ Հիշտ չէ Սամվել Անեցու այն տեղեկությունը, որ իբր թե Դավիթը մահացել է Հովհաննես Իմաստասերի մահվանից մի տարի հետո։ Մեզ որոշակի հայտնի է, որ Հովհաննես Իմաստասերը մահացել է 1129 թվականին։ Այդ թվականից մի տարի հետո չէր կարող մահացած լինել Դավիթը այն պատճառով, որ նա իր վերև հիշված միջնորդությունը Աղվանից կաթողիկոսի մասին արել է 1138 թվականին։

§ 3. Դավիթ Ալավկա որդու ձեռագրերը հայտնի են 17 ընդօրինակություններով, որոնցից 15-ը գտնվում են Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում, իսկ երկուսն արտասահմանի մատենադարաններում՝ մեկը Վենետիկի Մխիթարյանների, իսկ մյուսը Վիեննայի Մխիթարյանների մոտ։ Անհրաժեշտ ենք համարում տալ ձեռագրերի համառոտ բիբլիոգրաֆիան ըստ ժամանակագրական հերթության.

1. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 5607 (918)։ Սկիզբը՝ թ. 177ա, կանոնների գլխագլուխներց առաջ՝ «Դաւթի վարդապետի մականուն Ալավկա(յ) որոի, վասն պէսպէս հարցմանց խոստովանութեանց, խրատ զգուշացուցիչ ասացեալ», իսկ տեքստի ուղղում ունի նոր մերնադիր՝ «Հարցումն առ սուրբ վարդապետն

9. Հ. Ղ. Ալիշան, «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց», Վենետիկ, 1910 թ., էջ 398, 404, 414, 434։

10. Հ. Բ. Սարգսյան, «Քննադատութիւն Յովհան Մանդակունոյ և իւր երկասիրութեանց վրայ», Վենետիկ, 1895 թ., էջ 197—200։

11. Մ. Արեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», հատոր II, Երևան, 1948 թ., էջ 64։

12. Ն. Սամվելյան, «Հայ իրավունքի պատմություն», Երևան, 1939 թ., էջ 75։

13. Վարդան Մեծ, «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 159։

14. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909 թ., էջ 188։

15. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան, «Ցիշատակարանք ձեռագրաց», հատոր Ա, Անթիլիաս, 1952 թ., էջ 307։

Դաւիթ մականուն Ալուկայ որդի համբակ քահանայի Արքայութիւն անուն, վասն պէս-պէս խոստովանութեանց բանից և պատանմանց եկելոց զգուշութեան, և նա լիապէս ասացեալ: — Հարցումն. Երէ զի՞նչ է որ յարարածս Աստուծոյ ոմանք սուրբ կոչեցան, ոմանք անսուրբ...»: *Տեքստը վերջանում է թ. 238բ-ում։ Ունի 93 գլուխ։ Գրիչն է Ստեփանոս։ Գրչության ժամանակը՝ 12—13-րդ դար։*

2. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 715 (612)։ Սկիզբը՝ թ. 16ա. «Դաւթի վարդապետի է կանոնքս: — Արդ՝ սկիզբն կանոնաց վասն միտն գրեցաւ...»։ *Վերջը՝ թ. 22ա։ Գրիչն է Մարտիրոս քահանան, գրչության վայրը՝ Պողոս անապատը, ժամանակը՝ 13—14-րդ դար։*

3. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 839 (758)։ Սկիզբը՝ թ. 2ա, կանոնների գլխագրանկն է, «հարատ կանոնականքս» վերնագրով, իսկ բուն տեքստը սկսում է թ. 6ա-ում. «Հարցումն պէսպէս խոստովանութեամբ բանից և պատանմանց եկելոց ի զգուշութիւն, զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի՝ զԴաւիթ ոմն քահանայ գիտնականն»: *Վերջը՝ թ. 123բ։ Ունի 94 գլուխ։ Գրչության ժամանակն է 14-րդ դար։*

4. Վենետիկի Մխիթարյանների ձեռագիր № 241։ Սկիզբը՝ թ. 260բ. «Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից և պատանմանց եկելոց ի զգուշութիւն, զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի՝ զԴաւիթ ոմն քահանայ գիտնականն»: *Վերջը՝ թ. 263ա։ Գրիչն է Խաչատուրը, գրչության վայրը՝ Կապոսի վանք (Նկեղյաց գավառ), գրչության ժամանակը՝ 1495 թ.։*

5. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2964 (87)։ Սկիզբը՝ թ. 171բ. «Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից և պատանմանց եկելոց ի զգուշութիւն, զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի՝ զԴաւիթ ոմն քահանայ գիտնականն յոյժ»: *Վերջը՝ թ. 234բ։ Ունի 101 գլուխ։ Գրիչն է Հովհաննես եպիսկոպոսը, գրչության վայրը՝ Կոստանդնուպոլիս, գրչության ժամանակը՝ 1562 թ.։*

6. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 3562 (1100)։ Սկիզբը՝ թ. 358ա. «Յանկ կանոնգրոց Դաւթի քահանայի»: *Տեքստի սկզբում՝ թ. 360ա, նոր խոսքագիր.* «Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից և պատանմանց եկելոց ի (զ)գուշութիւն, զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի՝ զքահանայ ոմն Դաւիթ գիտնականն»: *Վերջը՝ թ. 422բ։ Ունի 98 գլուխ։ Գրիչն է Արիստակես Տարոնացին, գրչության ժամանակը՝ 1597—1599 թ. թ.։*

7. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2576։ Սկիզբը՝ թ. 160ա. «Վասն կծկծի միտն որպէս է կանոնքս»: *Վերջը՝ թ. 166բ։ Գրիչն է Գրիգորը, գրչության ժամանակը՝ 16-րդ դար։*

8. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 487 (491)։ Սկիզբը՝ թ. 111ա. «Կանոնք, զոր կարգեալ է Դաւթի գիտնականի ի խնդրոյ քահանայի միոյ Արքայութիւն կոչեցեալ և հարցմունք նորա պէսպէս հարցմանց և խոստովանութեանց»: *Վերջը՝ թ. 130ա։ Ունի 184 գլուխ։ Գրիչն է Վարդանը, գրչության վայրը՝ Կարմիր վանք, գրչության ժամանակը՝ 1618 թ.։*

9. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 652 (744)։ Սկիզբը՝ թ. 88բ. «Վասն միտնց հարցմունք և պատասխանիք»: *Վերջը՝ թ. 113բ։ Ունի 169 մանր գլուխներ։ Գրիչն է Գրիգոր կրոնավոր, ժամանակը՝ 15—16-րդ դար։*

10. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 837 (756)։ Սկիզբը՝ թ. 203ա. «Հարատ կանոնական սրբոյ վարդապետին Դաւթայ հոգաց(ե)ալ որդւ(յ) Ալուկայ վասն միտն անկանելոյ»: *Վերջը՝ թ. 260բ։ Ունի 93 գլուխ։ Գրիչն է Գոհարիկը, գրչության ժամանակը՝ 1627—1630 թվականներին։*

11. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 7060։ Սկիզբը՝ թ. 116ա. «Հարատ կանոնական սրբոյ վարդապետին Դաւթայ հոգացեալ որդւոյ Ալուկայ վասն միտն անկանելոյ յաղ»: *Վերջը՝ թ. 189բ։ Ունի 93 գլուխ։ Գրիչն է Զաքարիան, գրչության վայրը՝ Մոկք, ժամանակը՝ 1628 թ.։*

12. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 835 (754)։ Սկիզբը՝ թ. 155ա. «Հարատ կանոնական սրբոյն վարդապետին Դաւթա(յ) հոգացե(ա)լ որդւոյ Ալուկայ վասն միտն անկելոյ...»։ *Վերջը՝ թ. 200բ։ Ունի 93 գլուխ։ Գրիչն է Մարտիրոսը, գրչության վայրը՝ Բաղիշ, ժամանակը՝ 1652 թ.։*

13. Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագիր № 256։ Սկիզբը՝ թ. 193ա. «Հարցումն պէսպէս խոստովանութեամբ բանից և պատանմանց եկելոց ի զգուշութիւն,

զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի, զԴաւիթ ոմն գիտնական յոյժ...»: Վերջը՝ թ. 221ա։ Ունի 100 գլուխ։ Գրիչն է Ավետիս երեցը, գրչության վայրը՝ Կոստանդնուպոլիս, ժամանակը՝ 16—17-րդ դար (տես Հ. Հ. Տաշյանի Ձեռագրաց ցուցակը, էջ 656)։

14. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 648 (739)։ Սկիզբը թ. 78ա. «Դաւիթ վարդապետ Ալօկայ որդի, որ գրեաց զկանոնական»: Վերջը՝ թ. 136բ։ Գրչության ժամանակն է 17-րդ դար։

15. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 649 (741)։ Սկիզբը՝ թ. 126բ. «Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից և պատասխանաց եկելոց զգուշութիւն, զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի՝ զԴաւիթ ոմն քահանայ գիտնական յոյժ»: Վերջը՝ թ. 181ա։ Ունի 101 գլուխ։ Գրչության ժամանակն է 17-րդ դար։

16. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 931։ Սկիզբը՝ թ. 8ա։ «Հրաման սրբոյ վարդապետին Դաւթեայ նոգացելոյ որդոյ Աւաղկայ: Վասն մկան անկանելոյ յաղ»: Վերջը թ. 166ա։ Ունի 93 գլուխ։ Գրչության ժամանակն է 17-րդ դար։

17. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 651։ Սկիզբը՝ թ. 116բ. «Հարցումն պէսպէս խոստովանութեան բանից և պատասխանաց եկելոց ի զգուշութեան, զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի՝ զԴաւիթ ոմն քահանայ գիտնական յոյժ: Վերջը՝ թ. 139ա։ Միայն 40 գլուխ։ Ընդօրինակված է 1743 թվականից առաջ։

§ 4. Թվարկված 17 ձեռագրերը պատկանում են իրարից զգալապես տարբերվող հինգ խմբի։ Առաջին խմբին պատկանում են № 3562 (Արիստակես Տարոնեցու) և № 648 (անանուն գրչի) օրինակները։ Այս խմբի ձեռագրերը Դավթի Ալավկա որդու կանոնները պահել են ավելի լրիվ— նրանք ունեն պատվիրատուին ուղղված ընծայականը և մի քանի այլ գլուխներ, որոնք բացակայում են մյուս խմբերի ընդօրինակություններում։

Երկրորդ խմբին պատկանում են յոթը ձեռագրեր՝ № 5607 (Ստեփանոս գրչի), № 839 (անանուն գրչի), № 2964 (Հովհաննես եպիսկոպոսի), Վենետիկի № 241 (Խաչատուր գրչի), № 649 (անանուն գրչի), Վիեննայի № 256 (Ավետիս երեցի), և № 651 (անանուն գրչի)։ Այս խմբի ձեռագրերը չնայած անշան պակասություններ ունեն, սակայն Դավթի եղած բոլոր ձեռագրերի մեջ հնագույններն են։ Անհավանական չէ, որ այդ ընդօրինակությունների ամենահնագույնը՝ № 5607 ձեռագիրը, ընդօրինակված լինի հեղինակի կենդանության օրոք։

Երրորդ խմբի ձեռագրերը համեմատաբար նոր շրջանի ընդօրինակություններ են։ Այս խմբի մեջ մտնում են՝ № 7060 ձեռագիրը (Զաքարիա գրչի), № 837 ձեռագիրը (Գոհարիկ գրչուհու), № 835 (Մարտիրոս գրչի) և № 9311 (անանուն գրչի)։ Այս խմբի ընդօրինակությունների տեքստը մտնում է նախորդին։

Չորրորդ խմբի ձեռագրերը երկուսն են՝ № 715-ը (Մարտիրոս քահանայի) և № 2576-ը (Գրիգոր գրչի)։ Երկուսն էլ թերի են, արտագրված են պակասավոր ձեռագրից։ Առաջին ձեռագրի գրիչն այդ մասին ունի հետևյալ հիշատակագրությունը. «օրինակս այսչափ էր»։

Եվ, վերջապես, հինգերորդ խմբին պատկանում են № 487 (Վարդան գրչի) և № 652 (Գրիգոր կրոնավորի) օրինակները։ Այս խմբի ձեռագրերում Դավթի կանոնները խիստ համառոտված են և կրճատված. սովորական 100-ի մոտ կանոններն այս խմբում դարձվել է առաջնում 184, իսկ երկրորդում՝ 169։

§ 5. Կազմել Դավթի կանոնների նշված հինգ տարբեր խմբերի ընդօրինակություններից մի համեմատական տեքստ, մենք դտնում ենք անհնար և անխուսափելի, որովհետև առանձին խմբի ձեռագրերում կատարված խմբագրական փոփոխությունները այնքան մեծ են, որ իրար հետ համադրելն անկարելի է։ Նշված հինգ խմբերից հնագույնը և նախագաղափարին մոտ եղածը, մեր կարծիքով, առաջին երկուսն են, սակայն դրանք ևս այնքան են տարբերվում, որ հնարավոր չեղավ նրանցից համեմատական տեքստ կազմել։ Ուստի և մենք նպատակահարմար համարեցինք առ այժմ հրատարակել մեզ հայտնի ձեռագիր ընդօրինակություններից ամենից հնագույնը՝ № 5607 ձեռագրի ընդօրինակությունը (12—13-րդ դ.), տեղ-տեղ համեմատելով նույն խմբի № 839 ձեռագրի տեքստի հետ։ Բայց Դավթի կանոնները ամբողջացնելու նպատակով, № 5607 ընդօրինակության գլուխները մենք լրացրել ենք երկրորդ խմբի № 3562 ձեռագրի ընդօրինակությունից։

ԴԱՒԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԱՒԿԱՑ ՈՐԴԻ, ՈՐ ԳՐԵԱՑ ԶԿԱՆՈՆԱԿԱՆ ԱՒՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆՍ ԳԵՂԵՑԿԱՅԱՐՄԱՐՍ ԵՒ ՊԻՏԱՆԱՑՈՒՍ Ի ԽՆԴՐՈՑ ՔԱՀԱՆԱՅԻ ՄԻՈՋ, ՈՐՈՒՄ ԱՆՈՒՆ ԷՐ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ՝ Ի ՔԱՂԱՔԷՆ ԳԱՆՁԱԿԱՑ

359բ // ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԳՐՈՑ

*Ի սրբազան խորհրդածութենէ, ի հոգւոյն նախատեսութենէն տեսեալ երկիւղական զարմութիւն եւ ըստ յառաջադրութեան իմաստից, ի հոգի քո կայելոյ երկիւղ Աստուծոյ, ի սէր պատուիրանին յապագայս, զոր հանապազ ընդունելով զպատուիրանին սէր, զանսխալ մնացելոյ առողջաբար յարգաւանդ եւ յարդիւնարար միտս, անխառնապէս, միատեսակ, ահիւ կացեալ, ուստի եւ անծնունդ ոչ մնացեալ, երկնեալ երկ հոգէինք, ծնեալ ապա զսիրականն դրանն ի սատարութիւն բանասիրաց, ի գործնական քաղաքավարութիւն տնաւրինեալ՝ նախ զանձինս մատակարարել բարոյական։ Եւ երկրորդացն տնտեսել, եւ որպէս վոչեցան խորհրդականք ի խորհուրդ ածելով զանխորհուրդ միտս։ Ըստ որում, եւ դուք համբակ ի նոցունց, յայնցանէ ի խորհուրդ ածեալ, որով յառաջատես ածեալ եւ լրման ժամու եկեալ, յարաժամ ցուցեր ի քէն ծնունդ սրբական, առեր զարբազանն կարգ զքաւչականն եւ զնորին պահպանականն, զամենակարող, զմշտնջենաբուղխ եւ զանհատականն, զարքենական աղբիւր զքառավտակ երկնայնոյ զյորովայնաբուղխ գետն ի նորին հաւած եւ մթափրատ փայլակնակաւոր իմն լուսածին հրոյ // ի կառուցումն մտաց քոց հարեալ,

360ա

ուստի աշխատասիրեցեալ հարցանելոյ զյոգունս մասունս բանի՝ այլոց անտես եղեալ։ Եւ ի քէն մանրաքնին տեսեալ եւ իմացեալ, եւ լինէն հարցեալ, եւ իմ ընկեալ զարմութիւն մտի ի մասունս հարցական բանիս քո եւ դիւրալուր արարի, զի ծանիցես եւ խելամուտ լինիցիս եւ հովուեսցես ուղղապէս առաջնորդելով նորոյ ժողովրդեան Տեառն Իսրայէլի։ Եւ մի՛ զլսելիս տացես ի լուր բանիս, այլ եւ զառնելն յաւժարեսցիս նախ յանձին քում ցուցեալ բանիւ եւ գործով կատարել եւ այսուհետեւ բանիւ ուսուցանել եւ գործով զարմինակն տալ, զի բարիոք լինիցի ի հաճութիւն կամացն Աստուծոյ ամենայն քաղաքավարութիւն կենաց քոց՝ ոչ ի Քրիստոս Յիսուս։

Ա. ԹԷ ԱՐԱՐԱԾՔ ԱՄԵՆԱՑՆ ԲԱՐԻ ԵՆ

Եւ արդ, նախ հարցումն քո այս է՝ եթէ զի՞նչ է, որ յարարածս Աստուծոյ ոմանք սուրբ կոչեցան եւ ոմանք անսուրբ։

Քանզի Աստուած բարի է եւ ամենայն տուրք բարիք, եւ պարգեւք կատարեալք ի բարերար Հայրէն իջեալ առ իւր արարածս։ Եւ զի ակզբնատիպ բարոյ է Աստուած, ի բարոյ բարի ստեղծան արարածք, որպէս ի լուսոյ՝ լոյս։

32 *Եւ հետեւ Աստուած զլոյսն զի բարի է։ Եւ ահա բարի են յոյժ ամենայնն, եւ չի՛ք ինչ ի նոսա խոտան ըստ բնութեան։ Եւ այս ընտրութիւն յետ յանցանացն Ադամայ եմուտ յաշխարհս. ոմանք խոտեցան եւ ոմանք ընտրեցան։ Որպէս եգ Ադամ անուանս յար ըստ բնութեան ամենայն կենդանեաց, եւ այն անփոփոխելի // անուն գտաւ նոցա, նոյնպէս եւ յետ յանցանացն թոյլ տուեալ նմա ըստ*

179ա

40 *վայելման։ Նա ինքն ուրէնընտրողութեամբ առ ի պէտս իւր բժշկելոյ զկարիս*

---

1. Այս գլուխը վերցված է Մ 3562 ձեռագրից. մյուս խմբերի ձեռագրերը չեն պահել։
32. Ա կատարեալ
36. Ա ըստ բնութեան չի՞

մարմնոյ, որպէս վասն դեղոց հնարեցաւ բնութիւնս՝ ընտրել զաղտակարան,
նոյնպէս ընտրեաց զուտելի եւ զանուտելի կերակուրն՝ նշանակ առեալ նմա
իմաստութեան հոգւոյն, զի ետես զազանս շաղաղակերս թէ անուտելի են, եւ
սոդունս թէ խոտելի են եւ զոր ինքեանք խոտեցին, մարդիկ ոչ ուտեն։ Աս-
տուած արինադրեաց նոցա եւ զոր հաճեցան եւ հաւանեցան ուտել, հաստա-
տեաց թէ կերայք իրրեւ զբանջար խոտոյ, զոր ոչ ընկալաւ բնութիւնս, ոչ
բռնադատեաց Արարիչն բնութեանս, որպէս եւ յաղագս իւր՝ զոր ինչ տպատրե-
ցին մարդիկ զԱստուած, եւ ոչ եւս էր մի յայնցանէ։ Լոյս կոչեցին աւդ եւ հուր,
աղբիւր, գետ։ Նա եւ ի գազանաց իսկ ա//նուն տպատրեցին նմա եւ յանձն
180ա
առ՝ թէ եմ եւ այնու անուանէր զինքն անմախանձաբար եւ երեւեցուցանէ կո-
30 չեցեալքն վասն ընտրութեան, ո՞րչափ եւս առաւել վասն ինքեանց ընտ-
րութեանց յանձն առնոյր հաճութեամբ եւ հաստատէր արինաւք։ Այլ հեթա-
նոսք ո՛չ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութիւն բնական, ճանաչել զԱրա-
րիչն եւ զարարածս, այլ դարձան պաշտեցին զարարածս եւ ոչ զԱրարիչն, որ է
35 արհնեալ յաւիտեանս։

Եւ զոր ինչ նոքա պաշտեցին յանբանիցն, զայն հրամայեաց ուտել, եւ
զոր ուտէինն, զայն խոտան եւ պիղծ համարեցաւ։ Զկնդակաւորս եւ զորոճողս
պաշտեցին եգիպտացիք, խորհրդաբար արինաւք մեզ հրամայեցաւ ուտել եւ
յիւր իսկ սեղանն մատուցանել պատարագս ի պատիւ փառաց նորա։ Եւ զոր
60 նոքայն կերան եգիպտացիքն, անուտելի եղեւ նոցայ մեզ ըստ արինացն, զի
180բ
անխորհուրդք էին։ // Իսկ սոդոմք, որ ոչ այսպէս ունին, անուտելիք են եւ նո-
քա, որպէս եւ զանազանեցան ի թռչնոց ագռաւանաց եւ ի շրայնոց՝ մարդկան
ընտրութեամբ։ Արդ՝ զոր Աստուած զուգեաց եւ հաստատեաց ըստ բնութենէ
բանի, մարդ ո՛չ կարէ մեկնել։ Եւ զոր մարդ ընտրեաց եւ որոշեաց ի խիղճ
65 մտաց իւրոց, հաճեցաւ Տէր՝ մինչեւ արինադրեաց. ո՛չ նախանձեցաւ զնա
զնախանձ արարչութեան իւրոյ ի զանազանել մարդոյն, այլ ինքն ի սուրբ եւ
անսուրբ, քանզի ահա ամենայն բարի են յոյժ եւ չի՛ք ինչ նոսա զանազանու-
թիւն խոտման։ Արդ՝ պիղծ համարեալն ի մէնջ եւ յԱստուծոյ արինադրեալն,
եթէ մերձենամք, պղծիմք եւ պիղծն ի սուրբն մերձեցեալ պղծէ։ Արդ, վասն զի
70 ընտրութիւնն ի մէնջ է եւ արինադրութիւն յԱստուծոյ, վասն այնորիկ ոմանք
181ա
սուրբ ասին եւ ոմանք // անսուրբ։

Բ. ՎԱՍՆ ՄԿԱՆ ՅԱՂ ԱՆԿԱՆԵԼՈՅ

Արդ, փոքրագոյն եւ անարգի, գողի եւ կծծի մկան եւ յորմափոր կենդա-
նոյն սկսար զհարցումն քո, այն որ հավառակ ընդ դէմն զինի մեզ ոչ կառաւք
75 եւ պալարակալ երիւարաւք, որպէս փարաւոնն ընդ դէմ Իսրայէլի, ոչ զինուք
եւ սպառազինաւք, այլ առաւել մահուամբ սպառնայ, քան կենդանութեամբ եւ
գոլոյնքն առաւել սպառնալիքն հաստատմանայ նորա, ինամով շրջի որպէս
թէ հայցէ ի մահ իւր զվնասն մեր, վասն այնորիկ երկնչիմք առաւել ի մահուա-
նէ նորա, սպրդող եւ անչայտ է մուտ նորա, որ սա ինքն է մուկն։ Բայց զընդ
80 դէմն նորա զմի ի բազմաց անտի ի զապակաճեալն ի նմանէ զազ ասացեր, եւ
բարիոք էր հարցումդ, քանզի ամենայն անհամութիւն գոյից նովաւ համեմի։

Արդ՝ անկեալ ի նեղքս ի յազ մուկնն, գիտեա՛ եղբայր, քանզի է՛ որ պրդ-
ծի, եւ է՛ որ ոչ, զի ի գոնեաց վերայ եթէ սատակեսցի, զայն, որոյ վերայ էրն,
181բ
նովին ի քաց հանցեն // եւ որ շուրջ էր զնովաւ՝ լուսացեն եւ այնուհետեւ սուրբ
85 եղիցի առ ի պէտս վարեալ։ Իսկ եթէ ի լեսածն անկցի ցամաք, եթէ պակաս իցէ չոր

60. A քան մեզ

լդեր չորից կամ հնգից, ամանաւն ի բաց հանցեն։ Իսկ եթէ տասին չափ ի վեր
կոյս է, զնոյն որ գրեցաւդ չափ, ի բաց հանցեն յայնմանէ եւ զայլն սրբեսցեն
եւ ամանն ցամաք անաւթ եղիցի։ Ապա եթէ թացեալ է, ի բաց հանցեն եւ այս ի
դիտնակաց քննեսցի եւ ճշգրտեսցեն։ Իսկ եթէ յաղէն մինչդեռ մուկն ի ներքս
90 իցէ եւ կամ ոչ, յանգէտս ոք ընկենուցու ի սպաս եւ ապա գիտասցեն, զսպասն
հանդերձ պուտկաւն ի բաց հեղցեն։ Ապա թէ կերեալ իցեն, քահանայն հան-
դերձ ընտանաւքն Ը (8) աւր արտաքոյ կացցէ ի սուրբ խորհրդոյն կարգածո-
թեամբ։ Իսկ այլ ժողովրդականք հինգ աւր, յատուր Ճ (100) ծնդրիւ ապաշ-
խարեսցեն։ Իսկ եթէ ոք գիտաց եւ անփոյտ արար աներկեղութեամբ, Խ (40)
95 աւր պահեսցէ Ճ (100) ծնդրաւ։ Իսկ եթէ յաղախնաց ոք երկուցեալ ի տիկնոջ
182ա // իրմէ արար դայլ, Ի (20) աւր պահեսցէ եւ ամանքն, որ պղծեցան, խոր-
տակեսցին։ Իսկ ի չոր մսի վերայ անկեալ, նովին փեարովն ի բաց ընկեսցեն
զերկուսն կամ զերիսն եւ զայլսն լուասցեն։ Արդ, որպէս վասն աղոյն գրեցաւ,
եղիցի քեզ գիտել եւ վասն չոր մսոյ։ Ի սերեկեալ իւղոյ կամ ծեփելոյ, եւ ի
100 կարաս գինոյ ծեփեալ եւ անգինի, նոյնպէս յորոյ վերայ գտանիցի սատակեալ,
անխոտելի են ամանքն, եւ որ ինչ յամանին է։ Ապա եթէ ունայն իցէ ամանն
բեկած, ցամաք անաւթ արասցեն։ Իսկ եթէ թաց անկանիցի, կտորեսցի։ Այլ
թէ՝ յալիւր կամ ի ցորեան, նոյնպէս արասցես որպէս լեսած աղին գրեցաւն։
Իսկ եթէ ի թոնիրն գտանիցի, մի քակեսցի թոնիրն յաղագս այնր, զի անհնա-
105 րին է պատրաստութիւն։ Ապա եթէ յայրման ժամանակի անկանիցի, յաւրին
182բ մի՛ եփեսցեն անդ հաց։ Եւ եթէ հաց ի թոնրանն է, // շունք կերիցեն՝ թէ
յայնժամն անկցի։ Եւ եթէ յայլ կենդանեաց անկցի եւ սատակեսցի, թէ ի սրոյ
կամ յանսրբոց, թոնիրն քակեսցի ի հիմանց։ Այլ թէ ի թոնդրուք կամ աս-
ակուք մերձ գտանի, անվնաս են նոքա եւ այլ ամենայնք։

110

Գ. ՎԱՍՆ ՏԱՇՏԻ ԿԱՄ ՏԱՓՈՒՐԿԻ ԿԱՄ ՄՈՐԹԱՂԻ

Իսկ եթէ ի տաշտ կամ ի տափուրկի եւ յայլ ամանք գինի եւ իցեն ի գոր-
ծիցին եւ գտանիցի ի վերայ նոցա, փայտեղէնն քերեսցին եւ հողեղէնքն
լուասցին։ Իսկ ի ներքս անկեալ փայտն այրեսցին եւ խեցին խորտակեսցի,
իսկ երկաթեղէնք, պղ(ի)նձն, արծաթն, ոսկեղէնք մի՛ խորտակեսցին, այլ շնո-
115 ցին միայն հրով եւ սուրբ են։ Այլ թէ ի վերայ մորթաղի կամ քրձի, յորս իցէ
կերակուր ինչ, կամ ձկան, հացի կամ մրգի եւ այլ կերակուր դինչ եւ իցէ, մի՛
խորտեսցին, բայց քրձն լուասցի։ Իսկ եթէ ի ներքս գտանիցի, տեսցեն թէ չոր
183ա է, եթէ խոնաւ, եւ իբրեւ զայս առնէ, զոր // ասեմ։ Այլ թէ ի մորթաղին գտա-
նիցի, որ չոր եւ ցամաք իցէ, յայնր կողմանէ երիցս լդեր չափ ի բաց ընկեսս-
120 ցեն եւ մասն ինչ աղքատաց տացեն եւ զայլսն հասարակաց կերիցեն, բայց
եկեղեցականիցն։ Իսկ եթէ դալար եւ խոնաւ իցէ մորթաղն, խորտակեսցի եւ
չունք կերիցեն։ Իսկ եթէ ի վերայ ընդտղոյ գտանիցի, մի խորտակեսցեն, բայց
եթէ ի պատենիցն մերկացեալ խեղեփն յամանի, այնպէս արասցեն, որպէս
աղին եւ ցորենոյն եւ ալերն։ Այլ թէ ի վերայ ծեծածոյ կամ գելասի գտանիցի,
125 ամանքն խորտակեսցին եւ այլքն որ պղծեցան ի նմա։ Եթէ յաղաղոյ գտանի,
ամանքն խորտակեսցին եւ մորթքն լուասցին, ի պէտս լիցի հասարակաց, բայց
եկեղեցականաց։ Ապա թէ դեռեւս անաղաղ իցէ, նովին աղաղիցի։ Իսկ եթէ ի
183բ ցամաք մորթու գտանիցի, ի բաց ընկեսցեն զմորթն։ Եւ եթէ ի վերայ // հան-
դերձի գտանիցի, լուասցեն միայն՝ թէ սարեղէն իցէ, թէ կտաւեղէն։

90. Ա զսպասն չի։
106. Ա թորուքն
128. Ա վերայ կրկնվում է

Դ. ՎԱՍՆ ՊԻՂԾԵԱԼ ԿԵՐԱԿՐՈՑ

Այլ թէ ի պղծեալ կերակրոց կամ յըմպելեաց ոք յանգէտս կերիցէ կամ ըմպիցէ, քահանայ ուր աւր արտաքոյ կայցէ ի սրբութենէ խորհրդոյ եւ ապա հաղորդեսցի։ Աշխարհականք Ե (5) աւր պահեսցեն Ճ (100) ծնդրածութեամբ։ Իսկ եթէ գիտութեամբ փցէ, քահանայն լուծցի ի կարգէն, բայց վասն մարդասիրութեան Աստուծոյ, երկու ամ ապաշխարէ, զմի սրբապահութեամբ, եւ զմի՝ շարաթապահութեամբ։ Եւ աշխարհականն ամ մի շարաթապահութեամբ։ Նոյնպէս եւ ի շանէ զյաղեալ կերակուր եւ ըմբելի արասցեն, զոր վերագրեն ասացաք ի սատակեալ մկանէ պղծելն։

Ե. ՎԱՍՆ ԿԱՏՈՒԱԿԵՐՈՒ

Թէ կատու յաղեալ ի մորթաղէ, կէս լիդր ի բաց կտրեալ ձգեսցեն եւ մասն
184ա ինչ աղքատաց տայցեն եւ այլն սուրբ եղիցի։ // Իսկ ի մկանէ՝ խոր քերեսցի միայն։ Այլ թէ կատու զմուկն բերեալ կերիցէ ի վերայ կարասոյ կամ յայլ անաթի ի փայտեղէնի եւ հողեղէնի, որպէս գրեցաւ վասն սատակեալ մկան, ի վերայ կամ ի ներքս արասցեն։ Այլ թ(է) շուն կամ կատու ծնցին յամանի,
145 անարգ է ամենեւին։ Եթէ ի վերայ շոր բանջարի սատակի մուկն, թէ յոլով է, զվերայն ի բաց հանեալ եւ այլն սուրբ է։ Իսկ թէ ի միջոցին է, զողջն ի բաց ընկեսցեն։ Իսկ թէ կաղամբ հոր գտցի, շուրջ զնոսաւն ի բաց հանցի եւ այլն անխոտան է։ Իսկ եթէ կատու կամ շուն ի ներքս անդ ծնցի, թէ յոլով է բան-
յարն, զառաւելագոյն ի բաց հանցեն, թէ պակաս՝ զամենն։ Իսկ եթէ սատա-
150 կեալ գտանի ներքս անդ, մի՝ կերիցի։ Բայց շուն եւ կատու ո՛չ է միապէս։ այլ ընտրութիւն լիցի որպէս կամին։ Այլ մկան մտելոյ յաման կալեալ ոք ար-
184բ տաքոյ // սպանցէ, կատու ի ներքս կալեալ կենդանի ի բաց հանեալ կերիցէ։ անխոտելի է ամանն։ Եթէ միզիցէ շուն կամ կատու զամանաւ արտաքոյ կամ եղծիցէ զամանաւ, անխոտելի են։ Իսկ եթէ ի ներքս լինիցի ապականութիւնքս։
155 փոքր աման խորտակեսցի, թէ կարաս է բեկ(եալ), ցամաք անաւթ լիցի։

Զ. ՎԱՍՆ ՄԿԱՆ Ի ՀՆԱՆ ԱՆԳԵԼՈՑ

Եթէ ի հնձան մուկն անգանիցի եւ յամենայն քաց աման անկեալն խորտակեսցին, այլ վերստին շինեսցին։ Ապա թէ ի ցամաքութեան գտցի, ցամաք սատակեալ շուրջ զտեղեաւն քացագոյն հանցեն զերեսս կրակապոյն եւ վերըս-
160 տինն նորոգեսցին։ Եւ եթէ ի փայտէ ի թացէ նաւ անկանի, խոտեսցի ամենեւին։ Թէ ի ցամաք, յայլ պէտս ածցի եւ մի՝ գինոյ վասն սուրբ խորհրդին։ Իսկ եթէ
185ա ի քարէ նաւ անկանիցի ցամաք, // առանց գինոյ յորոյ վերայ իցէ զքարն, զայն ի քաց հանցեն կամ շրջեսցեն եւ զայլ քարինսն քերելով տաշեսցեն եւ այնուհետեւ անխիղճ են։ Իսկ թէ գինի ունելով նաւն ի ներքս անկանի, գինին հեղ-
165 ցի եւ նաւքն քակտի եւ զքարինսն յայլ պէտս առցեն։ Ապա թէ անհնար իցէ։ եւ քարինքն թանձր են, զամենայնն տաշեսցեն խոր եւ շրջեսցեն եւ վերստին նորոգեսցեն։ Ապա թէ յառաջապատրաստակ ծովն հողով լցեալ լինի, անվնաս է։ Աստուծոյ կամաւք, իսկ եթէ մինչեւ ի վեր կոյս ցկէսն ունայն իցէ, տաշեսցի, եւ որ լի է, միայն լուասցի։ Իսկ ի վերայ կոյտոյ ողկուզացն գտեալ,
170 նոյն արասցեն, որպէս վասն թաքոյ գոլոյն, վերայ գրեցաւ։ Ապա եթէ ի տկուտ գտանի մուկն եւ յանգէտս ոք մատուցանէ առ հնձան ամանաւ ոք առե(ա)լ
185բ արկանիցէ ի տիկն եւ ի բերան տկոյն հասեալ ամանն ի բաց հանցեն, // զա-

մանն եւ զմնացեալ գինին, որ ի նա, մի՛ առցեն որպէս անսուրբ խորհրդոյ եւ
խորհրդականացն, այլ արտաքոյ վարեսցեն ի պէտս որպէս եւ կամին եւ նաւն
175 սուրբ մնասցէ, իսկ պղծեալ ամանքն ի տկոյն յայնմանէ ամենեւին խորտա-
կեսցին։ Բայց քուրդամորթ տկովն թեթեւագոյն է, քան զայնոսիկ։ Եւ գինին եւ
հնձանն, այնպէս եղիցին, որ վերագոյնն գրեցաւ։ Եւ ամանքն, յորս անկաւ
գինին, նզովին հանդերձ արտաքոյ ի պէտս վարեսցին, բայց ի սուրբ խոր-
հրդոյն եւ ի խորհրդականաց նոցա, իսկ հերձուցեալ մորթով ամենայն ուրեք
180 առաւելեալ եղիցի, քան մկնաճգին։ Իսկ այլ փոքրագոյն ամանք քուրդաքէն
մորթով պղծեալ, ի բաց խոտորեսցին առաւել, քան մկնանգին։

Է. ՎԱՍՆ ՄԿԱՆ ՈՐ Ի ԹՈՆԻՐՆ [ԱՆԿՑԻ]

Այլ դարձեալ զմկանէ, զի նորայն չար շատ է, քան զամենայն։ Թէ ի թո-
186ա նիր անկանի կամ յայլ անապ, կամ // ի պոյտ եւ ի վերայ նոցա, այլ ինչ ի-
185 նիցի աման, այնոքիկ անվնասք են։ Եւ եթէ ի ներքս յայնր թոնրան կամ յայնր
ամանի, որ մուկն իցէ տատակեալ եւ այլ փոքրագոյն ամանք իցեն ի ներքս,
անվնաս են նոքա, թէ պանրով լինիցի, եւ իւղով եփած եւ թէ մորթաղ, անխո-
տելի են այնոքիկ։ Այլ թէ քարեղէն կամ այլ աման ի բերան կոյս լինիցի
ի վերայ անապոց, որ պղծեալն է, ի բաց հանցին եւ նոքա, իսկ եթէ ի թի-
190 կանց կոյս՝ անվնաս է։ Այլ թէ մրուկիզ, կամ աւհսանդր, կամ ականջմուտ եւ
այլ, որ ոչ արիւնատր զեռունք են, որ են բզիզք եւ անկանիցի ի նոցանէ ի
կարաս գինոյ կամ ի կաթն կամ ի թան որ յամանի, անխոտելի են այնոքիկք
ամանաքն հանդերձ, ապա թէ սիրտն ոչ առնու, մի կերիցէ, զի ագահութիւն է։

Ը. ՎԱՍՆ ԳԱՅԼԱՌԻ, ՇՆԱՌԻ, ՆԵՏՈՎ ՀԱՐԵԼՈՅ. Ի ՓՈՍ ԱՆԿԵԼՈՅ ԵՒ ԱՅԼՆ

193

// Այլ վասն գայլատի եւ շնառի, եթէ կենդանի ըմբռնե(ա)լ զենցեն, ի պէտս
186բ ածցեն, անխոտան (է), բայց եկեղեցականաց եւ ի քահանայիցն։ Եւ ի հաղորդա-
կանաց նոյնպէս։ Եւնետարարեալ զորսն եւ եթէ ի գուբ ըմբռնեալ առանց շնչի
գտեալ, մի կերիցեն եւ մի ամենեւին հոպ լինիցին։ Այլ ի քահանայից եւ ի
200 կանանց մի՛ իշխեսցեն որս առնել։ Ապա թէ գոցի որսացեալ, մի՛ իշխեսցեն
զենուլ, ապա թէ յանդգնեալ զենցեն, շունչ կերիցեն։ Իսկ ձուկն որսացեալ
ի քահանայէ կերիցեն, որպէս վասն վայրի կենդանեաց գրեցաւ եւ ընդանի
կենդանեացն է։

Թ. ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ԱՆԱՍՆՈՅ, ՈՐ Ի ԾՆՈՒՆԴՆ ՄԵՌԱՆԻ

203 Այլ ի սուրբ եւ յուտելի կենդանեաց թէ ի ծնունդս մեռանի, մի՛ խոտեսցեն, ուստի եւ չէ՛ պարտ քահանայից ճաշակել, բայց եթէ ագահեալ կերիցէ.
Ը (8) աւր կարգա(լուծու)թեամբ մի պատարագեսցէ։ Նոյնպէս թէ ձեռն ոք
187ա ածեալ զերծուցանել զծննգա(կանն) // եւ դարձեալ մեռցի, մի՛ խոտեսցի, այլ
հասարակ կերիցեն, բայց յեկեղեցականաց։ Եթէ մորթեալ գտանիցեն ի նմա
214 ծնունդ շնչով, մի կերիցեն, զի որկորամոլութիւն է։ Ապա եթէ ի չափ հասեալ,
յորմէ եւ ի ծնունդս մեռանի, որ ծնաւն զնա, կենդանոյն առեալ արտաքոյ զենցեն, թէ ի պէտս բերցեն, լինի եւ ոչ խոտի։

---

185. A թորուսն
188. A քարեղայն

Ժ. ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳՈՅ ՁԿԵՐԱԿՈՒՐ ՄԵՐ ԸՄԲՌՆԷ

Այլազգոյ ի ձեռն առեալ հաց մի՝ ուտիցեն եւ զքերլմպեալ գինին կամ
213 զշուր մի՝ ըմբիցեն։ Զարկեալն ի նեղս զքերումպն նորա, նոյնպէս եւ ձեռին
նորա մերձեցելոյ ի ներքս, քահանայք մի՝ արբցեն եւ մի՝ սրբութիւն անդ մա-
տուցեն։ Եւ եթէ յալով իցէ, արտաքոյ ի պէտս ներցեն, իսկ եթէ սակաւ՝ ի բաց
հեղցի։ Նոյնպէս թէ կաթն կամ թէ թան՝ ի բաց եւս հեղցի։ Ապա թէ ի միս
կամ ի պանիր կամ յիւղ ըմբռնեալ իցեն, զըմբռնեալն կտրեսցեն եւ ի բաց
220 հանցեն եւ զայլն լուացեսցեն եւ կերիցեն։ Իսկ զտուեալն ի նոցանէ մի՝ կերիցեն՝
187բ զհաց, զպանիր, զմիս, զխաւարա, // զխաղող, զգինի, բայց յայնցանէ, որ
կտեւովն են՝ ընդուլզ, նոտնն, խարզեակ եւ այլք այսպիսիք, եւ այնոքիկ, որ
ի պէտս մարմնոյ յժշկութեան վարեն, բայց ի թիրամիտաց, եւս պիղծ դեղոց։

ԺԱ. ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳԵԱՑ, ՈՐ ՁԱՅԳԻ ՔԱՂԻՑԵՆ

225 Այլազգի թէ քաղիցէ ձեռաւք, մանաւանդ թէ կոխիցեն զհնձան եւ բերա-
նաւ կտրեալ՝ զողկոյզն եւ զմնացորդս ի ներքս ձգիցեն։ Արդ՝ զկոխեալն ա-
մենեւին մի՝ ածիցեն ի պէտս ումեք ի քրիստոնէից, բայց թէ ձանուցեալ նոցա
վաճառեսցեն ի նոսա, իսկ զքաղեալն զձեռաւք եւ զմնացեալն ի կերմանէ՞ն-
կեցեալ ի ներքս, քահանայք ամենեւին մի՝ ըմպիցեն եւ մի՝ սրբութիւն անդր
230 մատուցեն, բայց արտաքոյ որպէս կամին՝ վարեսցեն։

ԺԲ. ՎԱՍՆ ԶԱՄԱՆ ՆՈՑԱ Ի ՊԷՏՍ (ՄԵՐ ԱՌԵԼ)

Այլ ի նոցանէ զամանն փորձեալ ի պէտս մեր առնոյ մեզ ամենեւին ոչ
է մարթ։ Եւ թէ ի նոցանէ կերակուր կամ միս յաման մեր մերձեցեալ, խոտելի
188ա է ամենեւին։ Իսկ եթէ կերեալ հաց յամանի միրում, զմի անգամ // լեալն հար-
235 կաւոր լուացեալ ի պէտս ածցի։ Ապա թէ սովորութեամբ բազում անգամ՝ ան-
հոգացեալ զնոյն արասցեն, ի բաց խորտակեսցի եւ մի՝ ածցեն ի պէտս։ Եւ
եթէ զձեռն իւր յալեր մերձ հասուսցեն, մի՝ խոտեսցի հասարակաց, բայց ի
սուրբ խորհրդին մի՝։ Եթէ ի ցորեան՝ անխոտելի է նա, թէեւ ի նոցանէ առնու-
ցումք ցորեան, բայց ալիւր ի նոցանէ խոտելի է։ բայց թէ հարկ լինիցի, զաս
240 ի սուրբ խորհրդոյն, այլ ի պէտս վարել։

(Շարունակելի)

---

213. Ա՝ ըմբռնեն

ՀԱՆԳԻՍ
Տ. ՀՈՎՍԵՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Կոստանդնուպոլսում մահկանացուն կնքեց Մայր Աթոռի միաբան Տ. Հովսեփ եպիսկոպոս Կարապետյանը։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Տ. Հովսեփ եպիսկոպոսի անակնկալ մահով կորցնում է իր արժանավոր սպասավորներից մեկին։

Հանգուցյալ սրբազանը սիրված ու ճանաչված անձնավորություն էր մեր հոգևորականության շարքերում, իր հեզահամբույր բնավորությամբ, եռանդուն գործունեությամբ, լուրջ ու համեստ աշխատանքով։

Տ. Հովսեփ եպիսկոպոսը մանուկ հասակից ձգտում է ունենալ հոգևորական դառնալու։ Նրա հոգու պայծառ իղձն է եղել ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին, և նա հոժարակամ նվիրվել է Եկեղեցու սպասավորության սուրբ գործին։ Հանգուցյալը մինչև իր կյանքի վերջին շունչը հավատարիմ է մնացել իր հոգևորականի կոչմանը, սիրով ու անտրտունջ կրելով Քրիստոսի քաղցր լուծը իր ուսերին, և անձանձրույթ ծառայել է ամեն տեղ։

Հանգուցյալը եղել է բանին կենաց ճշմարիտ քարոզիչ։ Նրա ազգաշունչ ու հոգեշունչ քարոզները դաստիարակչական մեծ դեր են կատարել իր հոտի հայրենասիրական ու Եկեղեցական զգացմունքները վառ ու պայծառ պահելու հարցում։

Հանգուցյալ սրբազանը երկար ժամանակ զբաղվել է նաև ուսուցչությամբ Կոստանդնուպոլսում։ Հայ Սփյուռքի զանազան թեմերում նա պաշտոնավարել է շուրջ 30 տարի, ծառայասեր ոգով և օգտակար արդյունքներով։ Նրա բովանդակ ծառայության կետ նպատակին է եղել օգտակար լինել իր ժողովրդին, իր Հայրենիքին։

Նրա առաջնորդական ու վարչական ծառայությունները և պաշտոնավարությունը հաճախ անցել են դժնդակ ու բարդ պայմաններում, բայց նա հաղթահարել է իր ճանապարհի վրա ընկած բոլոր դժվարություններին համբերությամբ, սիրով, կորովի, օգտակար, անշահախնդիր։

Հանգուցյալը վաղուց էր, որ տառապում էր անբուժելի հիվանդությամբ։ Տքնաջան աշխատանքն ու հովվական թափառիկ կյանքը շատ շուտ քայքայել էին նրա առողջությունը, և նա հիվանդության ճիրաններում փակեց իր աչքերը, երբ Եկեղեցին ու ազգը կարիքն ունեին դեռևս նրա օգտակար ծառայություններին։

Հանդի՜ստ նրա ցավատանջ ոսկորներին։

❊❊❊

Վեհափառի հրամանով Մայր Տաճարում և բոլոր թեմերում մատուցվեց հոգեհանդիստյան հատուկ պատարագ, ի հիշատակ նորոգ հանգուցյալ Տ. Հովսեփ եպիսկոպոսի։

ԱՐՄԵՆԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

(Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու)

ԼԵԶՎԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԳԱՆՁԱՐԱՆԸ

Հ. ԱՃԱՌՅԱՆ, «Վիպական բառարան հայոց լեզվի», հատոր I, 494 էջ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1952 թ.



Գրախոսվող գիրքը բազմավաստակ հայագետ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հրաչյա Աճառյանի «Վիպական բերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» ստվարածավալ աշխատության առաջին հատորն է։

Աշխատության բոլոր բաժիններն է բաղկացած են երեք մասից՝ ընդհանուր լեզվաբանական բաժին, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն և հայերենի պատմա-համեմատական քերականություն։

Գրքի ընդհանուր լեզվաբանական մասում մեծանուն գիտնականը քննության է առնում լեզվական տվյալ երևույթը համեմատվող լեզուներում, դրանով իսկ ցույց տալիս տվյալ երևույթի դրսևորումները աշխարհիս բազմաթիվ լեզուներում. դրան հաջորդում է այն գլուխը, որտեղ քննության է առնվում նույն երևույթը հնդեվրոպական լեզուներում, ապա անցնելով հայերենին՝ պատմա-համեմատական մեթոդով հայերենի տվյալ երևույթը ուսումնասիրում է հնդեվրոպական լեզուների համեմատությամբ, ցույց տալով այդ կետում եղած ընդհանրություններն ու տարբերությունները. ուրից հետո տալիս է հայերեն լեզվական տվյալ երևույթի բոլոր ձևերն ու դրսևորումները դրաբարում, միջին հայերենում, մեր շուրջ 40 բարբառներում և ժամանակակից գրական հայերենում։

Այս աշխատությունը ընդգրկում է խոսքի մասերից երկուսը՝ ածականն ու թվականը։ Իր աշխատությունը գրելու համար հեղինակը օգտագործել է լեզվական տվյալ երևույթին վերաբերող տպագիր և անտիպ բոլոր գրքերն ու վավերագրերը բազմաթիվ լեզուներով։

Խոսելով ածականի մասին, հեղինակը տալիս է այն ճիշտ սահմանումը, ըստ որի ածականը որպես խոսքի մաս արտահայտում է հատկանիշի արստրահված հասկացողություն, այսինքն վերանալով բառերի արտահայտած կոնկրետ հատկանիշների հասկացողություններից՝ ածականը տալիս է

հատկանիշի գաղափար ընդհանրապես։ Երբ բայն արտահայտում է փոփոխվող հատկանիշի ընդհանուր հասկացողություն,— նշում է հեղինակը,— (ինչպես՝ կարմրել, հոսել, գնալ և այլն), ապա ածականը արտահայտում է կայուն հատկանիշի գաղափար, նկատի չունենալով նրա փոփոխելիությունը (ինչպես՝ կարմիր, հոսուն, կանաչ և այլն)։

Ինչպես հայտնի է, ըստ կազմության ածականը մի քանի տեսակ է. այսպես՝ պարզ (սև, մեծ, լայն), բարդ (հորդառատ, մեծատուն), ածանցավոր (անմիտ, զորեղ, գեղեցիկ, շտեմ) և այլն։

Լեզվի նախնական վիճակում ածականը բնականաբար այսպիսի բարդ կազմություններ չէր կարող ունենալ, ընդգծում է հեղինակը։

Կան լեզուներ, ասում է նա, որոնք ածական չունեն (այդպես են, օրինակ, աֆրիկյան բանտու լեզուներից շատերը), բայց այդ չի նշանակում, թե այդ լեզուները գոյականի հատկությունը ցույց տվող զանազան ածանցական կամ քերականական միջոցներ չունեն։

Լեզվական հարուստ փաստական տվյալներով հեղինակը ցույց է տալիս, որ կան լեզուներ էլ, որոնք իրրև ածական են գործածում բայի կատարյալ ձևը, հատկություն ցույց տվող գոյականները՝ սեռական հոլովով կամ բայի անորոշ դերբայը առնելով իբրև գոյական։ Օրինակ՝ հին հայերենում ունենք ֆուն անմեղութեան ջանմեղ քունս, այսինքն հատկություն ցույց տվող գոյականը սեռական հոլովով։

Ածականների պակասը լրացնելու համար լեզուները իրենց զարգացման ընթացքում ստեղծում են զանազան ածանցներ ու վերջավորություններ, որոնց միջոցով կազմվում է ածականը՝ գոյականից կամ բայից։ Օրինակ՝ կորեական լեզուն չունենալով պարզ ածականներ (այդպիսիք փոխ է առնում չինարենից), իր սեփական ածականները կազմում է գոյականներից ու բայերից։

Հին հայերենում նույնպես գոյական և ածական միևնույնն են և երկուսը կարող են միշտ փոխանակել իրար, այսպես՝

1. Մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր (այս օրինակի մեջ մեծ գոյական է).

2. Ո՞վ իցէ ի մէնջ մեծ յարքայութեան երկնից (այստեղ մեծ ածական է)[1]։

Լեզվական բազմաթիվ իրողություններով մեծանուն գիտնականը ապացուցում է, որ թե՛ հին հայերենում ածականի և գոյականի՝ իբրև խոսքի մասերի՝ տարբերակում չկար, բայց այդ բոլորովին չի նշանակում թե ածականն ու գոյականը նույնն են։ Նա ցույց է տալիս, որ երբ ածականը գործ է ածվում գոյականաբար կամ գոյականը ածականաբար, դրանից հետևում է, թե գոյականն ու ածականը էապես տարբեր են իրարից։ Այսօր էլ ժամանակակից գրական հայերենում, ինչպես նաև մեր կենդանի բարբառներում, շատ սովորական և տարածված է փոխանակ գոյականի՝ ածականի գործածությունը։ Այսպես՝ սև, սպիտակ ածականներ են, բայց կարող են գործածվել նաև իբրև գոյական. օրինակ՝ նա սևը սպիտակից չոկել գիտի. այստեղ արդեն սև, սպիտակ գործածված են գոյականաբար և ստացել են հոլովական համապատասխան վերջավորություններ։

Փաստական հարուստ նյութի օգտագործումով պրոֆ. Հ. Աճառյանը ցույց է տալիս, որ միջին հայերենում արդեն ածականները ավելի շուտ են ազատվում գրաբարի հոլովական օրենքներից, որովհետև թե՛ միջին հայերենում, թե՛ բարբառներում, և թե՛ ժամանակակից գրական հայերենում ածականի համաձայնության օրենքը վերացված է, և ածականը քիչ առիթներ է ներկայացնում հոլովման[2]։

Խոսելով ածականի աստիճանների մասին, բազմաթիվ լեզուների բազմապիսի օրինակներով ցույց են տրված ածականի համեմատության աստիճանների կազմությունները ու նրանց դրսևորումները ցեղակից և ոչ ցեղակից լեզուների մեջ։

Հենց այս գլխում էլ բավականին հետաքրքրքրական տեղեկություններ տալով հայերենի ածականի համեմատական աստիճանի կազմության և դրսևորման ձևերի մասին, ի միջի այլոց նշում է, որ բաղդատականի մի ձև է նաև ավուն մասնիկով կազմության ձևը, որն ավելի շուտ ժողովրդական լեզվի երանգ ունի. ինչպես՝ կարճավուն, սպիտակավուն, դեղնավուն, կանաչավուն։

Այդ ավուն մասնիկով բաղդատականները եթե առանձին են գործածվում, նշանակում են որակի փոքր կամ նվազ աստիճանը, իսկ երբ համեմատության են դրվում մի ուրիշի հետ, ընդհակառակը, նշանակում են նրանցից մի քիչ ավելի. այսպես՝ կապտավուն նշանակում է. ամի քիչ կապույտ, իսկ՝ ուստ նրանից կապտավուն էր նշանակում է ուստ նրանից մի քիչ ավելի կապույտ էր կամ գրավական կապույտ էր։ — Ավուն մասնիկի ծագումը հայտնի չէ, ուստի մեծանուն գիտնականը լեզվաբանների ուշադրությունն է հրավիրում նաև այդ հարցի վրա, որ և քննելի առարկա է։

1. Օրինակները բաղել են գրախոսվող գրքի էջ 24-ից։

2. Նույնը, էջ 34։

Սվեդիայի բարբառի բաղդատական մասին պրոֆ. Հ. Աճառյանը գրում է. «Սվեդիայի բարբառն ունի բաղդատական կազմելու մի նոր ձև, այն է լա, որ ուրիշ բարբառում չեմ գտել։ Այսպես՝ գաւմբրլա «կարմրավուն, կարմիրկեկ», դիղընլա «դեղնավուն», ըսբրդգրլա «սպիտակավուն». ուրիշ օրինակներ առայժմ ինձ ծանոթ չեն։

«Այս լա մասնիկը, ըստ ձայնական օրենքների,— գրում է հեղինակը,— ծագած պիտի լինի լի ձևից։ Ուստի ենթադրում է հայերեն կարմրալի, դեղեալի, սպիտակալի (կարմրով լի, դեղնով լիքը) ձևը, իսկ եթե այդպես չէ, ապա պետք է կարծել, որ մտել է որևէ այլ լեզվից, գուցե և թյուրքերենից[3]։

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լի մասնիկով համեմատականի ձևը առայսօր անվթար ձևով պահած ունի Հադրութի բարբառը, որ այս կետում շատ ավելի հավատարիմ է մնացել հայերենին։ Այսպես՝ բարբառս ունի՝ չուբալի «ավելի լոր, շորավուն», կ'ինալի «ավելի թաց, թացավուն», նույն անալոգիայով ունենք՝ մսալի «ավելի մսով», մչալի «ավելի միջով», ըդալի «ավելի ադիս», ընորմալի «ավելի անհամ», ճիրալի և շատ հաճախ կրկնությամբ՝ ճիրճիրալի «ջրով լի», բոխալի (<խրախալի)= «ամեծաբերան», իշտանալի «ախորժելի», տիրիվալի «ավելի տերևոտ»։

Օրինակները կարելի է ավելացնել, բայց այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ լա>լի մասնիկը որևէ լեզվի հետ և առավել ևս թյուրքերենի հետ ոչ մի առնչություն չունի, հարազատ է հայերենին և ամիկասկած հայկական ծագում ունի։

Առանձին մասնիկներ են՝ լիկ>լեգ[1], որ կա Մարազայում. ինչպես պարալիկ «բավական բարակ», խաստալիկ «հաստլիկ», կարճլիկ «կարճլիկ»։ Հադրութի բարբառում կան կարճլիգ[1] «ավելի կարճ», թոշլիգ[1] «թուշլիկ, ավելի թշով», սբէվլէգ[1] «բավական սև», պիգլիգ[1] «բավական սրածայր», նբէղլէգ[1] «ավելի նեղ», փալբէգ[1] (փաբլիկ ձևը հնչյունների ետևառաջությամբ դարձել է փալբէգ[1]. «ասվում է լեզվի համար») համեմատականի ձևերը։

Հեղինակի կողմից կուտակած ծավածավալ փաստական նյութը հիմք և հնարավորություն է տալիս պարզելու մի շարք լեզվաբանական և բարբառագիտական հարցեր, որոնք մինչ այդ չէին պարզաբանված։ Այսպես՝ մինչ այժմ չմեկնված Ղարարաղի բարբառի լոխ «բոլորը» բառը (որի օգնությամբ կազմվում է գերադրականի վերլուծական ձևը) ծագում է, ըստ իս, հայերենի ողջ բառից, ուր ո երկհնչյունի վ-ն դարձել է լ, օ ձայնավորը մնացել է անփոփոխ, ղ-ն խլանալով դարձել է խ, իսկ ջ-ն՝ չ, սակայն այդ ջ>չ երևան է գալիս միայն ՔԽ հոլովներում. ինչպես՝ սեռ. լոխչու մեծը «բոլորի մեծը», բացառ. լոխչուց մեծը «բոլորից մեծը» և այլն։

Մեր այսօրինակ բացատրության համար կռվան կարող է ծառայել նաև Նոր-Ջուղայի բարբառի «մեր տունն վոխչից մէնձ ա» գերադրականի կազմության ձևի վոխչից բառը, ուր ողջ բառից ո>վո պահպանվել է ամբողջությամբ, ղ-ն խլացել է տալով խ, իսկ ջ-ն ավելի խլանալով վերածվել է չ-ի։

Այստեղ հիշատակության արժանի են նաև Ղարաբաղի և Հադրութի բարբառի գերադրականի նախամասնիկափոր և այլ ձևերը, որոնք մինչև այժմ հայտնի չեն մասնագիտական գրականությանը. ինչպես, օրինակ՝ ափբշկարա «շատ ակներև», բաւ-բազա «բոլորովին նոր», նրէղ ծապան «չափազանց նեղ», սեէվ տուլաշ «բոլորովին սև», սպիտակ բօյա «չափազանց սպիտակ», կանաչ մոռոց «բոլորովին կանաչ», տէգէն խոնդ «բոլորովին դեղին», սպիտակ գոլբանդ «բոլորովին սպիտակ», վրէսկու պատտո «չափազանց մաքուր», խակ պրոռօն «չափազանց խակ» և այլն։ Հետամասնիկներով՝ ծրնգբլրու «չափազանց քարակ» (ասվում է ջրի համար), շուռուռնդու «բոլորովին սառը» (ասվում է թեյի համար), գինգ՝ իլբա «չափազանց քիչ»։ Լեզվական այս իրողությունները ներկայացնում ենք մեծարգո գիտնականի ուշադրությանը։

Այնուհետև հեղինակը ուշագրավ փաստերով ցույց է տալիս, որ աշխարհաբարը գերադրականի համար հին հայերենի, միջին հայերենի և բարբառների ընդունած զանազան ձևերից ընտրել և գործածության է դրել ամենից ընդհանրացած և տարածված վերլուծական ձևը. ինչպես՝ ամենից գեղեցիկը իսկ սաստկության համար կարելի է ավելացնել նաև ավելի բառը. ինչպես՝ ամենից ավելի գեղեցիկը. կամ նաև գույն ձևով. օրինակ՝ ամենից մեծազույնը, ամենից ավելի մեծազույնը և այլն։ Բացարձակ գերադրականի համար ամենից տարածված են մակբայական ձևերը, որոնք մեծ մասամբ կազմվում են շատ բառի օգնությամբ, իսկ սաստկություն ցույց տալու համար գործածվում են խիստ շատ, շատ ավելի, չափազանց, ամբողջովին, սաստիկ. սրանց ճավազական աստիճանը կազմվում է «ոչ» մասնիկի միացմամբ։

3. Նույնը, էջ 75։

Նախամասնիկավոր ձևերից ժամանակակից գրական հայերենում տարածված է ամենա բառով բացարձակ դերադրական կազմության ձևը. ինչպես՝ ամենագեղեցիկ, ամենաբարձր և այլն. այժմ կարելի է ասել՝ և շատ տարածված է՝ ամենատոհոյավոր, ամենաանճարմար, ամենաիմաստուն, ամենալական, ամենաօգտակար և այլն, որոնք գրաբարի համար աններելի սխալներ են։

«Արդարև,— գրում է ակադեմիկոս Աճառյանը,— գրաբարի ոգու համաձայն ա-ից հետո մի ուրիշ ձայնավորի հանդիպումը կարելի չէ, ուստի ձայնավորով սկսվող բառերը բարդության ժամանակ չեն ստանում ա հոդակապը։ Մինչդեռ այս ձևերի մեջ ոչ միայն մյուս ձայնավորները, այլև ա ընդունում է հոդակապը, որով և կրկնվում է։ Այս բոլորը ցույց են տալիս,— շարունակում է հեղինակը,— որ աշխարհաբարի մեջ ամենա բոլորովին սովորական դարձած մի նախամասնիկ է» (էջ 126)։

***

Աշխատության երկրորդ մասը նվիրված է թվական անվանը։ Այստեղ էլ գիտնականին հատուկ մեծ հմտությամբ և համբերությամբ ուշի ուշով քննության են առնվում թվականի՝ որպես խոսքի մասի՝ առաջացման, զարգացման և բազմաթիվ լեզուներում նրա արտահայտության ու դրսևորման միջոցներն ու ձևերը։

Հեղինակը պաշտպանում է այն տեսակետը, ըստ որի մարդկությունը իր ամենից ավելի նախնական վիճակում հաշվական կարողության կողմից չէր կարող շատ փարձ մի դիրք ունեցած լինել, որ արդի ամենից ավելի զարգացած ժողովուրդներն ու ազգերը նախապես մեկից մինչև երեք թվականներն էին ճանաչում։ Այսպես՝ Ավստրալիայի Ցորքի գլխի բնակիչները մեկ, երկու թվականների համար ունեին առանձին անուններ, բայց դրանից հետո՝ երկու մեկ (=3), երկու երկու (=4), երկու երկու մեկ (=5) և այլն. կամ Կամիլարոյ ցեղի լեզվով առանձին անուններ կան 1, 2, 3 թվերի համար, իսկ մնացածը կազմվում է սրանց գումարումով. այսպես՝ մեկ, երկու, երեք. երկու երկու (=4), երկու երեք (=5), երեք երեք (=6) և այլն։ Այսպես նաև չորրորդական, հինգերորդական, վեցերորդական, տասներորդական, քսաներորդական դրությունների համար. որոնց հիմք կազմում են 4, 5, 6, 10, 20, ապա գալիս են խառը և առարկայական դրություններ և այլն։

Պրոֆ. Հ. Աճառյանը համոզիչ փաստերով ապացուցում է, որ լեզվի ամենից ավելի զորեղ, օտար ազդեցություններին ամենից ավելի դիմադրող տարրերից մեկն էլ թվականներն են, որ այդպիսիք լեզվից լեզու փոխ են առնում այն դեպքում, ա) երբ լեզուն գտնվում է նախնական դրության մեջ և հաշվական զարգացման տեսակետից շատ հետամնաց է. բ) երբ լեզուն թեև ունի իր սեփական հաշվական դրությունը, բայց մինչև մի որոշ սահման, և պակասում են իրեն խորշոր թվերը։

Այսօր բոլոր ազգերն էլ գործածում են միլիոնը, միլիոնը և միլիարդը, նշում է հեղինակը, իսկ մետրական դրություն ընդունած երկրներում ազատորեն գործածում են՝ միլիմետր, սանտիմետր, դեցիմետր, կիլոմետր, հեկտար և այլն։

Պրոֆ. Աճառյանը իրավացիորեն լեզվաբանության համար ամենադժվար խնդիրներից մեկն էլ համարում է թվերի ծագման, սրանց սկզբնական նշանակությունները գտնելու, երևան հանելու հարցը։ Սակայն, որչափ որ ծանոթ մեկնություններից երևում է,— ասում է հեղինակը,— սրանք ընդհանրապես առնված են մարմնի անդամների անուններից։ Այսպես՝ պրոմեթիոյան լեզուներում 5 (ima, rima, lima) նշանակում է «ձեռք», հայ բոշաներին հինդ կոչվում է ար մը, որ նշանակում է ձեռք մը, թյուրքերեն elli «հիսուն» գալիս է el «ձեռք» բառից՝ իբր ակնարկություն հինգ մատների (յուրաքանչյուրը մի տասնյակ առնելով) և այլն։

Վերջապես նույնի հետքերը գտնվում արդի հայերենի, մանավանդ բարբառների մեջ. ինչպես, օրինակ՝ մի ձեռ անկոլին, շոր և այլն. որ նախապես մի հնգյակ է նշանակել, իսկ այժմ այդ իմաստը վերացել է և մի ձեռ ասելով հասկացվում է նաև «անգամ», «քիչ» և այլն։ Օրինակ՝ երբ ասվում է «ծառը մի ձեռ թափել ենք», այստեղ ձեռ «անգամ» իմաստով է գործածված, իսկ երբ ասենք՝ «մեր խնձորենին մի ձեռ է վերցրել», այստեղ էլ ձեռ «քիչ» իմաստն ունի, իսկ «մի ձեռ տեղացավ» նշանակում է՝ մի ամբողջ կոմպլեկտ։

Հենց այստեղ էլ թվականների օրինակով ցույց է տրվում, որ հայերեն բոլոր բարբառներն էլ բնիկ հայերենի ճյուղավորումներն են և ստորադաս են համընդհանուր լեզվին։

Բարբառների մեջ թվականները ընդհանրապես միայն հնչյունական փոփոխություններ են ենթարկված. օրինակ՝ հին հայերենի մին համ միակ, միհին հայերենում մեկ, բարբառներում կրում է հետևյալ փոփոխությունները. մին, մէկ, մէգ, մեկ[1], մեյ, մեք, մեք[1], միգ, կամ՝ երկու, էկու, յերկու, էրգու,

1. Նույնը, էջ 232։

յէրկո, արկու, ըրգ'էօք, բարկու, իրգու, իյ-գու, էյգու, օրկու, օրկու և այլն։ Նմանօրինակ հնչյունական փոփոխություններ են կրում նաև մյուս թվականները։

Խոսելով դասական թվականների և նրանց ստորաբաժանումների մասին ընդհանրապես և հայերենի դասականների մասին մասնավորապես, հեղինակը ընդգծում է, որ հայերենի դասականի ոորդ ձևը բարբառներում կորել է՝ պահվելով միայն Նոր-Ջուղայի բարբառում. ինչպես՝ առաջի, յերկուորդ՝, յիրեքերորդ՝, և այլն։ Կան բարբառներ էլ, որոնք դասական թվականները կազմում են քանակականների վրա ավելացնելով ում մասնիկը. դրանք են՝ Նոր-Ջուղայի բարբառը, Լեհաստանի, Հունգարիայի, Սուչավայի և Ռումինիայի բարբառները, Ղրիմի, Նոր-Նախիջևանի բարբառը, ինչպես՝ առաջին (առջի), էրգուում, իրէքում, չորսում, հինգում, օխտում, տասնում, տասնըչորսում և այլն։

Հեղինակն այստեղ առաջին հայացքից նմանություն տեսնելով այդ ում մասնիկով դասականի կազմության և պարսկերենի um մասնիկով կազմված դասականի միջև (ինչպես caharum «չորրորդ», panjum «հինգերորդ» և այլն), գրում է. «Հենց առաջին ակնարկով անկարելի է չմտածել, թե դասականի այս-ում ձևը փոխ է առնված պարսկերենից» (էջ 289)։ Բայց նկատելով, որ հունգարահայերը, լեհահայերը, ռումինահայերը չէին կարող փոխ առնել նույն պարսկերենից այդ ում մասնիկը (քանի որ մեջ-ները ոչ մի կապ չկար), ուստի առաջարկում է մի բոլորովին նոր մեկնություն, որ ավելի քան հավանական է։ Այդ բացատրությունը հետևյալն է.

Գրաբարում, դասականները հոլովվելիս սառնում են ներգոյականում ում մասնիկը, որ ապա ում ճյուղի բարբառներում էլ ընդհանուր դարձավ։ Օրինակ՝ ասում ենք յեօրներորդում ամսեանն, ի վեցերորդում ամի և այլն։ Ներելի չէ՞ կարծել,— ասում է հեղինակը,— որ այս վերի դասականների միջից էլ ոորդ մասնիկը կրճատվեց և այսպիսով եօրներորդ, վեցերորդ և այլն դարձան եօրնում, վեցում, և այլն, որոնք համարվեցին դասական թվականի հատուկ ձև։

Եվ իրոք, այս բացատրությամբ ում դասական մասնիկը հեռանում է պարսկերենից և երկուսի նմանությունը դառնում է բոլորովին պատահական։ Այս մեկնությունը իր հաստատումն է գտնում մի կողմից Մեղրու բարբառի դասական թվականների շորում. հինգում ձևերում, որոնք նույն ում մասնիկով են կազմվում և մյուս կողմից Հադրութի և նրան հարակից բարբառներում, ուր այդպիսիները կազմվում են ադրբեջաներենից փոխառված իմջի>ինջի >հինջի մասնիկով. ինչպես՝ էրկուհինջի, իրէքհինջի և այլն, բայց դրան զուգահեռ կան նաև ում մասնիկով ձևերը. ինչպես, օրինակ՝ Իրէքումը, չորսումը, հինգ ումը և այլն, որ նշանակում է՝ երրորդ, չորրորդ, հինգերորդ։ Հայտնի է նաև, որ միջին հայերենն էլ ոորդ մասնիկով դասական չուներ և դասականը կազմվում էր ում ձևով։

Լեզվի պատմության ուսումնասիրության համար կարևոր խնդիր է նաև այն, որ հին հայերենի անձնական թվականները ինչպես միջին հայերենում, նույնպես և բարբառներում, բացի Ղարաբաղի, Հադրութի և Մեղրու բարբառներից, իսպառ ջնջված են և դրա համար էլ ժամանակակից գրական հայերենը չի ճանաչում անձնական թվական, իսկ անձնականի իմաստն արտահայտելու համար ասում է տեղուսն էլ, երեքն էլ չորսն էլ» և այլն, մինչդեռ Ղարաբաղի, Մեղրու և Հադրութի բարբառներն ունեն ոչ միայն հին հայերենի անձնական թվականները (ինչպես՝ ըրկօքան, իրէքան, չուրսէքան կամ չուքէքան, հինգ'էքան, տրսս'էքան և այլն), այլև դրանց հոլովման բազմաթիվ ճոխ ձևեր։

Այստեղ, սահմանափակ էջերի շրջանակներում, դժվար է մեկ առ մեկ թվարկել այս աշխատության արժանիքները, բայց մենք կարող ենք վստահությամբ ասել, որ այդ մեծարժեք աշխատանքն իրոք լեզվական փաստերի մի գանձարան է, որից կարող է օգտվել ոչ միայն լեզվաբանը, այլև գրականագետը, պատմաբանը և դատ ուրիշները։

Աշխատությունն ունի լեզուների ցանկ, ուր համառոտակի հիշվում է, թե այսինչ լեզուն ո՞ր լեզվաընտանիքի ո՞ր ճյուղին է պատկանում։

Հեղինակն իր այս կապիտալ աշխատությունը նվիրել է գիտության մեծ կորիֆեյ, սովետական լեզվաբանության հիմնադիր Ի. Վ. Ստալինին։

5. Նույնը, էջ 289—290։